

ՖԻՆԱՆՍԱԲԱՆԿԱՅԻՆ ԶՈՒԵՋ

Արթուր Անդրեասյան

ՎԱՐԿԱՅԻՆ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2003

Ֆինանսաբանկային քոլեջի հիմնադիրներ

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ կենտրոնական բանկ
Հայաստանի բանկերի միություն**

**Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 2, Ամիրյան 26**

**Հեռ. (3 741) 537788
Հեռ./ֆաքս (3 741) 537767
Web-site: <http://www.fbc-edu.am>
E-mail: staff@fbc-edu.am**

Ձեռնարկի տպագրությունն իրականացվել է «Բանկ և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների ուսուցանում և քրեյնինգ» ծրագրի շրջանակներում, «Շորբանկ» խորհրդատվական ծառայություններ կորպորացիայի դրամաշնորհի միջոցներով՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ:

The publication of the manual is done within the “Bank and Non Bank Financial Institutions Mentoring and Training” program supported by Shorebank Advisory Services Inc. grant funded by United States Agency for International Development (USAID)

Հրատարակչի գրանցման համարանիշ

© Ֆինանսաբանկային քոլեջ

Հարգարժան ընթերցող

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի մրցունակությունը բարձրացնելու, դրանք ժամանակակից գիտելիքներով զինված մասնագետներով համալրելու նպատակով ստեղծվեց Ֆինանսաբանկային քոլեջը:

Առաջնորդվելով ուսումնական գործընթացի կազմակերպման միջազգային փորձով՝ Ֆինանսաբանկային քոլեջը կիրառում է ուսուցման ժամանակակից մեթոդներ, այդ թվում՝ քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութեր, որոնք ստացել են Հայաստանի Հանրապետության ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների հավանությունը և արժանի են համարվել որպես դասագիրք տպագրվելու: Դասագրքերի առավելություններից մեկն այն է, որ դրանց հեղինակները հանրապետության բանկային ոլորտի լավագույն մասնագետներ են:

Ողջունում ենք Ֆինանսաբանկային քոլեջի ուսումնական նյութերի տպագրությունը և հուսով ենք, որ դրանք լայն օգտագործման նյութ կդառնան ոչ միայն քոլեջի ուսանողների, Հայաստանի Հանրապետությունում բանկային գործի մասնագետներ պատրաստող մյուս ուսումնական հաստատությունների, այլև ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների համար:

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկի խորհուրդ

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութերը համահունչ են ժամանակի պահանջներին և լիովին համապատասխանում են բանկային մասնագետների պատրաստման միջազգային չափանիշներին: Դրանք արդիական են և ներառում են իրավիճակային օրինակներ ֆինանսաբանկային ոլորտի առօրյայից, որոնց ուսումնասիրությունն էլ ավելի է նպաստում մատուցվող նյութի ընկալմանը:

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսությունների տպագրությունն առաջընթաց քայլ է հանրապետության կրթական ոլորտի բարեփոխումների գործընթացում:

Կարծում ենք, դրանք սեղանի գիրք կդառնան և՛ բանկային գործն ուսումնասիրողների և՛ ընթերցողների ավելի լայն շրջանակի համար:

Հայաստանի բանկերի միություն

Բարի երթ

Մտադրան

Գրախոսվող աշխատանքը նվիրված է առևտրային բանկերի հիմնական ակտիվային գործունեությանը՝ վարկային գործառնություններին: Այն բաղկացած է 9 գլուխներից: Յուրաքանչյուր գլխում տրված են թեմայի հիմնական նպատակը, ուսանողի կողմից ձեռք բերվելիք ունակությունների և հմտությունների նկարագիրը, առանձնացված են հանգուցային բառերը: Տեքստի վերջում թվարկված են ինքնաստուգման հարցերը, որոնց պատասխանները ուսանողներին հնարավորություն կտան պարզել ստացած գիտելիքների մակարդակը:

Առաջին՝ «Բանկերի դերն ու նշանակությունը շուկայական տնտեսության մեջ: Վարկավորումը որպես բանկերի հիմնական գործունեություն» գլխում հեղինակը բնութագրում է վարկի դերը, վարկային համակարգը և նրա զարգացումը շուկայական տնտեսության անցման փուլում, ներկայացնում է առևտրային բանկի գործունեության սկզբունքները և գործառնությունները:

Երկրորդ՝ «Վարկային հարաբերությունների սուբյեկտները, վարկերի տեսակները: Բանկային վարկավորման սկզբունքները» գլխում տրվում են վարկային հարաբերությունների սուբյեկտների բնութագիրը, վարկերի դասակարգումն ըստ տարբեր հայտանիշների, բնութագրվում են վարկերի հիմնական տեսակները, ամփոփ ներկայացվում է վարկային հարաբերությունների իրավական կարգավորումը ՀՀ-ում:

Ուսումնական նյութի «Բանկային վարկավորման համակարգը: Վարկային քաղաքականությունը և վարկավորման տեխնիկան: Վարկային ռիսկի կառավարումը» գլուխը նվիրված է բանկային վարկավորման համակարգի նկարագրությանը, վարկավորման գործընթացը կարգավորող մարմիններին, բանկերի ներքին կանոններին, այդ թվում՝ վարկավորման քաղաքականությանը և տեխնիկային:

Չորրորդ՝ «Հաճախորդի վարկունակությունը և նրա որոշման մեթոդները» գլխում ներկայացվում են հաճախորդի վարկունակության հասկացությունը և չափանիշները, վարկունակության գնահատման տարբեր եղանակները՝ դրամական հոսքի վերլուծության, ֆինանսական գործակիցների, հաճախորդի գործարար ռիսկի վերլուծության հիման վրա: Այս գլխում պարզաբանվում են նաև ֆիզիկական անձի վարկունակության դասի որոշման և վարկային ռիսկի կառավարման հարցերը:

Կիրառական ուղղվածություն ունի հատկապես աշխատանքի հինգերորդ գլուխը՝ «Տիպային վարկային պայմանագիրը և նրա բաժինները», որտեղ ներկայացվում են բանկի և հաճախորդի միջև կնքվող վարկային պայմանագրի իրավական և տնտեսական հիմքերը, այդ պայմանագրի բովանդակության նկատմամբ ներկայացվող հիմնական պահանջները, բանկային պրակտիկայում վարկային պայմանագրերի օգտագործման միջազգային փորձը:

Հաշվի առնելով վարկային մոնիտորինգի կարևոր նշանակությունը, ուսումնական մոդուլում առանձին գլուխ է նվիրված վարկային վերահսկողությանը և մոնիտորինգին, որտեղ տրվում են այդ հասկացությունների սահմանումները, ներկայացվում են վարկային վերահսկողության սկզբունքները և վերահսկման իրականացման կարգը, վարկերի դասակարգումն ըստ ռիսկի դասի (ստանդարտ, հսկվող ոչ ստանդարտ, կասկածելի, անհուսալի)՝ համաձայն գործող կարգի, վերահսկման այցելությունների ժամանակացույցերի կազմման տեխնիկան:

Աշխատանքի յոթերորդ՝ «Բիզնես ծրագրերով վարկավորման գործընթաց» գլխում նկարագրվում են միջին և փոքր վարկերի ուսումնասիրման, իրականացման և մարման մեթոդներն ու գործընթացները, մանրամասն ներկայացվում են գործարար ծրագրի ցիկլը, վարկային ցիկլը և նրանց միջև կապը:

Ուսումնական մոդուլում առանձին գլուխ է նվիրված վարկի տոկոսադրույքների սահմանման սկզբունքներին ու մեթոդներին: Այստեղ հեղինակը ներկայացնում է միջազգային պրակտիկայում լայն կիրառում ստացած մի շարք մեթոդներ և մոդելներ՝ տոկոսադրույքի որոշումը «արժեք գումարած» մեթոդով, զնային առաջնության, պրայմ ռեյտինգ ցածր սահմանվող տոկոսադրույք (ավելացումների մոդել), առավելագույն տոկոսադրույքի/Մոդել «կեսի» «արժեք – օգտակարություն» մոդելները:

Ելնելով այն հանգամանքից, որ վարկային գործառնությունների իրականացման հիմնական աղբյուրը, որպես կանոն, ներգրավված միջոցներն են, հեղինակը աշխատանքի վերջին՝ իններորդ «Բանկային միջոցների աղբյուրների կառավարումը» գլխում բացատրում է ավանդների տեսակները, զնագոյացման սկզբունքները, մեթոդները և բանկերի կողմից ավանդային գործառնությունների իրականացման գործընթացը:

Ուսումնական մոդուլն ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական նշանակություն: Այն շարադրված է պարզ և ուսանողների համար մատչելի: Կարծում եմ, որ դասընթացն անցնելու արդյունքում ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները ունկնդիրներին հնարավորություն կտան իրենց որպես մասնագետ արժանվույնս դրսևորել առևտրային բանկերի համապատասխան ստորաբաժանումներում:

Հարկ եմ համարում նաև նշել, որ ուսումնական մոդուլը, թեև նախատեսված է ֆինանսաբանկային քոլեջի ուսանողների համար, այնուհանդերձ այն կարող է օգտակար լինել նաև բուհերի ուսանողների, ֆինանսիստների, բանկերի աշխատակիցների և շահագրգիռ այլ անձանց համար:

ՍԱՍՎԵԼ ՆԱԴԱՊԵՏՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսաբանկային քուեջի հիմնադիրներ.....	2
Հարգարժան ընթերցող.....	3
Լենտորոնական բանկի խորհուրդ.....	3
Առաջաբան.....	4
Թեմա 1. Բանկերի դերն ու նշանակությունը շուկայական տնտեսության մեջ:.....	7
Վարկավորումը որպես բանկերի հիմնական գործունեություն.....	7
1.1 Վարկի դերը շուկայական տնտեսության զարգացման գործում.....	7
1.2 Վարկային համակարգը և նրա զարգացումը շուկայական տնտեսության անցման փուլում.....	7
1.3. «Առևտրային բանկ» հասկացությունը և նրա գործունեության սկզբունքները.....	8
1.4. Առևտրային բանկերի գործառնությունները.....	8
Թեմա 2. Վարկային հարաբերությունների սուբյեկտները, վարկերի տեսակները:.....	10
Բանկային վարկավորման սկզբունքները.....	10
2.1. Վարկային հարաբերությունների սուբյեկտները.....	10
2.2. Վարկերի տեսակները.....	10
2.3. Բանկային վարկավորման սկզբունքները.....	17
2.4. Վարկային հարաբերությունների իրավական կարգավորումը.....	18
Թեմա 3. Բանկային վարկավորման համակարգը:.....	20
Վարկային քաղաքականությունը և վարկավորման տեխնիկան: Վարկային ռիսկի կառավարումը.....	20
3.1. Բանկային վարկավորման համակարգը.....	20
3.2. Վարկավորման գործընթացը կարգավորող մարմինները:.....	21
Վարկավորման քաղաքականությունը և տեխնիկան.....	21
3.3. Վարկային ռիսկը և դրա կառավարման մեթոդները.....	24
Թեմա 4. Հաճախորդի վարկունակությունը և դրա որոշման մեթոդները:.....	30
4.1. Հաճախորդի վարկունակության հասկացությունը և չափանիշները.....	30
4.2. Վարկունակության գնահատումը դրամական հոսքի վերլուծության հիման վրա.....	31
4.3. Հաճախորդների վարկունակության գնահատման ֆինանսական գործակիցների հիման վրա վարկունակության դասի որոշումը.....	32
4.4. Գործարար ռիսկի վերլուծությունը որպես վարկունակության գնահատման միջոց.....	35
4.5. Ֆիզիկական անձի վարկունակության դասի որոշումը.....	36
4.6. Վարկային ռիսկի կառավարումը.....	38
Թեմա 5. Տիպային վարկային պայմանագիրը և նրա բաժինները:.....	41
5.1. Բանկի և հաճախորդի միջև կնքվող վարկային պայմանագրի իրավական և տնտեսական հիմքերը.....	41
5.2. Վարկային պայմանագրի բովանդակության նկատմամբ ներկայացվող հիմնական պահանջները.....	42
5.3. Բանկային պրակտիկայում վարկային պայմանագրերի օգտագործման միջազգային փորձը.....	44
Թեմա 6. Վարկային վերահսկողություն.....	46
6.1. Վարկային վերահսկողության սկզբունքները.....	46
6.2. Մոնիտորինգի և վերահսկման սահմանումները և վերահսկման իրականացման կարգը.....	46
6.3. Վարկերի դասակարգումը.....	48
6.4. Վերահսկման այցելությունների գրաֆիկների կազմումը.....	49
Թեմա 7. Բիզնես ծրագրերով վարկավորման գործընթաց.....	51
7.1. Բիզնես պլանի ցիկլը.....	51
7.2. Վարկային ցիկլը.....	52
Նախորդում.....	54
Վերջնական գնահատում.....	54
Իրականացում.....	54
Թեմա 8. Վարկի նկատմամբ սահմանվող տոկոսադրույքները և տոկոսադրույքների սահմանման սկզբունքներն ու մեթոդները.....	55
8.1. Տոկոսադրույքի որոշումը «արժեք գումարած» սկզբունքով.....	55
8.2. Գնային առաջնության մոդել.....	56
8.3. Պրայմ ռեյտինգ ցածր սահմանվող տոկոսադրույք (ավելացումների մոդել).....	56
8.4. Առավելագույն տոկոսադրույքի մոդել /Մոդել «կեայի»/.....	56
8.5. «Արժեք – օգտակարություն» մոդել.....	56
Թեմա 9. Բանկային միջոցների աղբյուրների կառավարումը.....	59
9.1. Բանկերի կողմից տրամադրվող ավանդների տեսակները.....	59
9.2. Տարաբնույթ ավանդների համար սահմանված տոկոսադրույքները.....	60
9.3. Բանկի ավանդների կառուցվածքը.....	60
9.4. Բանկային ավանդների գնագոյացման մեթոդները.....	61

9.5. Արտարժույթով ավանդային համակարգեր	64
9.6. Նոր ավանդների այլ տեսակներ	64
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	64
ՀԱՎԵԼՎԱԾ	66
ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ՓԱՍՏԱԹՎԹԵՐ	66
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	92
ՀԱՆԳՈՒՑԱՑԻՆ ԲԱՌԵՐԻ ՑՈՒՑԻՉ	92

Թեմա 1. Բանկերի դերն ու նշանակությունը շուկայական տնտեսության մեջ:

Վարկավորումը որպես բանկերի հիմնական գործունեություն

Թեմայի նպատակը՝ բացահայտել բանկերի դերն ու նշանակությունը շուկայական տնտեսության մեջ, տալ վարկային համակարգի և շուկայական տնտեսության անցման փուլում նրա զարգացման միտումները, ինչպես նաև ներկայացնել առևտրային բանկերի, որպես վարկավորող կազմակերպությունների գործունեության սկզբունքները և գործառնությունները:

- Ուսնակությունների և հմտությունների նկարագիրը:** Թեման անցնելուց հետո ունկնդիրները կկարողանան՝
- ներկայացնել բանկերի դերն ու նշանակությունը շուկայական տնտեսության մեջ
 - ներկայացնել վարկի դերը շուկայական տնտեսության զարգացման գործում
 - ներկայացնել վարկային համակարգը և նրա զարգացումը շուկայական տնտեսության անցման փուլում
 - ներկայացնել առևտրային բանկերի գործունեության հիմնական սկզբունքները,
 - ներկայացնել առևտրային բանկերի գործառնությունները:

1.1 Վարկի դերը շուկայական տնտեսության զարգացման գործում

Հայաստանի մուտքը շուկայական նշանակալից չափով կապված է վարկային հարաբերությունների զարգացման և կայացման հետ: Այդ իսկ պատճառով շուկայի ձևավորման պարտադիր պատճառներից մեկը համարվում է դրամաշրջանառության և վարկային համակարգի արմատական վերակառուցումը:

Բարեփոխման հիմնական խնդիրը դրամական ռեսուրսների կենտրոնացված վերաբաշխման առավելագույն կրճատումն է և անցումը ֆինանսական շուկայում դրամական միջոցների *հորիզոնական* շրջանառության:

Վարկը շուկայական տնտեսության անցման փուլում փոխառուական կապիտալի շարժն է:

Վարկը՝ ֆինանսական գործիք է, որը քաղաքացուն կամ ձեռնարկությանը հնարավորություն է ընձեռում դրամ փոխառել՝ ապրանքներ, հումք և այլն գնելու (այսինքն՝ անմիջապես տիրանալու) համար, վճարումը կատարելով որոշ ժամանակահատվածի ընթացքում, սովորաբար՝ տոկոսով:

■ Վարկը ապահովում է դրամական կապիտալի փոխարկումը փոխառուական կապիտալի և ներկայացնում է փոխատուի և փոխառուի միջև ձևավորվող հարաբերությունները: Նրա օգնությամբ ձեռնարկությունների, անհատների և պետության ազատ դրամական միջոցները և եկամուտները կուտակվում են, փոխարկվում փոխառուական կապիտալի, որն էլ իր հերթին վճարի դիմաց տրամադրվում է ժամանակավոր օգտագործման:

■ Շուկայական տնտեսության պայմաններում վարկի անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ճկուն մեխանիզմ է հանդիսանում տնտեսության մի ճյուղից մյուսին կապիտալի հոսքի ապահովման և շահույթի նորմաների կարգավորման համար:

■ Մյուս կողմից վարկը անհրաժեշտ է գործող կազմակերպությունների միջոցների անընդհատ շրջանառության ապահովման, ինչպես նաև ապրանքների սպառման գործընթացի սպասարկման համար:

■ Փոխառուական կապիտալը վերաբաշխվում է տնտեսության ճյուղերի միջև, ելնելով շուկայի օրենքներից՝ այսինքն կապիտալի հոսքը ուղղվում է այն ճյուղերին, որոնք ապահովում են բարձր շահույթ:

■ Վարկը ակտիվ ազդեցություն է թողնում նաև դրամական մասսայի կառուցվածքի, դրամաշրջանառության արագության վրա:

■ Վարկի շնորհիվ շահույթի կապիտալիզացիայի գործընթացն էլ ավելի արագ է ընթանում, հետևաբար նաև արագանում է արտադրության կենտրոնացումը, քանի որ շուկայում բաժնետոմսերի տեղաբաշխման համար պարտադիր պայման է նշանակալից դրամական ռեսուրսների կուտակումը և նրանց կենտրոնացումը վարկային համակարգում: Վարկային համակարգը՝ ի դեմս բանկերի, ակտիվ մասնակցություն ունի արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման գործում:

■ Վարկը կարող է նաև օգտագործվել պետության կողմից որպես գործիք կապիտալ ներդրումների, բնակարանային շինարարության, ապրանքների ներմուծման խթանման, ինչպես նաև տնտեսության շահութաբեր ճյուղերի զարգացման համար:

1.2 Վարկային համակարգը և նրա զարգացումը շուկայական տնտեսության անցման փուլում

Վարկային համակարգի քննարկման ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ այն հիմնվում է բարդ տնտեսական հարաբերությունների իրացման վրա, որոնք անցել են զարգացման երկար, պատմական ճանապարհ:

Տարբերակ վում են վարկային համակարգի երկու հասկացություն.

- Վարկային հարաբերությունների, վարկավորման ձևերի և մեթոդների ամբողջություն (ֆունկցիոնալ ձև)
- Ֆինանսավարկային կազմակերպությունների ամբողջություն (ինստիտուցիոնալ ձև):

Առաջինի դեպքում վարկային համակարգը ներկայացվում է բանկային, սպառողական, առևտրային, պետական, միջազգային վարկերով: Նշված յուրաքանչյուր տեսակի համար բնորոշ է վարկային հարաբերությունների յուրահատուկ ձև և մեթոդ: Այս յուրահատուկ հարաբերությունները կյանքի են կոչվում և

կազմակերպվում մասնագիտացված կազմակերպությունների՝ բանկերի կողմից, որոնք էլ ձևավորում են վարկային համակարգի երկրորդ հասկացությունը:

Բանկը առևտրային կազմակերպություն է, որն իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավում է դրամական միջոցներ և իր անունից տեղաբաշխում այդ միջոցները վերադարձելիության, վճարման և ժամկետայնության պայմաններով, ինչպես նաև իրականացնում է հաշվարկային, միջնորդային և այլ գործարքներ:

1.3. «Առևտրային բանկ» հասկացությունը և նրա գործունեության սկզբունքները

Բանկը առևտրային կազմակերպություն է, որը իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավում է դրամական միջոցներ և իր անունից տեղաբաշխում այդ միջոցները վերադարձելիության, վճարման և ժամկետայնության պայմաններով, ինչպես նաև իրականացնում է հաշվարկային, միջնորդային և այլ գործարքներ:

Բանկի հիմնական նշանակությունը միջնորդությունն է փոխատուներից փոխառուներին և վաճառողներից գնորդներին դրամական միջոցների տեղափոխման գործում:

Առևտրային բանկերի գործունեության սկզբունքները.

- Առևտրային բանկերի գործունեության հիմնական սկզբունքը բանկի գործունեության իրականացումն է իրականում գոյություն ունեցող միջոցների շրջանակներում:

Սա նշանակում է.

- Բանկերը կարող են իրականացնել անկանխիկ վճարումներ, տրամադրել վարկեր այլ բանկերին իրենց թղթակցային հաշիվներում եղած գումարների սահմաններում, այսինքն բանկերը պետք է ապահովեն քանակական համապատասխանություն իր ռեսուրսների և ներդրումների միջև:

- Բանկերը պետք է ապահովեն ոչ միայն քանակական համապատասխանություն իրենց ռեսուրսների և ներդրումների միջև, այլ նաև ապահովեն ժամկետային համապատասխանություն, այսինքն, եթե բանկը ներգրավել է կարճաժամկետ միջոցներ, ապա իրականացվող ներդրումները նույնպես պետք է կրեն կարճաժամկետ բնույթ, հակառակ դեպքում բանկի վճարունակությունը և իրացվելիությունը կվտանգվի:

Հետևաբար, ցանկացած բանկային գործառնություն իրականացնելիս (ներդրումային, հիպոթեկային) բանկը պետք է անպայման մեծ ուշադրություն դարձնի տեղաբաշխվող միջոցների ձևավորման աղբյուրներին:

Այս սկզբունքը շահագրգռում է բանկերին ներգրավելու ավանդներ, փնտրելու ներդրումներ իրականացնելու էլ ավելի արդյունավետ ոլորտներ: Հենց այստեղ էլ կատարվում է բանկային կապիտալի տեղափոխումը էլ ավելի շահութաբեր և արդյունավետ ճյուղեր:

- Առևտրային բանկերի գործունեության երկրորդ սկզբունքը բանկի լիակատար տնտեսական ինքնուրույնությունն է և իր գործունեության արդյունքների համար տնտեսական պատասխանատվությունը:

- Տնտեսական ինքնուրույնությունը ենթադրում է բանկի սեփական միջոցների և ներգրավված միջոցների տնօրինման ազատություն, հաճախորդների և ավանդատուների ազատ ընտրություն, շահույթի տնօրինում:

- Տնտեսական պատասխանատվությունը չի սահմանափակվում բանկի ընթացիկ շահույթներով, այլև տարածվում է բանկի կապիտալի վրա: Իր պարտավորությունների դիմաց առևտրային բանկը պատասխանատու է իրեն պատկանող բոլոր միջոցներով և գույքով, որոնց վրա օրենքով կարող է բռնագանձում տարածվել:

- Առևտրային բանկերի գործունեության երրորդ սկզբունքն այն է, որ բանկի և նրա հաճախորդների միջև հարաբերությունները դրված են շուկայական հիմքերի վրա:

Վարկ տրամադրելիս բանկն առաջնորդվում է շուկայական այնպիսի չափանիշներով, ինչպիսիք են շահութաբերությունը, ռիսկը, իրացվելիությունը:

- Առևտրային բանկերի գործունեության չորրորդ սկզբունքն այն է, որ բանկի գործունեության կարգավորումը կարող է իրականացվել միայն անուղղակի տնտեսական մեթոդներով (ԿԲ նորմատիվներ, օրենքներ, որոշումներ և այլն):

Պետությունը միայն որոշում է «խաղի կանոնները», սակայն չի կարող տալ ուղղակի հրամաններ:

1.4. Առևտրային բանկերի գործառնությունները

1. Առևտրային բանկի կարևորագույն գործառնություններից մեկը միջնորդությունն է վարկավորման գործընթացում, որը բանկերն իրականացնում են դրամաշրջանառության գործընթացում ժամանակավոր ազատ դրամական միջոցների վերաբաշխման տեսքով:

Միջնորդության գործառնության յուրահատկությունը կայանում է նրանում, որ միջոցների վերաբաշխման գլխավոր չափանիշը հանդիսանում է փոխառուի կողմից նրանց օգտագործման շահութաբերությունը:

Դրամական միջոցների վերաբաշխումը փոխատուի և փոխառուի միջև տնտեսական կապերի հորիզոնականով իրականացվում է բանկերի միջոցով առանց միջանկյալ օղակների մասնակցության, վճարման և վերադարձելիության պայմաններով:

Տեղաբաշխված և ներգրավված միջոցների դիմաց վճարը ձևավորվում է փոխառու միջոցների նկատմամբ առաջարկի և պահանջարկի ազդեցության ներքո:

Բանկերի միջնորդային գործառնության նշանակությունը տնտեսության զարգացման համար կայանում է նրանում, որ նրանք իրենց գործունեությամբ նվազեցնում են տնտեսական համակարգում ռիսկի և անորոշության աստիճանը:

Դրամական միջոցները փոխատուից փոխառուին կարող են տեղափոխվել նաև առանց բանկերի միջնորդության, սակայն այդ դեպքում կտրուկ աճում են դրամական միջոցների կորստի ռիսկերը, քանի որ

փոխատուին և փոխառուին շատ անգամ տեղյակ չեն միմյանց վճարունակությունից և առաջարկվող դրամական միջոցների չափը և ժամկետայնությունը կարող են չհամընկնել պահանջվող դրամական միջոցների չափի և ժամկետայնության հետ:

Առևտրային բանկերը ներգրավում են միջոցներ, որոնք կարող են տեղաբաշխել վարկերի ձևով փոխառուի պահանջներին համապատասխան և իրենց ակտիվների լայն դիվերսիֆիկացիայի հիման վրա նվազեցնում են ավանդատուների ռիսկերը:

2. Առևտրային բանկի երկրորդ կարևորագույն գործառնությամբ տնտեսության մեջ միջոցների կուտակման խթանումն է:

Ֆինանսական շուկայում հանդես գալով վարկային ռեսուրսների պահանջով, առևտրային բանկերը պետք է ոչ միայն առավելագույնս մոբիլիզացնեն տնտեսության մեջ առկա խնայողությունները, այլև ձևավորեն միջոցների կուտակման բավականին արդյունավետ խթաններ:

Դրամական միջոցների խթանները ձևավորվում են ճկուն դեպոզիտային քաղաքականության հիման վրա: Բացի բարձր [տոկոսադրույթներից](#), բանկի ավանդատուներին անհրաժեշտ են նաև ապահովության երաշխիքներ: Նման երաշխիք կարող է ծառայել բանկի ակտիվների ապահովագրման ֆոնդի ստեղծումը, ավանդային ներդրումների ապահովագրումը և այլն:

Նշվածից բացի, ավանդատուների համար շատ կարևոր նշանակություն ունի առևտրային բանկի գործունեության և ֆինանսական վիճակի մասին տեղեկատվության տիրապետումը:

3. Առևտրային բանկի երկրորդ կարևորագույն գործառնությամբ միջնորդությունն է առանձին սուբյեկտների միջև կատարվող վճարումներում:

Այս գործառնությամբ հանդես է գալիս, երբ բանկերը ֆոնդային շուկայում արժեթղթերով գործառնություններում հանդես են գալիս որպես միջնորդ, ներդրումային խորհրդատվություն իրականացնող, որպես ներդրումային ընկերություն հանդիսացող կազմակերպություն:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է վարկը և ինչու՞մ է կայանում նրա հիմնական դերը շուկայական տնտեսության զարգացման գործում:
2. Ի՞նչ է վարկային համակարգը
3. Որո՞նք են վարկային համակարգի բաղկացուցիչ մասերը:
4. Ի՞նչ է «Առևտրային բանկը» և որոնք են բանկերի գործունեության սկզբունքները:
5. Ի՞նչ է ենթադրում բանկի իրականում գոյություն ունեցող միջոցների շրջանակներում գործունեության սկզբունքը:
6. Ի՞նչ է ենթադրում բանկի լիակատար տնտեսական ինքնուրույնության սկզբունքը:
7. Ի՞նչ է ենթադրում բանկի և հաճախորդների միջև շուկայական հիմքերի վրա հարաբերությունների ձևավորման սկզբունքը:
8. Որո՞նք են առևտրային բանկերի հիմնական գործառնությունները:
9. Ի՞նչ է ենթադրում բանկի միջնորդության գործառնությամբ:
10. Ի՞նչ է ենթադրում բանկի կողմից միջոցների կուտակման խթանման գործառնությամբ:

Թեմա 2. Վարկային հարաբերությունների սուբյեկտները, վարկերի տեսակները:

Բանկային վարկավորման սկզբունքները

Թեմայի նպատակը: Սույն թեմայում ներկայացվում են վարկային հարաբերությունների սուբյեկտները, քննարկվում են բանկային վարկերի տեսակները, որոնց դասակարգումը կատարվում է, ելնելով տարբեր չափանիշներից, որոնք են՝ ըստ փոխառուների խմբերի, ժամկետների, վարկի չափի, ուղղությունների, ապահովման ձևի, տրամադրման և մարման ձևերի, և բացահայտվում է բանկային վարկավորման սկզբունքները շուկայական տնտեսության մեջ:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ունկնդիրները կկարողանան՝

- ներկայացնել վարկային հարաբերությունների սուբյեկտներին
- տալ Փոխատուի և Փոխառուի սահմանումները
- ներկայացնել բանկերի վարկային գործառնությունների նշանակությունը նրանց գործունեությունում,
- ներկայացնել վարկավորման հիմնական սկզբունքները,
- դասակարգել բանկային վարկերը ըստ տարբեր հատկանիշների,
- ներկայացնել ֆիզիկական անձանց վարկավորման առանձնահատկությունները,
- տալ լիզինգի և ֆակտորինգի սահմանումները և ներկայացնել առանձնահատկությունները,
- ամփոփ ներկայացնել վարկային գործառնությունների իրավական կարգավորումը:

2.1. Վարկային հարաբերությունների սուբյեկտները

Շուկայական տնտեսության պայմաններում վարկի հիմնական ձևը բանկային վարկն է, այսինքն առևտրային բանկերի կողմից տրամադրվող տարբեր տեսակի և ձևի վարկերը:

Բանկային վարկավորման հարաբերությունների սուբյեկտներ են հանդիսանում տնտեսավարող մարմինները, բնակչությունը, պետությունը, ինչպես նաև բանկերը: Ինչպես հայտնի է, վարկային գործառնում վարկային հարաբերությունների սուբյեկտները հանդես են գալիս որպես փոխատու և փոխառու:

Փոխատու հանդիսանում են իրենց ժամանակավոր ազատ միջոցները որոշակի ժամկետով փոխառուների տնօրինմանը տրամադրող իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Փոխառուն վարկային հարաբերությունների այն կողմն է, որը միջոցներ է ստանում օգտագործման համար և պարտավորվում է հետ վերադարձնել սահմանված ժամկետում:

Բանկային վարկավորման ժամանակ կողմերը հանդես են գալիս և որպես փոխառու և որպես փոխատու: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ բանկերը հիմնականում աշխատում են ներգրավված միջոցների հաշվին և հետևաբար ավանդատուների նկատմամբ հանդես են գալիս որպես փոխառու: Վերաբաշխելով իրենց մոտ կենտրոնացված միջոցները վարկերի ձևով բանկերը հանդես են գալիս որպես փոխատու:

Նույնը վերաբերում է նաև վարկային գործարքի մեջ մտնող հակառակ կողմին՝ բնակչությանը, տնտեսական կազմակերպություններին, պետությանը: Տեղաբաշխելով իրենց միջոցները նրանք հանդես են գալիս որպես փոխառու և վերցնելով վարկեր՝ հանդես են գալիս որպես փոխառու:

- Բանկերի և այլ վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունները ստորաբաժանվում են ակտիվային և պասիվային վարկային գործառնությունների: Առաջին դեպքում տվյալ բանկը (վարկային կազմակերպությունը) ինքն է տրամադրում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վարկեր, իսկ երկրորդ դեպքում նա ներգրավում է փոխառու միջոցներ այլ բանկերից, կենտրոնական բանկից, միջազգային ֆինանսական կազմակերպություններից:

2.2. Վարկերի տեսակները

Առևտրային բանկի հիմնական տնտեսական գործառնությամբ վարկերի տրամադրումն է, որն իրականացվում է տնտեսավարող սուբյեկտների, քաղաքացիների և պետական կազմակերպությունների սպառողական ու ներդրումային նպատակների ֆինանսավորման համար: Բանկերի այս գործառնության հաջող իրագործումից է մեծապես կախված տնտեսության իրական հատվածի զարգացումը, նրան կողմից սպասարկվող տարածաշրջանների տնտեսական վիճակը:

Առևտրային բանկերը ներգրավում են միջոցներ, որոնք կարող են տեղաբաշխել վարկերի ձևով փոխառուի պահանջներին համապատասխան և իրենց ակտիվների լայն դիվերսիֆիկացման հիման վրա նվազեցնում են ավանդատուների ռիսկերը:

Բանկի՝ որպես առևտրային կազմակերպության հիմնական նպատակը առավելագույն հնարավոր շահույթի ստացումն է, որին նրանք հասնում են առավելապես վարկային գործառնությունների միջոցով: Պատահական չէ, որ վարկավորումը առևտրային բանկերի ակտիվային գործառնությունների կարևորագույն ուղղությունն է, իսկ վարկային պորտֆելը սովորաբար կազմում է նրանց ընդհանուր ակտիվների 1/3-ից մինչև կեսը, որն ապահովվում է բանկի եկամուտների հիմնական մասը՝ մոտ 2/3-ը: Մյուս կողմից, բանկային գործունեության ռիսկի հիմնական մասը կապված է վարկավորման հետ: Այս պատճառով վարկավորումը հանդիսանում է բանկի հիմնական գործը և նրա ճիշտ կառավարումը բանկերի գործունեության հիմնական ցուցանիշն է:

Վերջին ժամանակներս դիտվում են [բանկային ռիսկերը](#) վարկային պորտֆելում կենտրոնացված միտումներ, որի մասին են վկայում այն փաստերը, որ մի շարք բանկերի անվճարունակության և սնանկության հիմնական պատճառը եղել է վատորակ վարկային պորտֆելը: Եվ պատահական չէ, որ բանկերում ստուգումներ և

վերստուգումներ իրականացնելիս կենտրոնական բանկի աշխատակիցները անցկացնում են բանկի վարկային պորտֆելի մանրակրկիտ ստուգում: Նման ստուգումը սովորաբար ընդգրկում է բոլոր խոշոր վարկերի գծով կազմված փաստաթղթերի և ապահովվածության մանրամասն ստուգում, փոքր վարկերի ընտրանքային ստուգում և բանկի վարկային քաղաքականության գնահատում:

Վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպություն (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից: Պայմանագիրը կարող է նախատեսել նաև մի կողմի պարտականությունը՝ մյուս կողմին տրամադրել տեսակային հատկանիշներով որոշվող գույք: Այս պայմանագիրը կկոչվի ապրանքային վարկի պայմանագիր:

Այժմ քննարկենք, թե ինչ վարկեր են տրամադրվում բանկերի կողմից: Բանկերն իրենց հաճախորդների լայն շրջանակին տրամադրում են վարկեր տարբեր նպատակների համար՝ արտադրության ընդլայնման, շինարարության իրականացման, մեքենաների և լայն սպառման ապրանքների գնման, արձակուրդի անցկացման, ուսման վճարի, բնակարանների և գրասենյակների վերանորոգման և այլ նպատակներով, որոնց ամբողջականությունը կազմում է տվյալ բանկի վարկային պորտֆելը:

Քանի որ վարկերի տարբեր տեսակները միմյանցից տարբերվում են գումարներով, արժույթով, նպատակներով, ժամկետներով, ապահովվածությամբ, ռիսկի աստիճանով և մի շարք այլ հատկանիշներով, ուստի բանկի որակյալ վարկային պորտֆելի ձևավորման և խելամիտ կառավարման, ինչպես նաև բանկերի գործունեությունը կարգավորող պետական մարմնի կողմից [վարկային ռիսկը](#) գնահատելու և սահմանափակելու առումով կարևոր նշանակություն ունի վարկերի դասակարգումը:

Բանկային տեսության մեջ գոյություն չունի վարկերի միասնական դասակարգում: Առաջարկվող դասակարգումները միմյանցից տարբերվում են ոչ միայն դասակարգման չափանիշների (հատկանիշների) թվով, այլ նաև ըստ այս կամ այն չափանիշի վարկերի խմբավորման: Ստորև տրված է վարկերի դասակարգումը ըստ մի շարք հատկանիշների, որը կազմվել է մասնագիտական գրականության մեջ առավել հաճախ հանդիպող դասակարգումների հիման վրա:

1. Ըստ փոխառուների խմբերի վարկերը լինում են.

- վարկեր տնտեսությանը
- վարկեր ֆինանսական հաստատություններին (բանկերին, ապահովագրական և ֆինանսական այլ կազմակերպություններին)
- վարկեր բնակչությանը
- վարկեր պետությանը

2. Ըստ ուղղության և նշանակության.

- հիփոթեքային վարկեր
- վարկեր ֆինանսական հաստատություններին
- գյուղատնտեսական վարկեր
- առևտրային և արդյունաբերական ընկերություններին
- [սպառողական վարկեր](#)
- այլ վարկեր
- լիզինգային ֆինանսավորում
- կարծաժամկետ՝ մինչև 1 տարի – շրջանառու միջոցների ձեռքբերման համար
- միջին ժամկետային՝ 1- 5 տարի - հիմնական միջոցների ձեռքբերման համար
- երկարաժամկետ՝ 5 տարուց ավելի

3. Ըստ վարկավորման ժամկետների վարկերը դասակարգվում են.

ա) ցպահանջ

բ) ժամկետային

Ժամկետային վարկերն իրենց հերթին լինում են՝ կարճաժամկետ (մինչև 1 տարի մարման ժամկետով), միջին ժամկետային (1 - 5 տարի ժամկետով) և երկարաժամկետ (5 տարուց ավելի): Պետք է նշել, որ վարկերի խմբավորումը կարճաժամկետ, միջին ժամկետային և երկարաժամկետ վարկերի զգալիորեն տարբերվում է տարբեր երկրներում:

4. Ըստ գումարի մեծության.

- մանր
- միջին
- խոշոր

♦ Վարկերի դասակարգումն ըստ չափի խիստ պայմանական է, քանի որ այն կախված է տվյալ բանկի կապիտալի մեծությունից: Երբեմն կենտրոնական բանկերը առևտրային բանկերից պահանջում են ներկայացնել տեղեկատվություն խոշոր փոխառուների վերաբերյալ:

5. Ըստ ապահովվածության.

- գրավով ապահովված
- երաշխիքով
- ապահովագրված
- ձևաթղթային

6. Ըստ տրամադրման ձևի.

- Փոխհատուցողական – վարկը տրամադրվում է վարկառուի կողմից արդեն իսկ կատարված ծախսի փոխհատուցման նպատակով

- Վճարային – վարկի գումարը բանկի կողմից վարկառուի ներկայացրած փաստաթղթերի համաձայն փոխանցվում է վարկառուի մատակարարին:

7. Ըստ մարման ձևի.

- մասնակի մարումով

- միանգամյա մարումով:

- ♦ Վարկերի օգտագործման նպատակները բազմազան են: Խոշորացված խմբավորման դեպքում առանձնացնում են հիփոթեքային, ձեռնարկատիրական, մասնավոր անձանց սպառողական, գյուղատնտեսական վարկեր, առևտրական և արդյունաբերական կազմակերպություններին տրամադրված վարկեր, ֆակտորինգ, լիզինգային ֆինանսավորում, ֆորֆեյտավորում, այլ վարկեր:

2.2.1 Հիփոթեքային վարկեր

Սրանք այն վարկերն են, որոնք համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ապահովված են շարժական կամ անշարժ գույքով՝ հող, շենքեր, և այլ ունեցվածք, ներառյալ կարճաժամկետ վարկերը շինարարության և հողաշինության համար և ավելի երկարաժամկետ վարկերը գյուղատնտեսական տարածքների յուրացման, առանձնատների, բնակարանների, առևտրային կառույցների, արտերկրում ունեցվածքի գնման համար:

Ընդ որում, [հիփոթեք](#) է համարվում գրավը, որի առարկան անկախ նրանից, թե շարժական կամ անշարժ գույք է, մնում է գրավատուի կամ երրորդ անձի տիրապետման ներքո: Հիփոթեքի պայմանագրով մի կողմը՝ գրավառուն, որը հիփոթեքով ապահովված վարկային պայմանագրով կամ այլ պարտավորությամբ (հիմնական պարտավորությամբ) պարտատերն է, այդ պարտավորությամբ գրավ դրված գույքի արժեքից գրավատուի մյուս պարտատերերի հանդեպ իր դրամական պահանջները բավարարելու նախապատվության իրավունք ունի:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված է, որ հիփոթեքի պայմանագրով կարող են գրավ դրվել միայն քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփական հողմասերը: Հողամասի նկատմամբ ընդհանուր սեփականության դեպքում հիփոթեք կարող է սահմանվել քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատկանող այն հողամասի նկատմամբ, որը բնեղենով առանձնացված է ընդհանուր սեփականության ներքո գտնվող հողամասից:

Այսպիսով, հիփոթեքային վարկերը այն վարկերն են, որոնք ապահովված են անշարժ գույքով՝ հողով, շենքերով և այլ կառույցներով: Տրվում են հիմնականում շինարարության, հողաշինարարության, հողեր, բնակարան և այլ հիմնական միջոցներ գնելու համար:

Շինարարության համար վարկերը կարող են տրամադրվել մասերով (տրանշ), որի դեպքում նոր կառուցվող օբյեկտները հանդիսանում են գրավի առարկա:

Հիփոթեքային վարկերը հիմնականում լինում են միջին և երկարաժամկետ:

Կարճաժամկետ հիփոթեքային վարկերը տրվում են շինարարության նախապատրաստման (շինարարական փաստաթղթեր, նախնական հետազոտական աշխատանքներ) համար, եթե տվյալ տնտեսվարող սուբյեկտը ունի այլ բանկերի հետ երկարատև վարկավորման պայմանագրեր:

2.2.2. Վարկեր ֆինանսական հաստատություններին

Տրվում են հիմնականում այլ բանկերին, ապահովագրական և այլ ֆինանսական ընկերություններին:

Այդպիսի վարկերը հիմնականում կարճաժամկետ են:

Այս կարգի վարկերի թվին են դասվում վարկերը արժեթղթերի դիլերներին: Պետական և կորպորատիվ արժեթղթերի դիլերները կարճաժամկետ վարկավորման կարիք են զգում, որպեսզի գնեն նոր արժեթղթեր՝ պահելով դրանք մինչև մարման ժամանակը: Նման վարկեր պատրաստականությամբ են տրամադրվում խոշոր բանկերի կողմից, որովհետև այդպիսի վարկերը սովորաբար համարվում են բարձրորակ՝ բարձր իրացվելի ակտիվներով (պետական, կառավարական արժեթղթերով) ապահովված լինելու պատճառով: Ավելին այդ վարկերը տրամադրվում են այնքան կարճ ժամկետներով (1 օրվանից մինչև 1 ամիս), որ վարկային շուկայում պայմանների փոփոխման ընթացքում բանկը կարող է հետ ստանալ իր միջոցները և տալ նոր վարկեր ավելի բարձր տոկոսադրույքով:

2.2.3. Գյուղատնտեսական վարկեր

Այս խմբում դասակարգվում են գյուղացիական տնտեսություններին հողի մշակման, բերքահավաքի, անասնապահական նպատակներով տրամադրված վարկերը: Նման վարկերը տրվում են ֆերմերներին գյուղատնտեսական մեկ ցիկլի համար հողի մշակման, բերքահավաքի, կենդանիների կերակրման համար: Հիմնականում կարճաժամկետ են և ապահովվում են ֆերմերներին սեփական լրիվ ակտիվներով:

2.2.4. Առևտրային և արդյունաբերական ընկերություններին վարկեր

Տրամադրվում են ձեռնարկատիրական կազմակերպություններին հիմնականում հիմնական և շրջանառու միջոցների համալրման, հարկերի և աշխատավարձի վճարման ծախսերը ծածկելու համար և կախված են գործարքների ցիկլերի տևողությունից:

Այսպիսի վարկերը որոշակի ցիկլի տևողությամբ կրկնվող վարկեր են հիմնական հաճախորդների համար: Կախված են վարկ ստացողի հաշվեկշռային ակտիվներով: Նման վարկերի թվին են դասվում.

Ինքնահրացվելի վարկեր

Այս վարկերն օգտագործվում են կազմակերպության ապրանքանյութական պահուստների ձևավորման վրա (հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ, պատրաստի արտադրանք): Այնուհետև արտադրական ողջ ցիկլի ավարտի արդյունքում ձևավորված դրամական միջոցների հաշվին իրականացվում է վարկի մարումը, այսինքն՝ վարկային միջոցների հաշվին արտադրվում է որոշակի քանակության արտադրանք, կազմակերպվում է նշված արտադրանքի վաճառքը (հաճախ ապրանքային վարկի տեսքով) և ստացված դրամական միջոցներն ուղղվում են վարկի մարմանը:

Նման վարկավորման ժամկետը հիմնականում համընկնում է արտադրության լրիվ ցիկլի հետ (30 - 90 օր): Վարկային միջոցների օգտագործման ուղղություններն են արտադրական ծախսերը, հումքի և նյութերի գնումը, հարկերի վճարումը, արժեթղթերի և այլ պարտավորությունների տոկոսային վճարումները, դիվիդենդների վճարումը:

Շրջանառու կապիտալի վարկավորում

Կարճաժամկետ (1 շաբաթից մինչև 1 տարի) վարկեր են, որոնք օգտագործվում են ձեռնարկության կամ կազմակերպության շրջանառու կապիտալի համալրման համար: Նրանք նման են ինքնահրացվելի վարկերին: Հաճախակի օգտագործվում են սեզոնային պիկերի և արտադրության ցիկլերի հետևանքով առաջացած դրամական պահանջների բավարարման համար:

Շինարարության «միջակայքային» վարկեր

Այս վարկերն իրենցից ներկայացնում են բանկերի համար ապահովված վարկերի տարածված ձևերից մեկը:

Նման վարկերը նախատեսվում են բնակելի, վարչական շենքերի և այլ կառույցների շինարարության համար: Չնայած տվյալ դեպքում խոսքն անշարժ գույքի մասին է, վարկերը տրվում են կարճ ժամկետներով: Դրանք վարկառուին հնարավորություն են տալիս միջոցներ ստանալ աշխատողներ վարձելու, սարքավորումներ վարձակալելու, շինանյութ ձեռք բերելու, հողային աշխատանքներ կատարելու համար: Շինարարության ավարտից հետո բանկային վարկը մարվում է այլ վարկառուից ավելի երկարաժամկետ վարկ ստանալու միջոցով, գրավադնելով նորակառույց անշարժ գույքը: Նմանատիպ վարկ տալու հիմնական պայմանը հաճախորդի և երկարաժամկետ վարկ տվող բանկի միջև վարկավորման պայմանավորվածություն է:

Վարկեր մանրածախ առևտրականներին

Բանկերը վարկավորում են ավտոմեքենաների, կենցաղային տեխնիկայի, կահույքի և երկարատև օգտագործման այլ ապրանքների ապառիկ վաճառքը՝ դեբիտորական պարտավորությունը ֆինանսավորելու ծանապարհով, որը առաջանում է նշված ապրանքների դիլերների մոտ, երբ նրանք ձևակերպում են այս կամ այն ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագիրը: Այս պայմանագրերը վերլուծվում են բանկի կողմից և դրական եզրակացության դեպքում վարկավորվում, վարկի տոկոսադրույքը տատանվում է կախված ռիսկի չափից, ապահովվածության աստիճանից և վարկավորման ժամկետից:

Ակտիվներով ապահովված վարկեր

Վարկեր, որոնք ըստ վարկային պայմանագրի ապահովված են կազմակերպության կամ ձեռնարկության բարձր իրացվելի ակտիվներով, որոնք առաջիկայում պետք է վերածվեն կանխիկ փողի:

Նման ակտիվների թվին են պատկանում դեբիտորական պարտավորությունները, հումքի պաշարները, պատրաստի արտադրանքը: Օրինակ՝ [բանկը](#) կարող է ձեռնարկությանը վարկ տրամադրել վերջինիս ապրանքանյութական պաշարների 35%-ի չափով, որոնց վաճառքից գույացած գումարի մի մասը կուղղվի վարկի և տոկոսի մարմանը:

Դեբիտորական պարտավորություններով և ապրանքանյութական արժեքներով ապահովված վարկավորման պայմանագրի համաձայն, վարկառուն պահպանում է նշված ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը, բայց երբեմն այդ իրավունքը անցնում է բանկին, որը ենթադրում է այն ռիսկի փոքրացում, որ որոշ ակտիվներ չեն վաճառվի սպասվող գներով: Տվյալ համաձայնագրի տիպիկ օրինակը ՖԱԿՏՈՐԻՆԳՆ է, որի դեպքում բանկը իր վրա է վերցնում հաճախորդի դեբիտորական պարտավորության գանձումը: Տվյալ դեպքում հաճախորդի դեբիտորներին տեղեկացվում է, որ նրանք իրենց պարտքերը պետք է փոխանցեն բանկին: Քանի որ ֆակտորինգի դեպքում բանկը կրում է լրացուցիչ ռիսկ և ծախսեր, նա սովորաբար կիրառում է ավելի բարձր տոկոսադրույք և վարկ է տալիս հաճախորդի դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի դիսկոնտավորված մասով:

Երկարաժամկետ վարկեր կազմակերպություններին և ձեռնարկություններին

Երկարաժամկետ վարկերը նախատեսվում են երկար և միջին ժամկետային ներդրումների ֆինանսավորման համար՝ շինությունների և սարքավորումների ձեռքբերման նպատակով: Սովորաբար վարկառուն դիմում է խոշոր վարկի խնդրանքով՝ ելնելով տվյալ նախագծի նախահաշվային ծախսերից և պարտավորվում է այն մարել մասնակի վճարումներով: Մարման գրաֆիկը որոշվում է վարկառուի սպասվելիք դրամական հոսքերի մուտքերով: Որպես նմանատիպ վարկերի վերադարձելիության ապահովվածություն սովորաբար հանդես են գալիս

վարկառուի հիմնական միջոցները (շենքեր և սարքավորումներ) և դրանց համար սահմանված է «ֆիքսված» կամ «լողացող» տոկոսադրույք, որը սովորաբար գերազանցում է կազմակերպություններին տրվող կարծաժամկետ վարկերի տոկոսադրույքը, քանի որ երկարաժամկետ վարկերի ռիսկը բարձր է և նմանատիպ վարկեր տալու համար բանկի կողմից պետք է կատարվի վելուծական մեծ աշխատանք, որը իր մեջ պետք է ներառի.

- կառավարիչների որակավորման մակարդակի ուսումնասիրումը
- հաճախորդի կողմից օգտագործվող հաշվապահական հաշվառման և աուդիտային համակարգի ուսումնասիրումը
- ներկայացված ֆինանսական հաշվետվությունների ճշտության ուսումնասիրումը
- իր ակտիվներն այլ բանկերում գրավ չդնելու վերաբերյալ հաճախորդի համաձայնության առկայությունը
- շուկայի պահանջարկի և առաջարկի հետազոտությունը
- վարկառուի սեփական կապիտալի չափի և կազմի ուսումնասիրումը:

Ռեզիդենտ վարկավորում (վարկային գիծ)

Ռեզիդենտ վարկային գիծը թույլ է տալիս վարկառու կազմակերպությանը պարտք վերցնել որոշակի սահմաններում, մարել պարտավորությունն ամբողջությամբ կամ նրա մի մասը և անհրաժեշտության դեպքում կրկին փոխառություն վերցնել վարկային գծի գործողության ժամկետի և մեծության սահմաններում:

Լիցենզիվ կազմակերպությունների վարկավորման ամենաձկուն ձևերից մեկը՝ ռեզիդենտ վարկը հաճախ տրամադրվում է առանց հատուկ ապահովվածության և կարող է լինել կարծաժամկետ կամ տրվել 3 - 5 տարի ժամկետով: Վարկի տվյալ ձևը շատ հաճախ օգտագործվում է այն դեպքում, երբ հաճախորդը չի կարողանում հստակ որոշել ապագա ծախսերի ու մուտքերի ճշտությունը: Այս վարկը թույլ է տալիս հարթել ձեռնարկության արտադրական ցիկլի տատանումները՝ հնարավորություն տալով պարտք վերցնել իրացման ծավալների կրճատման ժամանակաշրջանում և մարել վարկը այդ ծավալների ավելացման հատվածում: Եթե բանկն իր վրա է վերցնում վարկային գծի գումարի սահմաններում հաճախորդի յուրաքանչյուր հայտի բավարարումը, նա սովորաբար գանձում է կոմիսիոն վճարներ վարկային գծի չօգտագործված մասից:

Երկարաժամկետ նախագծային վարկեր

Նախագծային վարկերը ձեռնարկություններին տրվող ամենառիսկային վարկերն են, որ տրվում են հիմնական միջոցները համալրելու համար, որոնք էլ իրենց հերթին ապագայում ապահովելու են դրամական հոսքեր: Նման վարկերից են օրինակ՝ նավթ վերամշակող գործարանների, էլեկտրակայանների, հանքահորերի, նավահանգիստների, մետալուրգիական գործարանների հիմնադրման, վերակառուցման կամ վերագինման համար տրամադրվող վարկերը: Նմանատիպ վարկերի ռիսկերը նշանակալի և բազմազան են:

- Ենթադրվում է ահռելի մեծ գումարների տրամադրում և ներդրում:
- Քանի որ նախագծերի իրականացումը բավականին երկար ժամանակ է պահանջում (մի քանի, նույնիսկ տասնյակ տարի), ապա կա հավանականություն, որ ֆինանսավորվող նախագծի իրականացումը ենթարկվի հետաձգումների՝ կապված քաղաքական, տնտեսական, բնական պայմանների փոփոխությունների հետ:
- Օրենսդրական դաշտի հնարավոր փոփոխությունների հնարավոր ազդեցություն:
- Ապագայում [տոկոսադրույքների](#) հնարավոր փոփոխություններ:

Նախագծային վարկեր հաճախ տրամադրվում են մի քանի ձեռնարկությունների մի քանի բանկերի կողմից (համատեղ ֆինանսավորում):

2.2.5. Ֆիզիկական անձանց վարկեր կամ սպառողական վարկեր

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում բանկերը սպառողական շուկայում դարձան հիմնական վարկատուներ: Բանկերի գերիշխող դիրքը մասամբ այն բանի հետևանք է, որ վերջիններս ամենաշատն են շահագրգռված առանձին անձանց և ընտանիքների միջոցները ներգրավելու մեջ, որը հենց իրենց՝ բանկերի միջոցների հիմնական աղբյուրն է: Մյուս կողմից, վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ սպառողական վարկերը ամենաշահութաբեր վարկերից մեկն են, որը կարող է տալ բանկը: Դա է պատճառը, որ աշխարհի խոշորագույն բանկերը իրենց ռեսուրսների ավելի ու ավելի մեծ մաս են տրամադրում ֆիզիկական անձանց սպասարկմանը, հատկապես վարկային քարտերի մարկետինգին, բնակարանների գրավով ապահովված վարկերին և սպառողներին էլեկտրոնային ծառայություններ մատուցելուն, ինչպես նաև ավտոմեքենաների, շարժական տների, կենցաղային ապրանքների, տների վերանորոգման և վերակառուցման, բժշկական ծառայությունների և այլ անձնական ծախսերի համար, որոնք տրվում են ուղղակի բնակչությանը: Ընդ որում, այս վարկերը տրամադրվում են անմիջապես ֆիզիկական անձանց կամ անուղղակի ձևով՝ տարբեր դիլերների միջոցով:

Նման վարկերը հիմնականում տրվում են ձեռք բերվող գույքի, առարկայի գրավով, [հիփոթեքի](#) (անշարժ գույքի գրավադրում) տեսքով, կամ թանկարժեք իրերի գրավադրմամբ:

Առանձին անհատներին և ընտանիքներին տրվող վարկերի տեսակները

Գոյություն ունեն սպառողական վարկի մի քանի տեսակներ և դրանց թիվը գնալով աճում է: Այնուամենայնիվ մենք սպառողական վարկերը կդասակարգենք հետևյալ ձևով.

- Վարկեր, որոնք տրվում են մոր տներ, բնակարաններ ձեռք բերելու համար, այսինքն բնակարանների գրավով ապահովված վարկեր:
- Հաճախորդին այլ նպատակներով կամ այլ գործունեության ֆինանսավորում՝ արձակուրդների անցկացում, ավտոմեքենաների և կենցաղային սարքավորումների ձեռքբերում և այլն:

2.2.6. Բնակարանների գրավով ապահովված վարկեր

Բնակարանների գրավով ապահովված վարկեր ասելով հասկանում ենք տուն գնելու կամ բնակարանային պայմանները բարելավելու նպատակով տրված վարկերը: Բնակարան ձեռք բերելը ենթադրում է երկարաժամկետ 15 - 30 տարի ժամկետով և տվյալ անշարժ գույքով ապահովված վարկի տրամադրումը: Նշված վարկերի գծով տոկոսադրույքները լինում են կամ ֆիքսված, կամ «լողացող»: Տոկոսադրույքի փոփոխությունը կախված է բազային տոկոսադրույքի փոփոխությունից և իրականացվում է նրան զուգահեռ: Բազային տոկոսադրույք կարող են հանդիսանալ պետական զանձապետական մուրհակների տոկոսադրույքը, կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը և այլն:

2.2.7. Այլ նպատակներով տրվող վարկեր

Այս տիպի վարկերն ընդգրկում են տարաժամկետ և միանվագ մարվող վարկեր:

Տարաժամկետ մարվող վարկերը կարճաժամկետ և միջին ժամկետային վարկեր են, որոնք մարվում են 2 և ավելի վճարումներով՝ սովորաբար ամիսը կամ եռամսյակը մեկ անգամ: Նման վարկերը սովորաբար տրվում են մեծարժեք ապրանքների գնման կամ ընտանիքի պարտքի կոնսոլիդացման նպատակով: Չնայած նշված վարկերի գծով սովորաբար սահմանվում է ֆիքսված տոկոսադրույք, սակայն ավելի մեծ տարածում են գտնում «լողացող» տոկոսադրույքները: Վերջին տարիներին շատ բանկեր տրամադրել են տարաժամկետ մարվող վարկեր դուստր ֆինանսական ընկերությունների միջոցով, որոնք մտնում են բանկային հոլդինգային ընկերությունների կազմում: Տվյալ սխեմայի առավելությունը նրանում է, որ այս դեպքում նախ չկան տարածքային սահմանափակումներ և երկրորդ՝ տվյալ ֆինանսական ընկերությունը կարող է տրամադրել ավելի ռիսկային վարկեր՝ ավելի բարձր տոկոսադրույքներով:

2.2.8. Միանվագ մարվող վարկեր

Ֆիզիկական անձանց և ընտանիքներին տրվող կարճաժամկետ վարկերը, որոնք մարվում են ժամկետի վերջում ամբողջ գումարով, հայտնի են միանվագ մարվող վարկեր անվամբ: Նման վարկերը կարող են տրվել համեմատաբար փոքր չափերով (500 – 1,000 ԱՄՆ դոլար գումարին համարժեք): Մշտական և բարձր եկամուտ ունեցող անձանց հնարավոր է տալ մինչև 10,000 ԱՄՆ դոլարի սահմաններում: Տվյալ վարկերը սովորաբար օգտագործվում են բժշկական սպասարկման, կենցաղային տեխնիկա ձեռք բերելու, ավտոմեքենաներ և տներ վերանորոգելու հետ կապված ծախսերը փակելու համար:

2.2.9. Վարկային քարտերով տրամադրվող վարկեր

Սպառողական վարկի ամենահայտնի ժամանակակից ձևերից մեկը վարկային քարտով տրամադրվող վարկն է, որոնք (քարտերը) թողարկվում են «Վիզա», «Մաստեր Զարտ» և մի քանի այլ ընկերությունների կողմից: Նման քարտ ունեցողները կարող են օգտվել և տարաժամկետ և միանվագ մարվող վարկերից: Բանկերի համար ավելի ձեռնտու է տարաժամկետ մարումը: Բանկային վարկային քարտերը հարմար գործիք են և հաճախորդին հնարավորություն են տալիս օգտվելու ռեզիդենտ վարկային գծի հնարավորությունից, սակայն նկատի ունենալով այն համաճանձմը, որ ավելացել են անվճարումակ փոխառումները և զոդացած ու օգտագործած վարկային քարտերը, բանկերի համար կենսական խնդիր է դարձել վարկային քարտեր թողարկելու ծրագրերը արդյունավետ ձևով կառավարելն ու վերահսկելը:

Չնայած դրան, վարկային քարտերը լավ հեռանկարներ ունեն կապված վճարա-հաշվարկային տեխնոլոգիաների զարգացման և օգտագործման ընդլայնման հետ:

2.2.10. Այլ վարկեր

Որոնք նշված չեն վերևում: Օրինակ՝ վարկեր պետությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, բյուջետային կազմակերպություններին, արժեթղթերով ապահովված վարկեր:

2.2.11. Անուղղակի վարկեր

Միջազգային բանկային պրակտիկայում ընդունված են մեկ անուղղակի վարկավորման ձևեր, որոնք ընդլայնում են բանկի կողմից հաճախորդներին մատուցվող վարկային ծառայությունների ցանկը, բանկային սպասարկումը հաճախորդի համար դարձնելով առավել դյուրին և շահավետ: Հաճախորդի սպասարկման այս ձևերն ունեն իրենց անվանումը՝ «gross saling», ինչը նշանակում է, որ հաճախորդին ոչ թե նրա պահանջած մեկ ծառայություն է մատուցվում, այլ ծառայությունների համախումբ, ինչն առավել թեթևացնում է հաճախորդի գործը: Պրակտիկայում ընդունված անուղղակի վարկավորման ձևերից են լիզինգը, ֆակտորինգը:

Լիզինգն իր հերթին բաժանվում է ֆինանսական (կապիտալ) լիզինգի և օպերացիոն լիզինգի:

Ֆինանսական լիզինգը ենթադրում է, որ բանկը վարձակալի պատվերով ձեռք է բերում մեքենաներ ու սարքավորումներ և վարձակալությամբ տրամադրում իր հաճախորդներին: Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով՝ վարձատուն (բանկը) պարտավորվում է վարձակալի (հաճախորդի) նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշած վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպա-

տակներով օգտագործելու համար: Ֆինանսական լիզինգի պայմանագրի առարկա կարող է լինել ձեռնարկատիրական գործունեության համար օգտագործվող ցանկացած չսպառվող գույք: Հետագայում՝ ֆինանսական լիզինգի պայմանագրի գործողության ժամանակաընթացքում վարձակալը (հաճախորդը) տոկոսագումարի հետ միասին կատարում է նաև վարձակալված գույքի արժեքի մասնակի վճարումներ և վերջնական արդյունքում՝ հետ գնում վարձակալված գույքը վարձատուից, այսինքն ֆինանսական լիզինգի պայմանագիրը վարձակալին տալիս է վարձակալված գույքի հետգնման իրավունք:

Գործառնական լիզինգ դեպքում բանկը գնում է իր հաշվին մեքենաներ և սարքավորումներ և այլ գույք և վարձավճարով հանձնում տնտեսվարող սուբյեկտներին: Այս դեպքում լիզինգի պայմանագիրը ենթադրում է գույքի օգտագործում և տնօրինում առանց վարձակալված գույքի հետգնման իրավունքի:

Ֆակտորինգի դեպքում դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրով մի կողմը (ֆինանսական գործակալը՝ ֆակտորը) մյուս կողմին (հաճախորդին) հանձնում կամ պարտավորվում է հանձնել դրամական միջոցներ՝ ի հաշիվ հաճախորդի (վարկատուի) երրորդ անձից (պարտապանից) ունեցած դրամական պահանջի, որը բխում է հաճախորդի կողմից՝ երրորդ անձին ապրանքներ տրամադրելուց, նրա համար աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց, իսկ հաճախորդը ֆինանսական գործակալին զիջում է կամ պարտավորվում է զիջել այդ դրամական պահանջը: Որպես ֆինանսական գործակալ՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրեր կարող են կնքել բանկերը և այլ վարկային կազմակերպությունները: Ֆակտորինգի դեպքում ֆինանսական գործակալն անմիջապես վճարում է հաճախորդին պարտքի 70 - 90%-ը, միաժամանակ իր վրա վերցնելով պարտքի գանձումը պարտապանից և պարտք չմարելու ռիսկը: Պարտքը ստանալուց հետո ֆակտորը մնացած գումարը հանձնում է հաճախորդին՝ պահելով իր ծառայության վարձը՝ ֆակտորինգային միջնորդավճարը: Պարտապանի նկատմամբ դրամական պահանջը հաճախորդը կարող է ֆինանսական գործակալին զիջել նաև վերջինիս հանդեպ իր պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով:

Պայմանագրով ֆինանսական գործակալի պարտավորությունները կարող են ներառել նաև հաճախորդի համար այլ ծառայությունների մատուցումը (հաշվապահական հաշվառում վարելը, տեղեկատվական, ապահովագրական, խորհրդատվական և այլն), որոնք կապված են հաճախորդի՝ զիջման առարկա համարվող դրամական պահանջների հետ: Ֆակտորինգային գործառնությունը հաճախորդին թույլ է տալիս արագացնել միջոցների շրջապտույտը, վերաֆինանսավորել դեբիտորական պարտքը՝ կարճատև ժամկետներում: Տարբերվում են ժամկետային ֆակտորինգ և զեղչով ֆակտորինգ (հաշիվ - ֆակտուրաների հաշվառում):

Այսուամենայնիվ, յուրաքանչյուր բանկի վարկային պորտֆելի կառուցվածքն ունի իր առանձնահատկությունները: Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքը բնորոշող առանցքային գործոններից մեկը հանդիսանում է ֆինանսական շուկայում բանկի կողմից սպասարկվող ոլորտի յուրահատկությունը: Բանկը պարտավոր է հաշվի առնել իր կողմից սպասարկվող ֆինանսական շուկայի հաճախորդների կողմից փոխառու միջոցների պահանջները: Բանկը, որը սպասարկում է մեծքաղաքային շրջան՝ բնակեցված մեծ քանակությամբ փոքրիկ առանձնատներով և խանութ -տաղավարներով, հիմնականում տրամադրում է հիփոթեքային վարկեր՝ բնակելի տարածքների գրավով, ավտոմեքենաների, կենցաղային տեխնիկայի գնման, տնային տնտեսության ծախսերի ծածկման համար: Ի հակադրություն դրա, մեկ այլ բանկ, որն իր գործունեությունն իրականացնում է խոշոր քաղաքում՝ շրջապատված գրասենյակներով, հանրախանութներով, արդյունաբերական ձեռնարկություններով, սովորաբար վարկերը տրամադրում է առևտրային կազմակերպություններին ապրանքահոմքային պաշարների լրացման, սարքավորումների ձեռքբերման, աշխատավարձի վճարման նպատակով:

Այսպիսով, բանկերի կողմից առաջարկվող վարկերի տեսակները հիմնականում կախված են բանկի գործունեության տարածաշրջանի տնտեսական յուրահատկություններից և վիճակից, (քաղաք, գյուղ, արդյունաբերության տեսակները), բանկի մեծությունից:

Վարկավորման հիմնական նպատակը շահույթ ստանալն է: Վարկավորման տեսակն ընտրելիս կարևոր է վարկի տոկոսադրույքի որոշումը, վարկի և տոկոսի մարման գրաֆիկը, ինչպես նաև վարկավորման ռիսկը:

Վարկային պորտֆելի ձևավորման ընթացքում կարևորվում է դիվերսիֆիկացիայի հիմնախնդիրը: Բանկն իր վարկային գործունեությունը պլանավորելիս պետք է ընտրի այնպիսի ռազմավարություն, որ կախում չունենա տնտեսության մեկ ճյուղից, մեկ փոխառուից, կամ առավել զգույշ պետք է լինի բանկի հետ կապված անձանց վարկավորելիս:

Բանկի վարկային պորտֆելը ենթակա է մշտական կարգավորման, քանի որ վարկային ներդրումները բանկի գործունեության ամենատարածված ակտիվային գործառնություններն են և վարկային պորտֆելի որակը ավելի, քան բանկային այլ ծառայությունների որակ, կարևոր է ռիսկի գնահատման և բանկի հուսալիության ապահովման գործում: Այս առումով, որոշակի վարկերի տրամադրումը սահմանափակված է կամ օրենսդրությամբ արգելված է: Օրինակ, սահմանափակված է բանկի հետ փոխկապակցված անձանց տրամադրվող վարկերի ծավալը, բանկերին արգելվում է տրամադրել փոխառություններ, որոնք ապահովված են իրենց սեփական բաժնետոմսերով: ԱՄՆ-ում օրինակ Ազգային բանկերի կողմից տրամադրվող հիփոթեքային վարկերի չափը չի կարող գերազանցել բանկի կապիտալի մեծությունը:

Վարկային պորտֆելի որակը և վարկային քաղաքականության խելամտությունը համարվում են բանկի գործունեության կարևոր բնագավառները:

2.3. Բանկային վարկավորման սկզբունքները

Ցանկացած դեպքում բանկային վարկավորումն իրականացվում է վարկավորման սկզբունքների խստագույն պահպանման պայմաններում: Այդ սկզբունքներն իրենցից ներկայացնում են վարկավորման համակարգի հիմքը, քանի որ արտացոլում են վարկի էությունն ու բովանդակությունը:

Վարկավորման սկզբունքներն են.

- վարկի վերադարձելիության ժամկետայնությունը
- դիֆերենցվածությունը
- ապահովվածությունը
- վճարելիությունը

Վերադարձելիությունը վարկի անբաժանելի մասն է: Վարկի *ժամկետայնությունը* վարկի վերադարձելիության անհրաժեշտ պայմանն է: Ժամկետայնության սկզբունքը ենթադրում է, որ վարկը ոչ միայն պետք է հետ վերադարձվի, այլև պետք է հետ վերադարձվի վարկային պայմանագրով սահմանված ժամկետում:

Վարկի ժամկետն այն առավելագույն ժամանակն է, որի ընթացքում վարկի ձևով փոխ առնված միջոցները գտնվում են վարկառուի տիրապետման, տնօրինման և օգտագործման ներքո: Այդ ժամկետը խախտելու դեպքում խեղաթյուրվում է վարկի էությունը, այն կորցնում է իր նշանակությունը, որն էլ, իր հերթին, բացասաբար է ազդում վարկատու բանկի իրացվելիության և ֆինանսական արդյունքների ինչպես նաև տնտեսության մեջ դրամաշրջանառության վրա:

Յուրաքանչյուր վարկառուի համար այս սկզբունքի պահպանումն ապահովում է բանկից նոր վարկերի ստացման և, հետևաբար, անընդհատ գործունեության ապահովման հնարավորությունը:

Ժամկետայնության սկզբունքի նշանակությունը կայանում է հետևյալում.

1. Նախ այս սկզբունքի պահպանումից կախված է վերարտադրության գործընթացի դրամական միջոցներով նորմալ ապահովումը:
2. Այս սկզբունքի պահպանումն անհրաժեշտ է բանկերի իրացվելիության ապահովման համար:
3. Յուրաքանչյուր փոխառուի համար այս սկզբունքի պահպանումն ապահովում է բանկից նոր վարկերի ստացումը և հետևաբար անընդհատ գործունեության ապահովումը:

Վարկավորման դիֆերենցվածությունը կամ վարկավորման նկատմամբ տարբերակված մոտեցման կիրառումը նշանակում է, որ առևտրային բանկերը պարտավոր չեն միանշանակ մոտենալ հաճախորդներին վարկավորելու հարցին: Վարկը պետք է տրամադրվի այն կազմակերպություններին կամ անհատներին, որոնք ի վիճակի են այն ժամանակին հետ վերադարձնել: Այդ իսկ պատճառով վարկավորման դիֆերենցվածությունը պետք է իրականացվի վարկունակության ցուցանիշների հիման վրա, այսինքն պետք է հաշվի առնվի փոխառուի ֆինանսական վիճակը, վարկը ժամկետին հետ վերադարձնելու ունակությունը:

Պոտենցիալ փոխառուի նշված հատկանիշները գնահատվում են նրանց հաշվեկշռի, իրացվելիության և շահութաբերության վերլուծության առումով: Նախքան վարկային պայմանագրի կնքումը բանկերի կողմից իրականացվող վարկի չմարման ապահովագրական պոլիսը:

Վարկի ապահովվածության սկզբունքը նշանակում է, որ վարկերը պետք է տրվեն որոշակի ապրանքանյութական արժեքների գրավի կամ այլ ապահովության դիմաց: Միջազգային բանկային պրակտիկայում որպես վարկի ապահովվածություն հանդես են գալիս ոչ միայն ապրանքանյութական արժեքները, այլև վճարունակ կազմակերպությունների կամ անձանց կողմից տրված երաշխիքները, ինչպես նաև վարկառուի կողմից ներկայացվող վարկի չմարման ապահովագրական պոլիսը:

Պարտավորությունների, այդ թվում վարկային պայմանագրով վարկառուի պարտավորությունների կատարման ապահովման եղանակները սահմանվում են երկրի քաղաքացիական օրենսդրությամբ:

Վճարելիության սկզբունքը նշանակում է, վարկային պայմանագիրը հատուցելի պայմանագիր է, այսինքն՝ տրամադրած վարկի գումարից բանկը փոխառուից (վարկառուից) զանձում է որոշակի վճար՝ տոկոսների ձևով: Այս սկզբունքը գործնականում իրագործվում է բանկային (վարկային) տոկոսադրույքի մեխանիզմի միջոցով: Յուրաքանչյուր բանկ ինքն է սահմանում իր կողմից վարկերի տրամադրման կարգը և պայմանները, ներառյալ վարկերի տոկոսադրույքները: Վարկային պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Բանկային տոկոսադրույքը փաստորեն վարկի «գինն» է: Վարկի դիմաց վճարման սկզբունքը խթանիչ ազդեցություն է թողնում տնտեսական մարմինների գործունեության վրա՝ ստիպելով նրանց ավելացնել սեփական միջոցների ծավալը և ավելի խնայողաբար օգտագործել ներգրավված միջոցները:

Բանկի համար վճարելիության սկզբունքն ապահովում է ստացված տոկոսագումարի հաշվին ներգրաված միջոցների դիմաց վճարվող տոկոսային ծախսերի, բանկի վարչակառավարչական և ընթացիկ ծախսերի ծածկում և շահույթի ստացումը:

Ներկայումս բանկերի կողմից բանկային տոկոսադրույքը որոշվում է, ելնելով հետևյալ հիմնական գործոններից.

- կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերին տրամադրվող վարկերի բազային տոկոսադրույքից
- միջբանկային վարկերի գծով միջին տոկոսադրույքից
- բանկի կողմից ներգրավված միջոցների (ավանդներ, դեպոզիտներ) դիմաց վճարվող միջին տոկոսադրույքից
- վարկային ռեսուրսների նկատմամբ պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունից

- բանկի վարկային ռեսուրսների կառուցվածքից - ինչքան մեծ է ներգրավված միջոցների տեսակարար կշիռը, այնքան բանկ պետք է լինի վարկը
- տնտեսության կողմից վարկային ռեսուրսների նկատմամբ պահանջից - ինչքան քիչ է պահանջարկը, այնքան վարկն էժան է
- պահանջվող վարկի ժամկետից և ապահովվածությունից
- երկրի ներսում դրամաշրջանառության կայունությունից - ինչքան բարձր է արժեզրկման տեմպը, այնքան վարկի տոկոսադրույքը բարձր է:

Տոկոսադրույքը կարող է լինել հաստատագրված կամ լողացող (փոփոխական)՝ կախված հիմնական դրույքի մեծության փոփոխությունից: Որոշումն այն մասին, թե ինչպիսի տոկոսադրույք (հաստատագրված, թե՛ լողացող) պետք է ամրագրել վարկային պայմանագրում, ընդունվում է բանկի և հաճախորդի համաձայնությամբ: Փորձառու վարկատուները կարող են տոկոսադրույքի ձևի ճիշտ ընտրության միջոցով այդ չափով իրենց ապահովագրել շուկայական իրավիճակի անբարենպաստ փոփոխություններից: Սակայն երկարաժամկետ վարկերի գծով բանկերը, որպես կանոն, գերադասում են լողացող, իսկ վարկառուները՝ հաստատագրված [տոկոսադրույքները](#):

2.4. Վարկային հարաբերությունների իրավական կարգավորումը

[Վարկային ռիսկի](#) արդյունավետ կառավարման, վարկային գործարքի մասնակիցների շահերի պաշտպանության նախադրյալներից է գործող օրենսդրությանը քաջատեղյակ լինելը, վարկատու բանկերի վարկային գործունեությամբ զբաղվող աշխատակիցների և վարկառուների բարձր իրավական մշակույթի մակարդակը:

Վարկատուների և վարկառուների (փոխառուների) միջև իրավական հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական և բանկային օրենսդրություններով, ինչպես նաև կողմերի միջև կնքված վարկային պայմանագրով և բանկերի ներքին կանոններով:

Քաղաքացիական օրենսդրությամբ սահմանվում են քաղաքացիական (այդ թվում՝ վարկային) իրավահարաբերությունների մասնակիցների (սուբյեկտների) իրավունակությունը, այդ հարաբերությունների ծագման հիմք հանդիսացող պայմանագրերին (այդ թվում՝ վարկային պայմանագրին) ներկայացվող պահանջները, պարտավորությունների կատարման ապահովման եղանակները, պատասխանատվությունը պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար և այլն:

Քաղաքացիական օրենսդրությունը կազմված է տվյալ երկրի քաղաքացիական օրենսգրքից և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներից: Բանկային օրենսդրությամբ (օրենքներ, Կենտրոնական բանկի կանոնակարգեր, կարգեր, հրահանգներ, այլ իրավական ակտեր) սահմանվում են բանկերի՝ որպես վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման և վերահսկողության կարգն ու պայմանները:

Վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

Ինչպես բխում է վարկի իրավաբանական բնորոշումից, վարկային իրավահարաբերությունների մասնակիցներն են վարկատուները և վարկառուները: Որպես վարկատու կարող են հանդես գալ բանկերը և այլ վարկային կազմակերպությունները (օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում՝ վարկային կազմակերպությունները, գրավատները, գյուղատնտեսական վարկային ակումբները):

Հաշվի առնելով բանկերի՝ [ավանդներ](#) ներգրավելու բացառիկ, մենաշնորհային իրավունքը և դրանով պայմանավորված ավանդատուների շահերի պաշտպանության կարևորությունը, օրենքով սահմանվում են «բանկ» և «բանկային գործունեություն» հասկացությունները:

Վարկատու բանկերն են երկրի տարածքում գործող բանկերը և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը, որոնք բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ են իրականացնում օրենսդրությամբ սահմանված կարգով կենտրոնական (ազգային) բանկի կողմից տրված բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա:

Որպես վարկառու՝ բանկային վարկավորման հարաբերությունների սուբյեկտներ կարող են հանդես գալ քաղաքացիական իրավունակություն ունեցող իրավաբանական անձինք և այն քաղաքացիները, որոնք գործունակ են, ունեն նյութական կամ այլ երաշխիքներ՝ կատարելու տնտեսական, այդ թվում՝ վարկային գործարքներով ստանձնած պարտականությունները (ժամանակին վերադարձնելու վարկը և վճարելու դրա դիմաց հաշվարկված տոկոսները):

Համաձայն գործող օրենսդրության, վարկատու կազմակերպությունների հետ վարկային գործարքներ կարող են կնքել տվյալ երկրի քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք և իրավաբանական անձինք (այդ թվում՝ բանկերը), ինչպես նաև պետությունը և համայնքները:

Բանկային օրենսդրությամբ, մասնավորապես, սահմանվում են նորմեր, որոնք սահմանափակում են վարկային ռիսկը, իրականացվում են բանկերի կողմից տրամադրված վարկերի դասակարգումը, հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը և դրա հաշվին անհուսալի ճանաչված վարկերի դուրսգրումը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ովքե՞ր են վարկային պայմանագրի մասնակիցները կամ վարկային հարաբերությունների սուբյեկտները:
2. Ինչո՞վ են կարգավորվում վարկային իրավահարաբերությունները:
3. Ըստ ի՞նչ չափանիշների կարելի է դասակարգել բանկային վարկերը:
4. Ի՞նչ խմբերի են դասակարգվում վարկերը ըստ օգտագործման նպատակի, ինչպե՞ս կարելի է բնութագրել վարկերի յուրաքանչյուր տեսակը ըստ այդ հատկանիշի:
5. Ո՞րն է [հիփոթեքի](#) իրավաբանական բնորոշումը, որո՞նք են այն կարգավորող հիմնական կանոնները:
6. Ի՞նչ գործոններ են ազդում բանկի վարկային պորտֆելի ձևավորման վրա:
7. Որո՞նք են բանկային վարկավորման հիմնական սկզբունքները և ինչպե՞ս կարելի է բնութագրել դրանցից յուրաքանչյուրը:
8. Ի՞նչ գործոններ են ազդում բանկային վարկի տոկոսադրույքների ձևավորման վրա:
9. Ինչո՞վ են կարգավորվում վարկային իրավահարաբերությունները:

Թեմա 3. Բանկային վարկավորման համակարգը: Վարկային քաղաքականությունը և վարկավորման տեխնիկան: Վարկային ռիսկի կառավարումը

Սույն թեմայում ներկայացվում են բանկային վարկավորման համակարգը, մանրամասն քննարկվում են այդ համակարգը ձևավորող տարրերը: Ներկայացվում են վարկավորման գործընթացը կարգավորող մարմինները և նրանց գործառնություններն այդ բնագավառում:

Բացահայտվում են նաև վարկավորման քաղաքականության բաղկացուցիչ մասերը և վարկավորման ընդհանուր տեխնիկան:

Թեմայի նպատակն է՝ բնութագրել վարկային ռիսկը, ներկայացնել դրա վրա ազդող գործոնները, վարկառուի վարկունակության գնահատման եղանակները և վարկային ռիսկի կառավարումը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ունենողիները կկարողանան՝

- ներկայացնել վարկավորման համակարգը և նրա բաղկացուցիչ տարրերը
- ներկայացնել վարկային գործընթացը կարգավորող մարմինները և կարգավորման ձևերը
- բնութագրել բանկի վարկային քաղաքականությունը
- ներկայացնել վարկավորման ներքին ստանդարտները
- ներկայացնել վարկավորման փուլերը
- բնութագրել վարկային ռիսկը
- ներկայացնել վարկային ռիսկի վրա ազդող հիմնական գործոնները
- բնութագրել վարկառուի վարկունակությունը
- ներկայացնել վարկառուի վարկունակության իրավական, ճյուղային, ֆինանսական, կառավարչական և վարկի ապահովվածության կողմերը
- ներկայացնել վարկային ռիսկի ազդեցությունը վարկային պորտֆելի վրա
- բնութագրել վարկային ռիսկի կառավարման մեթոդները
- ներկայացնել վարկառուի ֆինանսական վիճակի գնահատականը տվող չափանիշները:

3.1. Բանկային վարկավորման համակարգը

Վարկավորման գործընթացում հարաբերությունները կառուցվում են որոշակի համակարգով:

Բանկային վարկավորման համակարգ ասելով հասկացվում է վարկավորման գործընթացի կազմակերպումը որոշող տարրերի ամբողջությունը, և նրա կարգավորումը վարկավորման սկզբունքների համապատասխան:

Վարկավորման համակարգի տարրերն են.

- *վարկային գործառնությունում վարկառուի սեփական միջոցների մասնակցության աստիճանը և կարգը.* – Շուկայական պայմանները ձեռնարկություններին և տնտեսավարող օբյեկտներին ստիպում են առավելագույնս օգտագործել սեփական միջոցները, իսկ ներգրավված միջոցների նկատմամբ կրել լիակատար պատասխանատվություն: Ձեռնարկության շրջանառության մեջ գտնվող սեփական միջոցների մեծությունը բավական ազդեցություն է թողնում տրամադրվելիք վարկի գումարի չափի որոշման վրա, այսինքն մի շարք ցուցանիշների հիման վրա որոշվում է վարկառուի դասն ըստ վարկունակության աստիճանի:

- *վարկի նպատակը*
- *վարկավորման մեթոդները* - Գոյություն ունի վարկավորման երկու մեթոդ.
- Վարկավորման հարցը որոշվում է յուրաքանչյուր անգամ որպես առանձին հարց: Վարկը տրամադրվում է որոշակի նպատակով և որոշակի ժամկետով:

- Վարկը տրամադրվում է վարկատուի կողմից վարկառուի համար նախօրոք սահմանված լիմիտների սահմաններում, որը նրա կողմից օգտագործվում է ըստ պահանջի՝ ներկայացրած վճարման ենթակա փաստաթղթերի հիման վրա և այդ լիմիտը գործում է որոշակի ժամանակամիջոցի ընթացքում: Այս մեթոդը կոչվում է *վարկային գծի տրամադրում*: Տարբերվում են նորացվող (ռեկվերային) և չնորացվող վարկային գծեր:

- *վարկային հաշիվների ձևերը.*
հատուկ վարկային հաշիվ - այս հաշիվները բացվում են այն կազմակերպությունների համար, որոնց գործունեությունը հիմնականում իրականացվում է վարկային միջոցների հաշվին: Գործունեությունից ստացված բոլոր դրամական մուտքերն ու եկամուտներն ուղղվում են վարկի մարմանը: Այսպիսով կազմակերպության գործունեությանը զուգընթաց հատուկ հաշիվով անընդհատ իրականացվում է վարկի տրամադրում և մարում:

սովորական վարկային հաշիվ - այս հաշիվներն օգտագործվում են միանգամյա վարկավորման համար:

- վարկային միջոցների նպատակային օգտագործման և ժամկետին հետ վերադարձման գծով վերահսկողության ձևերն ու մեթոդները:

3.2. Վարկավորման գործընթացը կարգավորող մարմինները:

Վարկավորման քաղաքականությունը և տեխնիկան

Բանկի վարկային պորտֆելը և նրա կառավարումը հանդիսանում է բանկի գլխավոր գործունեություններից մեկը:

Վարկային գործունեության գծով ռիսկերի նվազեցման և ժամկետին մարման ապահովման նպատակով վարկավորման ընդհանուր գործընթացը կարգավորվում է մի շարք մարմինների կողմից: Այս կարգավորումը, որը կրում է անուղղակի բնույթ, հիմնականում իրականացվում է օրենքների, օրենսդրական ակտերի, սահմանված զանազան նորմատիվների և այլնի միջոցով:

Այսպես, նախ և առաջ վարկավորման գործընթացը կարգավորվում է պետության կողմից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մի շարք բաժիններ, գլուխներ և հոդվածներ կարգավորիչ դեր ունեն բանկերի կողմից իրականացվող վարկավորման գործընթացում: Օրինակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Պարտավորությունների մասին ընդհանուր դրույթների» բաժինը (Բաժին 6) կարգավորում է վարկային սուբյեկտների միջև ձևավորվող վարկային հարաբերությունները, «Պայմանագրից ծագող պարտավորություններ» բաժինը (Բաժին 7) հիմք է հանդիսանում վարկային հարաբերությունները պայմանագրային հիմունքներով ամրապնդելու համար, «Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ» բաժինը (Բաժին 4) ներկայացնում է գրավի իրավունքը և այլն:

Վարկավորման գործընթացը կարգավորվում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Այս դեպքում որոշակի սահմանափակումներ մտցվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների և ակտիվների ըստ ռիսկերի դասակարգման միջոցով:

Վարկավորման գործընթացը կարգավորող տնտեսական նորմատիվներից են մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը, բանկի հիմնադիրների վարկավորման սահմանափակումները, բանկի հետ կապված մեկ անձի և բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվները, սեփական արժեթղթերով ապահովված վարկերի տրամադրման սահմանափակումները և այլն:

Ընդունված ռիսկայնության նորմատիվներով կարգավորվում են բանկերի վարկավորման ռիսկերը: Օրենքներով և ՀՀ ԿԲ կարգերով սահմանված են վարկերի ռիսկայնության աստիճաններն ըստ ապահովման տեսակների:

Որպես վարկավորման գործընթացի կարգավորման բաղկացուցիչ մաս արտասահմանյան շատ երկրներում գործում են հալախտրականության օրենքներ (մեզ մոտ նման օրենքներ չկան):

Սակայն օրենսդրությամբ և նորմատիվային սահմանափակումները լրիվ բավարար չեն ապահովելու վարկի մարման ապահովումը:

Օրենսդրորեն սահմանափակումների մեծացումը և խստացումը իր հերթին առաջ է բերում վարկավորման դժվարություններ և հանգեցնում է տնտեսական անկման:

Այդ իսկ պատճառով բանկի համար շատ է կարևորվում տվյալ օրենսդրորեն սահմանափակումների շրջանակներում իր վարկային պորտֆելի ճիշտ կարգավորումը, արդյունավետ վարկային քաղաքականության իրականացումը՝ առավելագույն շահույթ և նվազագույն կորուստներ ստանալու գործում:

Այսպիսով վարկավորման գործընթացը կարգավորող հաջորդ մարմինը հանդիսանում է հենց ինքը *Բանկը*:

Բանկային գործունեության գնահատման հիմնական ցուցանիշը բանկի ռեյտինգն է, որը որոշվում է [CAMELS](#) համակարգով.

կապիտալի համարժեքություն	C
ակտիվների որակ	A
կառավարման որակ	M
շահույթ	E
իրացվելիություն	L
զգայունություն	S

Ռեյտինգավորումն իրականացվում է 5 բալային համակարգով: Չորս կան հինգ բալը նշանակում է, որ բանկի ռեյտինգը բարձր է (լավ), իսկ 1, 2, 3 բալերը ցածր ռեյտինգ են համարվում:

Ըստ ակտիվների դասակարգման չափանիշների, վարկերը լինում են *որակով և անորակ (խնդրահարույց)*:

Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի», վարկերն ըստ որակի խմբավորվում են հետևյալ 5 դասերի.

Ստանդարտ	գործակիցը – 0.01 (1%)
Հսկվող վարկեր	գործակիցը – 0,1 (10%)
Ոչ ստանդարտ վարկեր	գործակիցը – 0,2 (20%)
Կասկածելի վարկեր	գործակիցը – 0,5 (50%)
Անուսալի - վնասաբեր վարկեր	գործակիցը – 1,0 (100%)

Գործակցի հաշվարկը կատարվում է, ելնելով տվյալ ակտիվի գծով վարկերի հնարավոր կորստի պահուստաֆոնդին մասհանված գումարի մեծությունից:

Ելնելով վերոհիշյալից, բանկի կողմից մշակված և իրականացվող *վարկավորման քաղաքականությունն* իր մեջ պետք է ներառի և հաշվի առնի հետևյալ տարրերը.

- վարկավորման պայմանները, վարկավորման գործընթացի կազմակերպումը
- վարկերի նկատմամբ [վերահսկողությունը](#)
- վարկային պորտֆելի կառավարումը, այդ թվում՝ պորտֆելի ընդունելի կառուցվածքի սահմանումը
- վարկը հաստատող մարմինների որոշումը, իրավասությունների բաշխման սկզբունքների սահմանումը
- վարկավորման առանձին ուղղությունների գծով սահմանափակումների և սահմանաքանակների նախատեսումը
- վարկերի ընտրության ընդհանուր չափանիշներ սահմանումը
- վարկառուների հետ ընթացիկ աշխատանքների սկզբունքների սահմանումը
- վարկերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը:
- ◆ Վերը ներկայացվածը չափանիշների ողջ համախումբը չէ, սակայն դա այն նվազագույնն է, որ բանկերը պետք է ունենան առողջ վարկային քաղաքականություն վարելու համար: Վարկային քաղաքականությունը պետք է ուշադրություն դարձնի նաև տարբեր ռիսկային գործոնների վրա, քանի որ վերջիններս ուղղակիորեն ազդում են ակտիվների որակի վրա:
- ◆ Վարկային քաղաքականության իրագործման համար բանկը պետք է սահմանի վարկավորման ստանդարտները և վարկային իրահանգները (վարկերի տրամադրման կարգերը): Վարկավորման ստանդարտները, վարկային քաղաքականության հետ համեմատած, ավելի մանրամասն փաստաթուղթ են, սակայն ոչ այնքան կոնկրետ, ինչպիսին վարկային իրահանգներն են:
- ◆ Վարկավորման ստանդարտները պետք է ներառեն՝
- վարկառուի վերաբերյալ ֆինանսական տեղեկատվության հավաքման և վերլուծության կարգը
- վարկի ապահովմանը, երաշխների, երաշխավորություններին ներկայացվող պահանջները
- վարչական ստանդարտները և վարկային գործընթացի կազմակերպման կանոնները
- վարկառուի վարկունակության վերլուծությունը
- փաստաթղթերի ձևակերպմանը ներկայացվող պահանջները
- առանձին տեսակի վարկերի (օրինակ՝ հիփոթեքային կամ սպառողական վարկերի) գծով վարկավորման կանոնները:

Վարկավորման գործընթացը կանոնակարգող իրահանգներն իրենցից ներկայացնում են այն հաջորդական գործողությունների (քայլերի) նկարագրությունը, որոնք ամրագրում են վարկային գործընթացի իրագործման ալգորիթմը:

Վարկավորման քաղաքականությունն ուղղված է այնպիսի վարկային պորտֆելի ստեղծմանը, որը կապահովի առավելագույն շահութաբերություն, չխախտելով վարկային գործունեությունը կարգավորող կազմակերպությունների կողմից մշակված (ՀՀԿԲ) ռիսկային մորմատիվները:

Բանկի կողմից մշակված վարկային քաղաքականությունից ցանկացած շեղում պետք է ունենա համապատասխան փաստաթղթային և հաշվարկային համոզիչ բացատրություն և կատարվի շատ հազվադեպ:

Բանկի կողմից մշակված վարկային քաղաքականության շրջանակներում էլ հենց կազմակերպվում է *վարկավորման տեխնիկան*, որն ընդգրկում է.

- վարկավորման փուլերը
- վարկառուի վարկունակության վերլուծությունը
- վարկավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստումը
- վարկի գումարի տրամադրումը

Վարկավորման իրականացման և վարկունակության վերլուծության գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

Քայլ 1. Պոտենցիալ վարկային առաջարկների ընտրություն առավել ընդունելի առաջարկների հայտնաբերման հետ միաժամանակ:

Քայլ 2. Պոտենցիալ փոխառուների հետ կապված ռիսկերի վերլուծության նպատակով տեղեկությունների հավաքագրում:

Քայլ 3. Պոտենցիալ փոխառուների հետ կապված ռիսկերի վերլուծություն:

Քայլ 4. Ռիսկերի վերլուծության հիման վրա վարկային առաջարկների դասակարգում ռիսկերի նվազեցման և առավելագույն շահույթի նպատակով:

Քայլ 5. Ֆինանսական վերլուծության իրականացում և փաստաթղթերի փաթեթի պատրաստում:

3.2.1. Վարկավորման փուլերը

Բանկային վարկեր սովորաբար տրվում են հաճախորդի խնդրանքով, որն այդ մասին տեղեկացնում է բանկի աշխատակցին և լրացնում է վարկային հայտ: Երբեմն իրենց լավագույն հաճախորդներին վարկային առաջարկով կարող են դիմել նաև բանկի վարկային տեսուչները:

Հաճախորդի կողմից տրված հայտի հիման վրա վարկային տեսուչը լրացնում է հաշվետվություն: Տրված հաշվետվությունը վերափոխվում է յուրաքանչյուր հերթական այցից հետո, որը վարկային տեսուչին տալիս է կարևոր տեղեկատվություն պոտենցիալ հաճախորդի մասին:

Եթե հաճախորդը որոշել է դիմել վարկի համար, ապա նա վարկային տեսուչի հետ հարցազրույց է ունենում, որը հաճախորդին հնարավորություն է տալիս բացատրել, ինչու է նրա մոտ վարկի պահանջ /կարիք/ առաջացել: Նման հարցազրույցը հատկապես կարևոր է այն պատճառով, որ այն բանկի վարկային տեսուչին հնարավորություն է տալիս գնահատել հաճախորդի բնավորությունը և նրա մղումների անկեղծությունը: Եթե հաճախորդը բավարար անկեղծ չէ նպատակի մատնանշման մեջ և կասկածներ են ծագում պայմանագրի պայմաններին հետևելու առումով, ապա այս հանգամանքը, որպես բացասական գործոն, հաշվի է առնվում վարկային հայտի քննարկման ժամանակ:

Երբ հաճախորդը դիմում է ձեռնարկության համար փոխառության կամ գրավի դիմաց վարկ ստանալու համար, բանկի վարկային տեսուչը հաճախորդի գտնվելու վայրի, գույքի վիճակի, ինչպես նաև լրացուցիչ տեղեկությունների ստուգում է իրականացնում: Վարկային տեսուչը կապվում է այն վարկատուների հետ, որոնք վարկավորել են տվյալ հաճախորդին նախկինում, որպեսզի տեղեկանա հաճախորդի հետ շփման նրանց փորձի, պայմանագրի պայմաններին հետևելու մասին:

Հաճախորդի վարկային պատմությունը սովորաբար բավարար տեղեկատվություն է տալիս հաճախորդի բնավորության, նրա մղումների անկեղծության և բանկային վարկի օգտագործման ժամանակ պատասխանատվության զգացման մասին:

Միջազգային պրակտիկայում բանկերի կողմից կազմակերպվում է հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ ռեգիստր, որտեղ բոլոր բանկերը մուտքագրում են տեղեկատվություն իրենց յուրաքանչյուր հաճախորդի մասին և եթե վարկային տեսուչին անհրաժեշտ է տեղեկատվություն հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ, ապա նա կարող է այդ մասին տեղեկատվություն ստանալ վարկային ռեգիստրից: Մեր երկրում հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ ռեգիստր չի գործում, ինչը զգալի բարդացնում է հաճախորդի վերաբերյալ հավաստի տեղեկատվության հայթայթումը:

Եթե բոլոր փաստերը հաճախորդի օգտին են, ապա բանկը վարկային հայտի գնահատման ժամանակ պահանջում է ֆինանսական հաշվետվությունների ողջ հավաքածուն: Երբ փաստաթղթերը հայտնվում են վարկային գործի մեջ, վարկունակության /վճարունակության/ վերլուծության վարչությունն իրականացնում է նրանց մանրակրկիտ ստուգում, որոշելու, թե արդյոք հաճախորդը կտնօրինի հետագայում վարկի մարման համար անհրաժեշտ բավարար կանխիկ գումարների հոսք և ակտիվներ: Այնուհետև վարկունակության վերլուծության վարչությունը նախապատրաստում է համառոտ հաշվետվություն և հանձնարարություններ, որոնք ուղարկվում են վարկային կոմիտե: Առավել խոշոր վարկերի դեպքում վարկունակության վերլուծության վարչության աշխատակիցները կատարում են բանավոր հայտարարություն, վերլուծողները և վարկային կոմիտեն քննարկում են վարկային հայտի ուժեղ և թույլ կողմերը:

Երբ վարկային կոմիտեն հավանություն է տալիս հաճախորդի հայտին, վարկային տեսուչը կամ վարկային կոմիտեն սովորաբար ստուգում են որպես գրավ ներկայացվող, տրվող գույքը կամ այլ ակտիվները, որպեսզի համոզվի, որ բանկը կստանա գրավը անհապաղ իրականացնելու հնարավորություն կամ վարկային պայմանագրի պայմանները չկատարելու դեպքում կարող է նրա նկատմամբ ստանձնել սեփականության իրավունք: Այս գործընթացը երբեմն անվանում են բանկի ապահովման իրավունքի իրականացման գործընթաց: Եվ եթե վարկային տեսուչը և վարկային կոմիտեն համարում են, որ ներկայացված հայտը և գրավը բավականին հուսալի են, կողմերը կազմում և ստորագրում են վարկային պայմանագրի մասը կազմող գրավի պայմանագիրը և այլ փաստաթղթեր:

Այս ամենից հետո կարող է արդյոք վարկային տեսուչը ստորագրված վարկային պայմանագիրը դնել պահարանում և մոռանալ դրա մասին: Դժվար է Ստորագրված պայմանագիրը պետք է մշտապես ստուգվի, որպեսզի ապահովվի վարկային պայմանագրի պայմանների պահպանումը և հիմնական պարտքի և/կամ դրա տոկոսների ժամանակին մարումը: Վարկային տեսուչը առևտրային և արդյունաբերական ընկերություններին վարկեր տալով, պարբերաբար այցելում է փոխառուին, ստուգում նրա գործունեության ընթացքում վարկի նպատակային օգտագործումը, լուծում տալիս նաև այն հարցին, թե դեռ ինչպիսի բանկային ծառայությունների կարիք կարող է ունենալ հաճախորդը:

Այսպիսով, վարկավորման գործընթացը կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

Վարկի գծով իրականացվող բանակցությունների փուլ – վարկի առաջարկությունը կարող է կատարվել թե բանկի և թե փոխառուի կողմից: Շուկայական տնտեսության պայմաններում շատ ավելի նպատակահարմար է, երբ բանկն է փնտրում և գտնում այնպիսի հաճախորդ, որին կարելի է վարկավորել և միաժամանակ դիմել նվազագույն ռիսկի և ստանալ առավելագույն շահույթ: Բանկային ծառայությունների շուկայի, պոտենցիալ հաճախորդների ուսումնասիրությունը, համագործակցության առաջարկությունները, այցելությունները, ուշադրության անհրաժեշտ նշանները պետք է իրականացվեն նախքան վարկավորման կոմիտեի առաջարկներ անելը:

Սակայն այսօր պայմաններն այնպիսին են, որ հաճախորդն է փնտրում այն բանկը, որտեղ կարելի է վարկ ստանալ:

Կոմիտեի առաջարկի քննարկման փուլ - այս փուլն ընդգրկում է հաճախորդի վարկունակության, վարկավորման օբյեկտի և ապահովվածության գնահատումը: Այս գործընթացն իրականացվում է կամ հատուկ առանձնացված վերլուծությունների ստորաբաժանման կամ բանկի վարկային բաժնի կողմից: Այս դեպքում վարկավորման մասին նախնական որոշումը պետք է կայացվի բանկի որոշ աշխատակիցների իրավասությունների շրջանակներում (օրինակ՝ վարկային բաժնի կողմից տրված եզրակացությունը տվյալ հաճախորդին վարկավորման գծով): Այս դեպքում վարկային նախագիծը քննարկում և վարկավորման որոշում է կայացնում այն աշխատակիցը, ում բանկի ղեկավարության կողմից տրված է նման իրավասություն:

Վարկային փաստաթղթավորման փուլ - բանկի աշխատակիցների կողմից կազմվում են վարկային պայմանագրեր, տրվում են վարկի տրամադրման մասին համապատասխան կարգադրություններ և կազմվում է համապատասխան վարկային գործ (ֆայլ) տվյալ վարկառուհաճախորդի վերաբերյալ:

Վարկի գումարի օգտագործման փուլ – վարկային գործառնությունների գծով վերահսկողության իրականացում, վարկի օգտագործման սահմանաչափի պահպանման, վարկի նպատակային օգտագործման, տոկոսագումարների վճարման, վարկի մայր գումարի ժամկետին մարման վերահսկողություն:

Անհրաժեշտության դեպքում վարկառուի վճարունակության և ընթացիկ ֆինանսական վիճակի մասին պատկերացում ունենալու նպատակով կազմակերպվում են հանդիպումներ, բանակցություններ հաճախորդների հետ, ճշտորոշվում են վարկավորման պայմանները և ժամկետները:

Նշված փուլերը քայլ առ քայլ ընդգրկում են.

- Հաճախորդի կողմից դիմումի ներկայացում բանկին վարկ ստանալու խնդրանքով: Դիմումին կից ներկայացվում են նաև վարկի անհրաժեշտությունը և նպատակը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես նաև հաճախորդի վարկունակությունը գնահատելու համար բանկին անհրաժեշտ փաստաթղթեր:

- Հաճախորդի մասին և նրա կողմից նախկինում վերցված վարկերի մասին առավելագույն տեղեկատվության հավաքագրում:

- Հաճախորդի կողմից տրված տեղեկատվության ճշմարտացիության ստուգում անձնական զրույցներով, փաստաթղթերի հետազոտությամբ, ակտիվների ստուգմամբ և այլն:

Հաճախորդի կողմից տրված ցանկացած սխալ տեղեկատվություն կարող է չվարկավորելու որոշման հիմք հանդիսանալ:

Եթե նախնական տեղեկատվությունը դրական է, ապա բանկը պետք է հաճախորդից պահանջի նրա ֆինանսատնտեսական գործունեությունը արտացոլող փաստաթղթերը և կատարի հաճախորդի նախկին գործունեության վերլուծություն:

- Անհրաժեշտ է վարկավորման համար հաճախորդի կողմից ներկայացված բիզնես ծրագրի մանրամասն հետազոտություն (տեխնիկական, ֆինանսական, իրացման, մատակարարումների և այլն) տալով համապատասխան եզրակացություններ:

- Մեծ վարկերի համար անհրաժեշտության դեպքում կարելի է հրավիրել համապատասխան փորձագետներ:

- Ծանոթանալ և ստուգել բիզնես ծրագրով նախատեսվող գործունեության հիմնական ղեկավարների (թիմի) կազմակերպչական, մասնագիտական և այլ ունակությունները:

- Հաճախորդի հետ մեկտեղ կատարել ուղղումներ բիզնես ծրագրի մեջ:

- Պատրաստված փաստաթղթերի փաթեթը ներկայացվում է բանկի վարկային կոմիտե (դեպարտամենտ, վարչություն, բաժին և այլն):

- Վարկային կոմիտեն հիմնականում ուշադրություն է դարձնում վարկի վերադարձելիություն ապահովող բարձր իրացվելի ակտիվների վրա:

- Վարկային կոմիտեի դրական եզրակացության հիման վրա կազմվում են վարկավորման փաստաթղթերը ([վարկային պայմանագիր](#), գրավի պայմանագիր):

Սակայն դրանով չի ավարտվում վարկային գործակալի գործը: Հարկավոր է մշտապես հսկել և ստուգել հաճախորդի գործունեության համապատասխանությունը վարկային ծրագրի և վարկային պայմանագրի հետ: Վարկավորված հաճախորդի ֆինանսատնտեսական վիճակը բանկի համար վճռորոշ է դառնում վարկի հետ ստանալու տեսակետից: Տվյալ հաճախորդը պետք է օգտվի բանկի մյուս ծառայություններից և այլն:

3.3. Վարկային ռիսկը և դրա կառավարման մեթոդները

3.3.1. Վարկային ռիսկը և դրա վրա ազդող գործոնները

Ինչպես ցանկացած ֆինանսատնտեսական գործունեություն, այնպես էլ բանկային գործունեությունը մշտապես ռիսկ է պարունակում:

Բանկային ռիսկը հավանականությունն է այն բանի, որ տվյալ գործառնությունը բանկի համար սպասվածից քիչ շահույթ կապահովի կամ ընդհանրապես վնասաբեր կլինի:

Ռիսկերի հնարավոր առավելագույն նվազեցումը կամ ընդհանրապես բացառումն ուղղակիորեն իր դրական ազդեցությունը կունենա բանկի ֆինանսական արդյունքների վրա: Այս առումով կարևորվում է բանկերի կողմից ակտիվների, այդ թվում՝ վարկային ներդրումների տեղաբաշխման կշռադատված քաղաքականության իրականացումը: Չնայած բանկերն աշխատում են խուսափել մեծ ռիսկերից, սակայն հաճախ, որքան մեծ է ռիսկը, այդքան բարձր է շահույթը և բանկերի առավելագույն շահույթ ստանալու ձգտումը սահմանափակվում է վնասներ կրելու հնարավորությամբ:

Բանկերի գործունեության հիմնական նպատակը սահմանված կանխարգելիչ տնտեսական նորմատիվների և օրենսդրական այլ սահմանափակումների պահանջներն ապահովվելով՝ սեփական և ներգրավված միջոցների տեղաբաշխմամբ, այդ թվում՝ վարկային ներդրումների հաշվին առավելագույն շահույթի ստացումն է:

Բանկային ռիսկերը կարելի է բաժանել երկու խմբի՝ ներքին և արտաքին ռիսկերի:

1. **Ներքին ռիսկերն** առաջանում են բանկի գործունեության ընթացքում և կապված են նրա կողմից իրականացվող գործարքների հետ: Այդպիսի ռիսկերից են՝ վարկային, անհավասարակշռված իրացվելիության, անվճարունակության, ներդրումային, կապիտալի կառուցվածքի, հետհաշվեկշռային, գործառնական, տեխնոլոգիական, անվտանգության, նորամուծության, հաշվառման, կազմակերպչական և այլ ռիսկերը:

2. Արտաքին ռիսկերի խմբին են դասվում բանկի գործունեության ընթացքում առաջացող այն ռիսկերը, որոնք կապված չեն բանկի ներքին կազմակերպչական աշխատանքների, գործունեության կազմակերպման հետ, սակայն թողել են իրենց ազդեցությունը բանկի ֆինանսական գործունեության արդյունքների վրա: Ռիսկերի այս խմբում ընդգրկվում են հետևյալ ռիսկերը. երկրի, քաղաքական, սոցիալական, շուկայական, տարերային աղետների, տնտեսական, մակրոտնտեսական, ֆինանսական, օրենսդրական, փոխանցման, ճյուղային և այլն:

Վարկային ռիսկը իրենից ներկայացնում է այն բանի հավանականությունը, որ վարկառուն սահմանված ժամկետներում չի կատարի վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները, այսինքն՝ չի վերադարձնի (ամբողջությամբ կամ մասամբ) վարկի մայր գումարը և դրա գծով հաշվարկված տոկոսագումարները:

Վարկային ռիսկն առաջանում է կոնտրագենտների ինչպես հաշվեկշռային, այնպես էլ հետհաշվեկշռային պարտավորությունների գծով:

Վարկային ռիսկը գնահատելու համար նախ անհրաժեշտ է բացահայտել և դասակարգել դրա մակարդակի վրա ազդող գործոնները: Վերջիններս բազմազան են և կարելի է տրոհել երեք խմբերի՝

1. վարկառուի հետ կապված գործոններ, ինչպիսիք են նրա վարկունակությունը և վարկային գործարքի բնույթը,

2. վարկատուի հետ կապված գործոններ, որոնք իրենց արտացոլումն են գտնում բանկի վարկային քաղաքականությամբ, վարկավորման ներքին կանոններով ու ընթացակարգերի և ներքին այլ փաստաթղթերով սահմանված նորմերի մեջ,

3. արտաքին գործոններ, որոնք թեև կապված չեն վարկային գործարքի կողմերի հետ, սակայն ազդում են նրանց գործունեության արդյունքների վրա:

Վարկառուի վարկունակությունը իրենից ներկայացնում է վարկառուի՝ վարկային պայմանագրի պայմանները կատարելու (վարկի գծով պարտքը մարելու) ունակության և հնարավորությունների բնութագիրը:

Այն կախված է մի շարք գործոններից: Առանձնացվում են վարկունակության հինգ կողմեր՝ իրավական, ճյուղային, ֆինանսական, կառավարչական և վարկի ապահովվածության որակի կողմերը: Այս կողմերից յուրաքանչյուրն ունի ցուցանիշների իր համակարգը, որոնցով էլ կատարվում է գնահատումը:

Վարկունակության իրավական կողմի բնութագիրը ենթադրում է վարկառուի իրավունակության, իսկ ֆիզիկական անձի դեպքում նաև՝ նրա գործունակության ուսումնասիրություն: Վարկային գործարքներ կնքելիս վարկատուները պետք է քաջատեղյակ լինեն հավանական վարկառուների իրավունակությանը (գործունակությանը) և դրանց առանձնահատկություններին:

Վարկային վերլուծությունը բացի իրավական կողմից պետք է կենտրոնացված լինի նաև վարկունակության հետևյալ չորս կողմերի վրա.

1. Ճյուղային - Արտացոլում է ճյուղի զարգացման միտումներները և տվյալ ճյուղում վարկառու ձեռնարկության զբաղեցրած դիրքը: Այստեղ թույլ դիրքերը կարող են զգալիորեն նվազեցնել վարկունակության մակարդակը:

2. Ֆինանսական - Որոշում է վարկառուի՝ բավարար դրամական միջոցներ ստանալու ընդունակությունը, որոնք հանդիսանում են վարկի մարման և դրա գծով տոկոսների հաշվարկման հիմնական աղբյուրը: Դրա գնահատումը ենթադրում է վարկառուի դրամական հոսքերի և նրա ֆինանսական վիճակը բնութագրող մի շարք գործակիցների (չափանիշների) վերլուծություն, որոնցից հիմնականն են շահութաբերության, իրացվելիության և ֆինանսական լծակի ցուցանիշները:

3. Կառավարչական - Որոշում է ղեկավարության որակը՝ հիմք ընդունելով իրավասությունը, ղեկավարների թիմային համախմբվածությունը, իրազեկությունը և կոլեկտիվի ղեկավարման արդյունավետությունը: Ղեկավարության թերությունները կարող են դժվարություններ ստեղծել ոչ միայն վարկի մարման այլ նաև ապահովության իրացման գծով:

4. Վարկի ապահովության որակի - Որոշում է բանկի կողմից գրավի առարկայի նկատմամբ հսկողության մակարդակով և դրա իրացման դեպքում ապահովվածության իրական արժեքը ստանալու հնարավորությամբ, ինչպես նաև վարկային պայմանագրով վարկառուի պարտավորությունների կատարումը երաշխավորող (երաշխիքների կամ երաշխավորության պայմանագրերի հիման վրա) երրորդ անձանց վճարունակությամբ, նրան համբավով և ռեյթինգով:

Վարկային գործարքի բնույթն արտացոլվում է վարկավորման օբյեկտի բովանդակության, վարկի գումարի, արժույթի, մարման ժամկետի, վարկի տրամադրման և մարման կարգի, տոկոսների չափի և դրանց հաշվարկման կարգի մեջ: Վարկային ռիսկը մեծանում է, մասնավորապես, միաժամանակ մի քանի գործարքների վարկավորման, վարկի գումարի և դրա ժամկետի երկարացման, վարկի միանգամյա տրամադրման և մարման դեպքում:

Վարկային ռիսկի աստիճանը կախված է նաև բանկի կողմից ընդունված վարկային գործընթացի կազմակերպումից: Վարկային ռիսկը փոքրացնում են խելամիտ վարկային քաղաքականության վարումը, վարկավորման ներքին ստանդարտների, սահմանափակումների ներդրումը և դրանց հետևելը, վարկային հայտերի քննարկման հստակ ընթացակարգերի, վարկային գործառնությունները կանոնակարգող այլ հրահանգների, կանոնակարգերի առկայությունը, բանկում անալիտիկ աշխատանքի պատշաճ դրվածքը, ներքին հսկողությունը, վարկային մոնիտորինգը, վարկառուների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը տիրապետելը և այլն:

3.1.2. Վարկային ռիսկի ազդեցությունը վարկային պորտֆելի որակի վրա

Վարկային պորտֆելի վրա վարկային ռիսկի ազդեցության գնահատումն առաջարկվում է իրականացնել ստորև բերված ցուցանիշների համակարգի միջոցով:

Վարկային ռիսկով ճշգրտված զուտ տոկոսային մարժա	=	Տոկոսային եկամուտներ	-	Տոկոսային ծախսեր	-	Վարկերի գծով կորուստներ
Վարկային ներդրումներ						

Այս ցուցանիշը կարող է օգտագործվել բանկում վարկային ռիսկի կառավարման համակարգի արդյունավետությունը գնահատելու համար: Այն հաշվի է առնում ինչպես վարկային ռիսկի առկայությամբ պայմանավորված կորուստները, այնպես էլ այդ ռիսկի ընդունման հետևանքով եկամուտները:

Վարկային ռիսկով ճշգրտված զուտ տոկոսային մարժան, իր հերթին, որոշվում է ցուցանիշների համակարգով, որոնցից յուրաքանչյուրը բնութագրում է վարկային ռիսկի կողմերից մեկը:

Վարկային ներդրումների աճի տեմպեր	=	Նախորդ ժամանակաշրջանում տրամադրված վարկերի գումար
		Ընթացիկ ժամանակաշրջանում տրամադրված վարկերի գումար

Վարկային ներդրումների աճը նշանակում է վարկային ռիսկի մեծացում և պահանջում է օպտիմալացնել բանկի պահուստային ֆոնդը վարկերի գծով հնարավոր կորուստների փոխհատուցման համար: Այս ցուցանիշի ուսումնասիրությունը թույլ է տալիս կանխատեսել վարկերի չվերադարձման համար պահուստավորման նկատմամբ ընդհանուր պահանջարկը և ճշգրտել վարկային ռիսկից պաշտպանվածության գործակիցը:

Վարկերի գծով կորսված օգուտի գործակից	=	Չստացված տոկոսներ
		Ստացված տոկոսներ

Տվյալ ցուցանիշի համարիչում պետք է հաշվի առնել այն տոկոսները, որոնք բանկը չի ստացել ժամկետանց պարտքերի առաջացման, երկարաձգումների և հաշվեկշիռից անհուսալի ճանաչված վարկերի դուրսգրման հետևանքով:

Չնայած այն բանին, որ բանկերի գործունեությունը կարգավորող և վերահսկող պետական մարմինները սահմանել են վարկերի հնարավոր կորուստների պահուստավորման պարտադիր պահանջներ, բանկերը պետք է կատարեն ստացված տվյալների ինքնուրույն վերլուծություն՝ վարկային պորտֆելի կառավարման ուղղությամբ ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:

3.1.3. Վարկային ռիսկի կառավարման մեթոդները

Չարցը, որ կուսումնասիրենք, կայանում է նրանում, թե ինչպիսի մեթոդներ են կիրառվում վարկային ռիսկի կառավարման նպատակով:

Նախ, անհրաժեշտ է պարզել, թե ինչպես կարելի է վերլուծության ենթարկել բանկի հաճախորդի վարկունակությունը և հետևաբար որոշել, կարող է նա ժամանակին կատարել վարկի մարման վճարումները: Դա սովորաբար ենթադրում է վարկային հայտի հիմնական բնութագրիչների՝ ամերիկյան վեց «C»-երի մանրամասն ուսումնասիրություն: Հաճախորդի վարկունակության վեց հիմնական չափանիշներն են՝

Character - վարկառուի վարկարժանությունը

Capacity - վարկունակությունը

Cash - բավարար միջոցների առկայությունը

Collateral - ապահովվածությունը

Conditions - պայմանները

Control - վերահսկողությունը:

Վարկ տրամադրելու որոշումը ընդունելիս հարկ է, որ բոլոր այս կետերը վարկատուի (բանկի) տեսանկյունից լինեն բավարար:

Վարկառուի վարկարժանությունը (character): Վարկային տեսուչը պետք է համոզված լինի, որ հաճախորդը կարող է հստակ ներկայացնել վարկի ստացման նպատակը և վարկը մարել: Եթե տեսուչը վստահ չէ պահանջվող վարկի նպատակի առնչությամբ, ապա այն պետք է ճշգրտվի: Եթե նպատակը պարզ է, ապա վարկային տեսուչը պարտավոր է որոշել որքանով է այն համահունչ բանկի ընթացիկ վարկային քաղաքականությանը: Նույնիսկ բավարար նպատակի առկայության դեպքում վարկային տեսուչը պետք է պարզի, թե վարկառուն արդյոք պատասխանատվությամբ է մոտենում փոխառու միջոցների վերադարձմանը, բանկի հարցերին տալիս է ճշմարիտ պատասխաններ և ներդնում է ամբողջ ուժերը սեփական պարտավորությունների

մարման համար: Պատասխանատվությունը, ճշմարտացիությունը և պարտավորության մարմանը լրջորեն տրամադրվածությունը կազմում է այն, ինչը վարկային տեսուչն անվանում է վարկառուի վարկաբաժնություն: Եթե բանկի վարկային տեսուչի կարծիքով հաճախորդը անկեղծ չէ՝ խոստանալով օգտագործել ստացված միջոցները ներկայացված բիզնես-ծրագրի շրջանակներում և ժամանակացույցին համապատասխան մարել պարտավորությունը, ապա վարկը նրան չպետք է տրամադրվի, քանի որ հավանաբար այն կդառնա պրոբլեմային:

Հաճախորդի վարկունակությունը (capacity): Վարկային տեսուչը պետք է համոզված լինի, որ հաճախորդը իրավունք ունի վարկային հայտ ներկայացնելու և վարկային պայմանագիր կնքելու: Հաճախորդի այս բնութագրումը հայտնի է որպես վարկունակություն: Վարկային տեսուչը պետք է վստահ լինի, որ վարկային հայտ ներկայացրած կազմակերպության ներկայացուցիչը ունի իր կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի կողմից տրված լիազորություններ՝ կազմակերպության անունից բանակցությունների անցկացման և վարկային պայմանագրի ստորագրման համար: Սովորաբար դա լինում է կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի որոշման պատճենի ստացման ճանապարհով: Եթե խոսքը գնում է ընկերության մասին, ապա վարկային տեսուչը կարող է խնդրել ներկայացնելու ընկերության կանոնադրությունը, որպեսզի պարզի, թե ով կարող է հանդես գալ կազմակերպության անունից: Լիազորություն չունեցող անձի կողմից կնքված վարկային պայմանագրով տրված գումարների վերադարձը կարող է դառնալ անհնարին և բանկը զգալի վնասներ կկրի:

Դրամական միջոցները (cash): Ցանկացած վարկային հայտի առանցքային կետը հետևյալ հարցն է. կարո՞ղ է արդյոք վարկառուն ստանալ բավարար դրամական միջոցներ կամ կանխիկի հոսք՝ եկամտի տեսքով, որպեսզի մարի վարկը: Ընդհանրապես վարկառուները ունենում են իրենց ստացած վարկերի մարման երեք աղբյուր.

ա/ կանխիկի հոսք

բ/ ակտիվների իրացում կամ վաճառք

գ/ նոր պարտավորությունների ստանձնում կամ արժեթղթերի թողարկմամբ միջոցների ներգրավում:

Ներկայացված միջոցներից յուրաքանչյուրը կարող է ապահովել բավարար միջոցների հոսք՝ բանկային վարկի մարման համար: Բանկերը, որպես վարկի մարման հիմնական աղբյուր, գերադասում են ընտրել կանխիկի հոսքը, քանի որ ակտիվների վաճառքը կարող է վատթարացնել վարկառուի հաշվեկշիռը: Դրամական հոսքերի ամբավարարությունը վարկառուի ֆինանսական կայունության և վարկատուի հետ հարաբերությունների վատթարացման տարածված ցուցանիշ է:

Ի՞նչ է նշանակում կանխիկի հոսք: Հաշվապահական հաշվառման տեսակետից այն սովորաբար որոշվում է հետևյալ բանաձևով.

$$ԿՀ = ԶՇ + Ծ$$

որտեղ՝

ԿՀ - կանխիկի հոսք

ԶՇ - Ձուտ շահույթ (կամ համախառն եկամուտ հանած համախառն ծախսեր)

Ծ - Ծախսեր, որոնք տարբերվում են կանխիկ միջոցների ծախսերից (այսինքն՝ ամորտիզացիոն հատկացումներ):

Կամ, որոշ հաշվապահների և ֆինանսական վերլուծողների կողմից օգտագործվող հետևյալ բանաձևով.

$$ԿՀ = ԶՇ + Ծ + ԿՊ - ԴՊ - ԱՆՊ$$

որտեղ՝

ԿՀ - կանխիկի հոսք

ԶՇ - Ձուտ շահույթ (կամ համախառն եկամուտ հանած համախառն ծախսեր)

Ծ - Ծախսեր, որոնք տարբերվում են կանխիկ միջոցների ծախսերից (ամորտիզացիոն հատկացումներ)

ԿՊ - կրեդիտորական պարտավորություններ

ԴՊ - դեբիտորական պարտավորություններ

ԱՆՊ - ապրանքահումքային պաշարներ:

Վերոհիշյալ բանաձևի առավելություններից մեկն այն է, որ բանկի վարկային տեսուչի ուշադրությունը սևեռվում է հաճախորդի գործունեության այն կողմերին, որոնք արտացոլում են նրա կառավարման որակն ու փորձը, ինչպես նաև այն շուկայի իրավիճակը, որում աշխատում է հաճախորդը: Վարկառուն, որի մոտ մեծ տեսակարար կշիռ են կազմում կրեդիտորական պարտավորությունները, ունի ապրանքահումքային պաշարների կամ չվաճառված ապրանքների մեծ կուտակում, դեբիտորական պարտքերի ստացման դժվարություններ, ամենայն հավանականությամբ, բանկի համար կդառնա խնդրահարույց հաճախորդ: Բանկերի մեծամասնությունը երկրնտրանքի առջև կկանգնի. տրամադրել արդյո՞ք սեփական միջոցները նման հաճախորդին:

Բանկի վարկային տեսուչի կողմից վարկառուի դրամական միջոցները գնահատելիս ենթադրվում է ստանալ այնպիսի հարցերի պատասխանը, ինչպիսիք են՝ դիտարկվել է արդյո՞ք նախկինում շահույթի հաստատում աճ կամ վաճառքի ծավալի մեծացում, գոյություն ունի արդյո՞ք այն բանի բավարար հավանականություն, որ նման աճը կշարունակվի նաև վարկային պայմանագրի գործողության ընթացքում: Այս հարցերի պատասխանում կարևոր դեր է խաղում վարկառուի անցյալ և ընթացիկ եկամուտների մեծությունը:

Ապահովվածությունը (collateral): Վարկային տեսուչը պարտավոր է վարկային հայտի գնահատման ժամանակ ստանալ այն հարցի պատասխանը, թե վարկառուն տիրապետում է արդյո՞ք բավարար կապիտալի կամ որակյալ ակտիվների՝ վարկի անհրաժեշտ ապահովման համար: Վարկային տեսուչն ուշադրություն է դարձնում այնպիսի բնութագրիչների, ինչպիսիք են՝ վարկառուի ակտիվների ծառայության ժամկետը, վիճակը և

կառուցվածքը: Այստեղ մեծ դեր է խաղում տեխնոլոգիաների հետ կապված գործոնը: Եթե վարկառուի ակտիվները մաշված են՝ տեխնոլոգիական տեսանկյունից, նրանց արժեքը ապահովվածության առումով մեծ չէ, քանի որ վարկային պարտավորության մարման համար վարկառուի անբավարար եկամուտների դեպքում դրանք դժվար կլինի վերածել կանխիկ միջոցների:

Պայմանները (conditions): Վարկային տեսուչը և վարկային վերլուծողը պետք է տեղյակ լինեն վարկառուի գործունեության վերջին միտումներին և պատկերացնեն, թե ինչպես կարող է ազդել տնտեսական պայմանների փոփոխությունը վարկի մարման գործընթացի վրա: Թղթի վրա վարկը կարող է թվալ հաստատուն, սակայն արժեզրկման, տնտեսական անկման, [տոկոսադրույթների](#) աճի պայմաններում վաճառքի ծավալների կրճատումը կամ եկամտի փոքրացումը կարող է հանգեցնել վարկի որակազրկման: Այս խնդրի լուծման համար բանկերի մեծամասնությունը ստեղծում է տնտեսական պայմանների գնահատման տվյալների տեղեկատվական բազա:

Վերահսկողությունը (control): Վարկառուի վարկունակության գնահատման վերջին գործոնը վերահսկողությունն է, որն իրականացվում է հետևյալ հարցերի պատասխանը ստանալու համար. օրենսդրական դաշտի փոփոխությունը որքանով կազդի վարկառուի գործունեության վրա, որքանով է վարկային հայտը համապատասխանում բանկի ստանդարտներին և վարկի որակին առնչվող կարգավորող մարմինների պահանջներին:

Վարկային ռիսկի կառավարման նպատակով կիրառվում են մի շարք չափանիշներ, որոնք թույլ են տալիս գնահատել վարկառուի ֆինանսական վաճակը:

Հիմնվելով միջազգային փորձի վրա՝ ներկայումս ՀՀ տարածքում վարկառուի ֆինանսական վիճակի գնահատման համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերին առաջարկվում են հետևյալ չափանիշները, որոնք խմբավորված են ներքոհիշյալ խմբերում՝ ըստ դրանց կարևորության (կշիռների) և նշանակության.

I. Չափանիշներ, որոնք վկայում են վարկառուի անիրավունակության (ֆիզիկական անձանց առումով՝ անգործունակության), անվճարունակության կամ հնարավոր անվճարունակության առաջացման մասին.

ա/ վարկառուն անիրավունակ է, այսինքն պետական լիազորված մարմինների կողմից ճանաչված չէ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կամ չունեցող անձի կողմից իրավունքներ ունենալու կամ պարտավորություններ կրելու ունակությունը (չունի համապատասխան պետական գրանցում) կամ դատարանի որոշմամբ ֆիզիկական անձը ճանաչված է անգործունակ

բ/ վարկառուն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված (դատական) կարգով ճանաչվել է սնանկ կամ անվճարունակ

գ/ մեկ կամ մի քանի պարտատերերի (կրեդիտորների) կողմից հարուցված է հայց՝ վարկառուին անվճարունակ ճանաչելու կամ պարտքերի մարման (փոխհատուցման) նպատակով վերջինիս գույքի նկատմամբ դատարանի վճռով բռնագանձում տարածելու վերաբերյալ

դ/ վարկառուն կորցրել է իր սեփական միջոցների (կապիտալի) զգալի մասը (գործունեության արդյունքներով առաջացած և/կամ պատասխանատվության կիրառման հետևանքով կրած չփոխհատուցվող վնասների արդյունքում)

ե/ վարկառուի բոլոր պարտավորությունների հանրագումարը զգալիորեն գերազանցում է նրա սեփական միջոցների (կապիտալի) չափերը

զ/ վարկառուն ունի նշանակալից մասնակցություն այնպիսի անձանց կապիտալում (կամ հանդիսանում է փոխկապակցված անձ վերջիններիս հետ), որոնք դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ ճանաչվել են սնանկ կամ անվճարունակ:

Սույն խմբում թվարկված չափանիշներից բացի, վարկառուի անվճարունակության մասին կարող են վկայել նաև բանկի կողմից վարկառուի ֆինանսական վիճակի վերաբերյալ որևէ տեղեկության բացակայությունը կամ անբավարար տեղեկությունները, ինչպես նաև բանկը կարող է այլ (սույն խմբում չնշված) չափանիշների հիման վրա բավարար հիմքեր ունենալ վարկառուի փաստական անվճարունակության կամ վարկային պայմանագրի գործողության ընթացքում հնարավոր անվճարունակության ի հայտ գալու մասին:

II. Չափանիշներ, որոնցով կարող է գնահատվել վարկառուի ֆինանսական կայունության մակարդակը.

ա/ ֆինանսական անկախության աստիճանը՝ վարկառուի սեփական կապիտալի (սեփական միջոցների աղբյուրների) հարաբերակցությունը հաշվեկշռի հանրագումարին

բ/ ֆինանսական լարվածության մակարդակը՝ բոլոր փոխառու (ներգրավված) միջոցների հարաբերությունը սեփական կապիտալին (սեփական միջոցների աղբյուրներին) կամ նշված ցուցանիշների հակադարձ հարաբերակցությունը, որը բնութագրում է ֆինանսավորման մակարդակը

գ/ պարտքի մակարդակը (գործակիցը)՝ բոլոր պարտավորությունների հարաբերակցությունը հաշվեկշռի հանրագումարին

դ/ ֆինանսական կայունության մակարդակը՝ սեփական միջոցների և երկարաժամկետ փոխառու միջոցների գումարի հարաբերակցությունը հաշվեկշռի հանրագումարին

ե/ ֆինանսական մանկրայնության մակարդակը՝ շրջանառու կապիտալի (շրջանառու ակտիվների գումարի և կարճաժամկետ պարտավորությունների տարբերությունը) հարաբերակցությունը սեփական կապիտալին (սեփական միջոցների աղբյուրներին):

III. Չափանիշներ, որոնցով կարող է գնահատվել վարկառուի վճարունակության (իրացվելիության) մակարդակը.

ա/ ընթացիկ իրացվելիության մակարդակը՝ բարձր և արագ իրացվելի ակտիվների գումարի հարաբերակցությունը կրեդիտորական պարտքերի և կարճաժամկետ պարտավորությունների (այդ թվում՝ ժամկետանց) գումարին

բ/ հեռանկարային իրացվելիության մակարդակը՝ դանդաղ և դժվար իրացվելի ակտիվների գումարի հարաբերակցությունը երկարաժամկետ պասիվների և սեփական կապիտալի գումարին

գ/ կարճաժամկետ պարտքի ծածկման մակարդակը (գործակիցը)՝ շրջանառու ակտիվների հարաբերակցությունը կարճաժամկետ պարտավորություններին

դ/ վարկառուի դրամական միջոցների շարժը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը):

IV. Այլ չափանիշներ, որոնք բնութագրում են վարկառուի հուսալիության կամ վարկունակության մակարդակը.

ա/ վարկառուի եկամտաբերության (շահութաբերության) մակարդակը բնութագրող ցուցանիշները (ըստ ակտիվների, ըստ կապիտալի, ըստ վաճառքի (իրացման) ծավալի և ըստ ընթացիկ ծախսերի (ինքնարժեքի)

բ/ վարկառուի արտադրատեխնիկական ներուժի, տեխնիկական հագեցվածության մակարդակը և դրա կատարելագործման հեռանկարները

գ/ արտադրանքի որակական բնութագիրը, մրցունակությունը (և դրանով պայմանավորված իրացման հնարավորությունները) ներքին և արտաքին շուկաներում

դ/ վարկառուի ղեկավարների կառավարման ունակությունները, իրավասությունը և նախաձեռնողականությունը, անձնակազմի որակավորման մակարդակը:

Վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող վերը նշված չափանիշներից բացի, բանկերը կարող են անհրաժեշտության դեպքում, ելնելով վարկերի հատկացման նպատակայնությունից ու վարկառուի առանձնահատկություններից, կիրառել այլ՝ իրենց կողմից սահմանվող չափանիշներ և ցուցանիշներ: Միաժամանակ, բանկերը կարող են վարկառուի ֆինանսական վիճակի գնահատման նպատակով կիրառել վերը թվարկված բոլոր չափանիշները կամ դրանց մի մասը՝ սահմանելով նաև այդ չափանիշների (համապատասխան գործակիցների) քանակական բնութագրերը (կշիռները), ինչպես նաև ելնելով հատկացվող վարկի չափերից, վարկային պայմանագրի ժամկետներից, վարկի և տոկոսների մարման ժամանակացույցից՝ կատարել վարկառուի ֆինանսական դրության և համապատասխան ցուցանիշների ժամանակային վերլուծություններ (անցած հաշվետու ժամանակահատվածների կտրվածքով և հեռանկարային):

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ է հասկացվում վարկավորման համակարգ ասելով և որոնք են այդ համակարգի բաղկացուցիչ տարրերը:
2. Որո՞նք են վարկավորման փուլերը:
3. Ո՞ր մարմինների կողմից է իրականացվում վարկավորման գործընթացի կարգավորումը և ինչպես է այն իրականացվում:
4. Ի՞նչ իրենից ներկայացնում վարկային քաղաքականությունը:
5. Ի՞նչ հիմնական կետեր է ներառում վարկավորման տեխնիկան:
6. Ի՞նչ է իրենից ներկայացնում բանկային ռիսկը և որո՞նք են դրա տեսակները:
7. Ի՞նչ է իրենից ներկայացնում վարկային ռիսկը և որո՞նք են դրա մակարդակի վրա ազդող հիմնական գործոնները:
8. Ի՞նչ է իրենից ներկայացնում վարկառուի վարկունակությունը և որո՞նք են դրա հինգ կողմերը:
9. Ի՞նչ նպատակ է հետապնդում հաճախորդի վարկունակության վերլուծության ընթացքում ճյուղային և ֆինանսական կողմերի վերլուծությունը:
10. Ի՞նչ նպատակ է հետապնդում հաճախորդի վարկունակության վերլուծության ընթացքում կառավարչական և վարկի ապահովվածության որակի կողմերի վերլուծությունը:
11. Ինչպիսի՞ չափանիշներ են օգտագործվում վարկառուի ֆինանսական վիճակի գնահատման համար:

Թեմա 4. Հաճախորդի վարկունակությունը և դրա որոշման մեթոդները:

Թեմայի նպատակը: Սույն թեմայում ներկայացվում են բանկային վարկավորման գործընթացում հաճախորդի նախկին գործունեության վերլուծության անհրաժեշտությունը վարկունակության որոշման համար, մանրամասն քննարկվում են վարկունակության որոշման մեթոդները:

Ներկայացվում են հաճախորդի վարկունակության գնահատման նպատակով հաշվարկվող գործակիցները, գործարար ռիսկի վերլուծությունը և այդ ամենի հիման վրա հաճախորդի վարկունակության դասի որոշումը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ունկնդիրները կկարողանան՝

- ներկայացնել հաճախորդի վարկունակության հասկացությունը
- ներկայացնել հաճախորդի վարկունակության, հետևապես նաև՝ վարկային ռիսկի գնահատման եղանակները
- ներկայացնել վարկունակության չափանիշները
- ներկայացնել հաճախորդի վարկունակության գնահատումը դրամական հոսքի վերլուծության հիման վրա
- ներկայացնել գործարար ռիսկի վերլուծությունը որպես վարկունակության գնահատման միջոց
- ներկայացնել հաճախորդների վարկունակության գնահատման ֆինանսական գործակիցների հիման վրա վարկունակության դասի որոշումը
- ներկայացնել ֆիզիկական անձանց վարկունակության դասի որոշումը
- ներկայացնել վարկային հայտերի գնահատման բալային համակարգը
- բնութագրել վարկային ռիսկի կառավարումը և դրա արդյունավետ համակարգը
- ներկայացնել վարկային ռիսկի կառավարման հիմքում ընկած սկզբունքները
- տարանջատել բանկերի առավել բնորոշ սխալները, որոնք հանգեցնում են կորուստների
- բնութագրել ներքին վերահսկողության դերը
- բնութագրել տեղեկատվական համակարգի դերը:

4.1. Հաճախորդի վարկունակության հասկացությունը և չափանիշները

Ֆինանսական կառավարման համակարգում գնալով էլ ավելի է կարևորվում ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացը:

Վարկային ռիսկի գնահատումը, առաջին հերթին, ենթադրում է հաճախորդի վարկունակության գնահատում: Այս կապակցությամբ գոյություն ունեն վարկունակության, հետևապես նաև՝ վարկային ռիսկի գնահատման երեք եղանակներ.

ա) ֆինանսական գործակիցների համակարգի հիման վրա վարկառուի ֆինանսական վիճակի վերլուծության

բ) վարկառուի դրամական հոսքերի վերլուծության

գ) գործարարության ռիսկի վերլուծության մեթոդները:

Դրանք փոխադարձաբար լրացնում են միմյանց: Այսպես, եթե գործարարության ռիսկի վերլուծությունը թույլ է տալիս հաճախորդի վարկունակությունը գնահատել գործարքի կնքման պահին՝ մեկ վարկային գործառնության և դրա հետ կապված դրամական հոսքի հիման վրա, ապա ֆինանսական գործակիցների համակարգը կանխատեսում է ռիսկը՝ հաշվի առած նրա ամբողջական պարտքը և ձևավորված միտումները: Դրամական հոսքերի վերլուծությունը ոչ միայն գնահատում է հաճախորդի վարկունակությունը ամբողջությամբ, այլ նաև ցույց է տալիս նոր վարկերի սահմանային չափերը, կազմակերպության կառավարման թույլ տեղերը:

Ռիսկերի մակարդակն ընդամենապես և վարկային ռիսկի մակարդակը, մասնավորապես, կարելի է գնահատել երեք աստիճանով.

- ◆ բարձր
- ◆ չափավոր
- ◆ ցածր:

Վարկային ռիսկի բարձր աստիճանը վկայում է այն մասին, որ վարկային ներդրումներն ամբողջությամբ կարող են վերածվել կորստի:

Չափավոր վարկային ռիսկը ծագում է այն ժամանակ, երբ բանկը կորցնում է վարկի գծով հիմնական պարտքի միայն մի մասը և ռիսկը դեռևս գտնվում է թույլատրելի սահմաններում:

Ցածր վարկային ռիսկը աննշան ռիսկն է, որը թույլ է տալիս բանկին ստանալ կայուն շահույթ:

Վարկ տրամադրելու որոշում ընդունելիս հարկ է, որ բոլոր այս կետերը վարկատուի (բանկի) տեսանկյունից լինեն բավարար: Սակայն պետք է նշել, որ բացի մի քանի ցուցանիշներից, նշված ցուցանիշները չեն կարող անմիջապես արտահայտվել թվային մեծություններով: Նման դեպքերում դրանց նշանակում են բալային գնահատականներ:

Չնայած նրան, որ բոլոր բանկերին բնորոշ են արտաքին և ներքին, հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերը, յուրաքանչյուր բանկի համար ծագում են նրան բնորոշող ռիսկեր՝ տարբեր աստիճաններով և ազդեցության ուղղություններով, պայմանավորված բանկի հիմնական գործունեության բնագավառով:

Հաճախորդի վարկունակությունը փոխառուի կողմից իր պարտավորությունների ամբողջությամբ և սահմանված ժամկետներում մարելու ունակությունն է:

Չարկավոր է տարբերել վարկառուի վարկունակությունն ու վճարունակությունը:

Վճարունակությունը ցուցանիշ է, որի վրա հիմնվում են հաճախորդի վարկունակությունը գնահատելիս:

Միջազգային բանկային պրակտիկան հնարավորություն է տալիս բացահայտել հաճախորդի վարկունակության հետևյալ չափանիշները.

- հաճախորդի բնութագիրը
- միջոցներ փոխ առնելու ունակությունը
- պարտքի մարման նպատակով միջոցներ աշխատելու ունակությունը
- հաճախորդի կապիտալը
- վարկի ապահովվածությունը
- պայմանները, որոնցում իրականացվում է վարկային գործառնությունը
- վերահսկողությունը

Հաճախորդի բնութագիրը – Հաճախորդի վարկային պատմությունը և համբավը, (հեղինակությունը) ղեկավարների համբավը, պատասխանատվության մակարդակը, վարկի նպատակի լիովին պատկերացումը, կառավարիչների պրոֆեսիոնալիզմի մակարդակը, համապատասխանությունը բանկի կողմից իրականացվող վարկային քաղաքականությանը:

Միջոցներ փոխ առնելու ունակությունը – Հաճախորդն իրավունք ունի վարկային հայտ ներկայացնել, ստորագրել վարկային պայմանագիր, բանակցություններ վարել, այսինքն որոշակի իրավասությունների առկայություն տրված տվյալ կազմակերպության լիազոր անձին: Չլիազորված անձի կողմից պայմանագրերի ստորագրման արդյունքում բանկը կարող է կորուստներ կրել:

Պարտքի մարման նպատակով միջոցներ աշխատելու ունակությունը – Ընթացիկ գործունեության ընթացքում դրամական միջոցներ աշխատելու ունակությունը, հաշվեկշռի բարձր իրացվելիությունը, վարկառուի գործունեության արդյունավետությունը:

Հաճախորդի կապիտալը – Հաճախորդի կապիտալի համարժեքությունը և սեփական միջոցներով վարկային գործառնությանը հաճախորդի մասնակցության աստիճանը:

Վարկի ապահովվածությունը – Հաճախորդի ընդհանուր ակտիվների արժեքը և վարկի մարման կոնկրետ երկրորդային աղբյուրը /գրավ, երաշխիք, ապահովագրություն/: Եթե ակտիվների արժեքի և պարտավորությունների հարաբերությունը հաճախորդի սնանկացման դեպքում նշանակություն ունի վարկի մարման համար, ապա երկրորդային աղբյուրների որակը երաշխավորում է վարկի մարումը սահմանված ժամկետում: Նշված ապահովվածությունները առանձնապես կարևոր են բանկի հաճախորդի մոտ անբավարար դրամական միջոցների հոսքի դեպքում, որը նշանակում է, որ հաճախորդը կարող է ունենալ ընթացիկ իրացվելիության հիմնախնդիրներ:

Պայմանները, որոնցում իրականացվում է վարկային գործառնությունը – Երկրի ընթացիկ կամ կանխատեսված տնտեսական վիճակը, քաղաքական որոշ գործոններ և այլն:

Այս պայմանները որոշում են բանկի արտաքին ռիսկի աստիճանը և հետագայում հաշվի են առնվում հաճախորդի դրամական հոսքերը, հաշվեկշռի իրացվելիությունը, կապիտալի բավարարությունը, կառավարման մակարդակը:

Վերահսկողությունը – Հաճախորդի գործունեության վերահսկողությունը բանկի կողմից սահմանված ստանդարտներին համապատասխան:

Վերոհիշյալ չափանիշների համաձայն հաճախորդի վարկունակության վերլուծությունը թույլ է տալիս ձևավորել վերլուծության մեթոդները.

- գործարար ռիսկի գնահատումը
- կառավարման գնահատումը
- ֆինանսական գործակիցների հիման վրա հաճախորդի ֆինանսական կայունության գնահատումը
- դրամական հոսքերի վերլուծությունը
- հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը
- հաճախորդի գործունեության վերահսկումը

4.2. Վարկունակության գնահատումը դրամական հոսքի վերլուծության հիման վրա

Ընդհանրապես վարկառուներն ունենում են իրենց ստացած վարկերի մարման երեք աղբյուր.

- կանխիկի հոսք
- ակտիվների իրացում կամ վաճառք
- նոր պարտավորությունների ստանձնում կամ արժեթղթերի թողարկմամբ միջոցների ներգրավում:

Ներկայացված միջոցներից յուրաքանչյուրը կարող է ապահովել բավարար միջոցների հոսք՝ բանկային վարկի մարման համար: Բանկերը, որպես վարկի մարման հիմնական աղբյուր, գերադասում են ընտրել կանխիկի հոսքը, քանի որ ակտիվների վաճառքը կարող է վատթարացնել վարկառուի հաշվեկշիռը: Դրամական հոսքերի անբավարարությունը հանդիսանում է վարկառուի ֆինանսական կայունության և վարկատուի հետ հարաբերությունների վատթարացման տարածված ցուցանիշ:

Ուստի, ցանկացած վարկային հայտի քննարկման առանցքային հարցն է պարզել, թե կարող է արդյո՞ք վարկառուն ստանալ բավարար դրամական միջոցներ կամ կանխիկի հոսք՝ վարկը մարելու համար: Դրամական միջոցների աղբյուրների բացահայտումը և վերլուծությունը կարևոր է ցանկացած տնտեսական գործունեության

համար: Դրանց հիման վրա են կատարվում աշխատողներին և պարտատերերին վճարումները: Դրամական հոսքերի պլանավորումը ունի անհամեմատ մեծ նշանակություն հատկապես այն ժամանակաշրջաններում, երբ կազմակերպությունը բախվում է կանխիկ միջոցների անբավարարության խնդրին:

Դրամական միջոցների հոսքը հաշվետու ժամանակաշրջանում տնտեսվարող սուբյեկտի կողմից կատարված դրամական վճարումների և դրամական մուտքերի ամբողջությունը: Տարբերում են դրական և բացասական դրամական հոսքեր՝ կախված դրամական վճարումների և դրամական մուտքերի տարբերությունից: Այդ տարբերությունը կոչվում է զուտ դրամական հոսք:

Պաշարների, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, այլ ակտիվների ու պարտավորությունների փոփոխությունը տարբեր կերպ է ազդում դրամական հոսքի մեծության վրա: Այսպես, պաշարների մնացորդի, դեբիտորների և այլ պասիվների աճը նշանակում է միջոցների արտահոսք, իսկ իսկ դրանց փոքրացումը՝ միջոցների ներհոսք: Միաժամանակ կրեդիտորների աճը դիտարկվում է որպես միջոցների ներհոսք, իսկ դրանց նվազեցումը՝ արտահոսք: Հիմնական միջոցների իրացման գնի գերազանցումը հաշվեկշռային արժեքին դիտարկվում որպես միջոցների ներհոսք, իսկ հակառակ իրավիճակը՝ արտահոսք:

Վարկառուն, որի մոտ մեծ տեսակարար կշիռ են կազմում կրեդիտորական պարտավորությունները, ունի ապրանքահոսքային պաշարների կամ չվճարված ապրանքների մեծ կուտակում, դեբիտորական պարտքերի ստացման ռիսկավորություններ, ամենայն հավանականությամբ, բանկի համար կոառնա խնդրահարույց հաճախորդ:

Դրամական հոսքի վերլուծության համար վերցվում են առնվազն վերջին երեք տարվա տվյալները: Եթե միջոցների ներհոսքը կայուն կերպով գերազանցում է արտահոսքին, ապա դա վկայում է նրա ֆինանսական կայունության վարկունակության մասին, և հակառակը:

Համեմատաբար երկար ժամկետով վարկի տրամադրման նպատակահարմարության հարցը լուծելու համար դրամական հոսքի վերլուծությունը կատարվում է ոչ միայն անցած, այլ նաև պլանավորվող՝ վարկի օգտագործման ժամանակաշրջանի տվյալների հիման վրա:

▪ Ընդհանուր դրամական հոսքի և հաճախորդի պարտքային պարտավորությունների չափի հարաբերակցության հիման վրա որոշվում է նրա վարկունակության դասը:

4.3. Հաճախորդների վարկունակության գնահատման ֆինանսական գործակիցների հիման վրա վարկունակության դասի որոշումը

Ֆինանսական գործակիցների հիման վրա հաճախորդի ֆինանսական կայունության գնահատումն իր մեջ ներառում է հետևյալ հիմնական գործակիցները.

- բացարձակ իրացվելիության գործակից
- միջանկյալ ծածկման գործակից
- ծածկման ընդհանուր գործակից
- ֆինանսական անկախության գործակից

Իրացվելիության տակ հասկացվում է պարտավորությունները ժամանակին մարելու հաճախորդի ունակությունը:

Իրացվելիության և ծածկման գործակիցները բնութագրում են հաճախորդի հաշվեկշռի իրացվելիությունը որպես պարտավորությունների մարման նպատակով ակտիվների փոխարկում դրամական միջոցների: Այդ նպատակով հաշվեկշռում ակտիվները իրացվելիության աստիճանից կախված բաժանվում են.

ա/ կարճաժամկետ ակտիվների

բ/ երկարաժամկետ ակտիվների

գ/ հիմնական միջոցների

Պարտավորությունները և կապիտալը բաժանվում են.

ա/ կարճաժամկետ պարտավորությունների

բ/ երկարաժամկետ պարտավորությունների

գ/ կանոնադրական կապիտալի և ֆոնդերի

Կարճաժամկետ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների համեմատությունը բնութագրում է հաճախորդի ընթացիկ իրացվելիության գործակիցը, այսինքն ցույց է տալիս թե որքանով է կարճաժամկետ պարտավորությունների մարումն ապահովված կարճաժամկետ ակտիվներով.

$$Q_{\text{բ}} = (\Gamma\text{Մ} + ԿՖ\text{Ն}) / Կ\text{Պ}$$

որտեղ՝

$Q_{\text{բ}}$ - բացարձակ իրացվելիության գործակից

$\Gamma\text{Մ}$ - դրամական միջոցներ

$ԿՖ\text{Ն}$ - կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ

$Կ\text{Պ}$ - կարճաժամկետ պարտավորություններ

Նորմատիվային սահմանը այս գործակցի համար տատանվում է 0,2 – 0,25:

Միջանկյալ ծածկման գործակիցը ցույց է տալիս, թե արդյոք հաճախորդն ի վիճակի է սահմանված ժամկետներում մարել իր կարճաժամկետ պարտավորությունները: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q_{\text{ս}} = (\Gamma\text{Մ} + ԿՖ\text{Ն} + Դ\text{Պ}) / Կ\text{Պ}$$

որտեղ՝

ԴՊ - դերիտորական պարտավորություններն են:

Նորմատիվային սահմանը այս գործակցի համար տատանվում է 0,7 – 0,8:

Ծածկման ընդհանուր գործակից կամ ընդհանուր իրացվելիության գործակից – հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q_{\text{ԸԻ}} = (Q_{\text{Մ}} + Q_{\text{ՖՆ}} + Q_{\text{Դ}} + Q_{\text{ԱՆԴ}}) / Q_{\text{Դ}}$$

որտեղ՝

ԱՆԴ - ապրանքանյութական պաշարներն են:

Նորմատիվային սահմանը այս գործակցի համար տատանվում է 1 – 2,5:

Ֆինանսական անկախության գործակիցը – բնութագրում է իր առօրյա գործունեությունն իրականացնելու համար կազմակերպության ապահովվածությունը սեփական միջոցներով: Այն որոշվում է սեփական կապիտալի և ընդհանուր հաշվեկշռի գումարի հարաբերությամբ և հաշվարկվում է տոկոսային արտահայտությամբ:

$$Q_{\text{ՖԱ}} = U / A$$

որտեղ՝

U - սեփական կապիտալ

A - հաշվեկշռի գումար

Օպտիմալ տարբերակը, որն ապահովում է բավականին կայուն ֆինանսական վիճակ ներդրողների և վարկատուների մոտ 50 – 60% մակարդակն է:

Վերոհիշյալ գործակիցների հաշվարկի հիման վրա վարկունակության վերլուծության արդյունքում վարկառուներն ըստ վարկունակության դասակարգվում են 3 դասի:

Տարբեր բանկերի կողմից վարկունակության և վճարունակության որոշումն իրականացվում է տարբեր ֆինանսական գործակիցների հաշվարկման հիման վրա:

Ներքոհիշյալ օրինակում վարկունակության որոշումը կիրականացվի վերոհիշյալ գործակիցների հիման վրա:

Նախ ընտրվում են վարկառուների ըստ վարկունակության դասակարգման պայմանները, ելնելով գործակիցների մեծություններից:

Աղյուսակ 1. Վարկառուների դասակարգման պայմանները

Գործակիցներ	1-ին դաս	2-րդ դաս	3-րդ դաս
Q _{ԸԻ}	0,2 և ավելի	0,15 – 0,2	0,15 – ից ցածր
Q _{ՄԾ}	0,8 և ավելի	0,5 – 0,8	0,5- ից ցածր
Q _{ԸԻ}	2,0 և ավելի	1,0 – 2,0	1,0 – ից ցածր
Q _{ՖԱ}	60% - ից բարձր	40 – 60%	40% – ից ցածր

Վարկունակության որոշման նպատակով կարող են օգտագործվել նաև այլ գործակիցներ, օրինակ գործարար ակտիվության գործակից, ֆինանսական կայունության գործակից, շահութաբերության գործակից և այլն:

Օպտիմալ գործակիցների ընտրության հարցը կախված է վարկառուի գործունեության բնույթից, և հիմնականում որոշվում է բանկի կողմից:

Վարկունակության գնահատականը կարելի է ներկայացնել մեկ միասնական ցուցանիշի՝ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՆԻՇԻ (ՈԵՅՏԻՆԳԻ) միջոցով: Վարկանիշը ներկայացվում է միավորների միջոցով, իսկ բալերի հաշվարկն իրականացվում է յուրաքանչյուր գործակցի (Q_{ԸԻ}, Q_{ՄԾ}, Q_{ԸԻ}, Q_{ՖԱ}) դասի (1, 2, 3) և ընդհանուրի մեջ այդ գործակցի մասնաբաժնի (համապատասխանաբար 30%, 20,30,20%):

Այսպես, 1-ին դասին են վերաբերվում այն վարկառուները, որոնց ընդհանուր բալերի քանակը կլինի 100 – 150, 2-րդ դասին՝ վարկառուները, որոնց ընդհանուր բալերի քանակը կլինի 151 – 250, 3-րդ դասին՝ վարկառուները, որոնց ընդհանուր բալերի քանակը կլինի 251 – 300:

Աղյուսակ 2. 1-ին կարգի իրացվելի ակտիվներ

Ցուցանիշներ	Գումար հազար դրամ
Դրամարկը	3
Հաշվարկային հաշիվ	120
Արտարժույթային հաշիվ	42
Այլ դրամական միջոցներ	35
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ	100
ԸՆԴԱՄԵՆԸ	300

Աղյուսակ 3. 2-րդ կարգի իրացվելի ակտիվներ

Ցուցանիշներ	Գումար հազար դրամ
Ղեկավարողական պարտքեր	7,200
Կանխավճարներ մատակարարներին և կապալառուներին	0
ԸՆԴԱՄԵՆԸ	7,200

Աղյուսակ 4. 3-րդ կարգի իրացվելի ակտիվներ

Ցուցանիշներ	Գումար հազար դրամ
Պաշարներ հանած ծախսեր	20,000
ԸՆԴԱՄԵՆԸ	20,000

Աղյուսակ 4. Պարտավորությունների կառուցվածքը և ծավալը

Ցուցանիշներ	Գումար հազար դրամ
Բանկերի երկարաժամկետ վարկեր	10,000
Երկարաժամկետ պարտավորություններ	0
Բանկերի կարճաժամկետ վարկեր	9,400
Կարճաժամկետ վարկեր	20
Կրեդիտորական պարտքեր և այլ կարճաժամկետ պարտավորութ.	5,580
ԸՆԴԱՄԵՆԸ	25,000
այդ թվում կարճաժամկետ պարտավորություններ	15,000
Սեփական կապիտալ	25,000
ԸՆԴԱՄԵՆԸ	50,000

Այստեղից,

$$\begin{aligned} Q_{\text{ԲԻ}} &= 0,02 & [300 : 15,000] \\ Q_{\text{ՍԾ}} &= 0,5 & [(300 + 7,200) : 15,000] \\ Q_{\text{ԸԻ}} &= 1,8 & [(300 + 7,200 + 20,000) : 15,000] \\ Q_{\text{ՖԱ}} &= 50\% & (25,000 \times 100 : 50,000) \end{aligned}$$

Մեր բերած օրինակում փոխառում պատկանում է $Q_{\text{ԲԻ}}$ գծով 3-րդ դասին, իսկ մնացած գործակիցների գծով 2-րդ դասին:

Այնուհետև հաշվարկվում է փոխառուի ռեյտինգը.

Աղյուսակ 5. Փոխառուի ռեյտինգը

Ցուցանիշը	Պատ	Մասնաբաժինը %	Բալերի հաշվարկը
$Q_{\text{ԲԻ}}$	3	30	$3 \times 30 = 90$
$Q_{\text{ՍԾ}}$	2	20	$2 \times 20 = 40$
$Q_{\text{ԸԻ}}$	2	30	$2 \times 30 = 60$
$Q_{\text{ՖԱ}}$	2	20	$2 \times 20 = 40$
ԸՆԴԱՄԵՆԸ		100	230

Այսպիսով, բալերի ընդհանուր քանակով փոխառում պատկանում է վարկունակության 2-րդ դասին: Ելնելով վարկունակության դասերից, բանկի և տարբեր հաճախորդների միջև վարկային հարաբերությունները տարբեր ձևով են կազմվում: Այսպես, 1-ին դասի վարկունակության հաճախորդներին բանկը կարող է բացել վարկային գծեր, օվերդրաֆտներ, տրամադրել ձևաթղթային վարկեր և նրանց նկատմամբ կիրառել ցածր [տոկոսադրույքներ](#):

Վարկունակության 2-րդ կարգի վարկառուների վարկավորումն իրականացվում է սովորական կարգով համապատասխան ապահովվածության/երաշխիք, գրավ, ապահովագրական պոլիս/ առկայության դեպքում: Տոկոսադրույքը համապատասխանաբար կախված է ապահովության ձևից:

Վարկունակության 3-րդ կարգի փոխառուների վարկավորումը կապված է որոշակի ռիսկի հետ: Հիմնականում բանկերը խուսափում են նման հաճախորդներին վարկավորելուց: Եթե վարկավորման որոշում

այնուամենայնիվ կայացվել է, ապա վարկի գումարը չպետք է գերազանցի փոխառուի կանոնադրական կապիտալի չափը, իսկ տոկոսադրույքը սահմանվում է բավականին բարձր:

Մանր և միջին ձեռնարկությունների վարկունակության գնահատականը տրվում է նույն ձևով, սակայն այս դեպքում կան որոշակի յուրահատկություններ:

Այսպես, շատ դեպքերում մանր և միջին ձեռնարկությունների ղեկավարները և աշխատակիցները հանդիսանում են միևնույն ընտանիքի անդամներ, և այս դեպքում հնարավոր է անձնական կապիտալի և ձեռնարկության կապիտալի նույնացում: Այդ նպատակով հիմնականում վարկի մարման ապահովության նպատակով բանկի կողմից ձեռնարկության սեփականատերերից պահանջվում է անձնական գույքով երաշխավորություն:

Այս դեպքում ներկայացվում է անձնական ֆինանսական հաշվետվություն, որն իր մեջ պարունակում է տեղեկատվություն ֆիզիկական անձի ակտիվների և պասիվների վերաբերյալ: Ակտիվներ են հանդիսանում ձեռնարկության սեփականատիրոջ անձնական գույքը, դրամական միջոցները, բաժնետոմսերը և այլն: Պասիվներ են հանդիսանում անձի ունեցած պարտքերը բանկերին, բարեկամներին, հարկային պարտավորությունները, վճարման ենթակա ապահովագրական վճարները և այլն:

Այսպիսով, մանր և միջին ձեռնարկությունների վարկունակության գնահատման համակարգը ներառում է հետևյալը.

- Գործարար ռիսկի գնահատում
- Հաճախորդի աշխատանքի ուսումնասիրում
- Բանկի աշխատակցի և ձեռնարկատիրոջ անձնական զրույց
- Սեփականատիրոջ անձնական ֆինանսական վիճակի գնահատում:

4.4. Գործարար ռիսկի վերլուծությունը որպես վարկունակության գնահատման միջոց

Բանկի կողմից փոխառուի վարկունակության որոշման գործում բավականին դեր ունի նաև փոխառուի հետ կապված գործարար ռիսկի վերլուծությունը:

Գործարար ռիսկը - այն հանգամանքի հետ կապված ռիսկն է, որ փոխառուի ֆոնդերի շրջապատույտը կարող է ժամանակին և սպասվող արդյունավետությամբ չավարտվել:

Գործարար ռիսկի գործոններ կարող են հանդիսանալ տարբեր պատճառներ, որոնք հանգեցնում են ֆոնդերի շրջապատույտի ընդհատմանը կամ ուշացմանը:

Գործարար ռիսկի գործոններն ըստ շրջապատույտի փուլերի կարելի է խմբավորել.

I փուլ – պաշարների ստեղծում

- մատակարարների քանակը և նրանց վստահելիությունը
- պահեստային տնտեսության որակը և հզորությունը
- տեղափոխման միջոցների համապատասխանությունը բեռների բնույթին
- հումքի գների և նրանց տեղափոխման հասանելիությունը փոխառուին
- հումքի և նյութերի արտադրողների և գնորդների միջև միջնորդների առկայությունը
- մատակարարի գտնվելու վայրի հեռավորությունը
- տնտեսական գործոններ
- արտադրության ռիսկի գործոններ
- ներմուծվող հումքի ներկրման և այլ երկրից արտահանման սահմանափակումների վտանգը

II փուլ - արտադրության փուլ

- բանվորական ուժի առկայությունը և որակավորումը
- սարքավորման հզորությունը և տարիքը
- արտադրական տարածքների վիճակը

III փուլ – իրացման փուլ

- գնորդների քանակը և նրանց վճարունակությունը
- դեբիտորների դիվերսիֆիկացիան
- գնորդների չվճարումներից պաշտպանվածության մակարդակը
- ճյուղում մրցակցության աստիճանը
- պատրաստի արտադրանքի գնի վրա տարբեր ավանդական, տնտեսական կամ քաղաքական գործոնների ազդեցության մակարդակը
- դեմոգրաֆիկ գործոններ
- արտադրության ռիսկի գործոններ
- արտահանվող հումքի արտահանման և այլ երկրի ներկրման սահմանափակումների վտանգը:

Ամենաբարձր ռիսկն այս պարագայում III փուլի մեջ ներառվող ռիսկն է:

Գործարար ռիսկի գնահատականը նույնպես տրվում է բալային համակարգով, այսինքն յուրաքանչյուր գործոնի առանձին բալային գնահատական է տրվում և այնուհետև գումարային բալի միջոցով տրվում է ընդհանուր գնահատական: Որքան բարձր է բալերի գումարը այնքան մեծ է գործարարի արդյունավետության և փոխառուի կողմից վարկի մարման հավանականությունը:

4.5. Ֆիզիկական անձի վարկունակության դասի որոշումը

Ֆիզիկական անձանց վարկունակության գնահատականը սպառողական վարկ տրամադրելու դեպքում հիմնվում է պահանջվող վարկի գումարի և հաճախորդի անձնական եկամտի հարաբերության, ֆինանսական դրության և գույքի, ընտանիքի կազմի, անձի բնութագրերի, ունեցած վարկային պատմության վրա:

Եվրոպական երկրներում (մասնավորապես Ֆրանսիայում) ֆիզիկական անձանց վարկունակության գնահատականը տրվում է վարկային սթորինգի միջոցով:

Վարկի տրամադրման նպատակահարմարության որոշման ծրագիրն իր մեջ ներառում է 3 բաժին.

վարկի մասին տեղեկատվություն

հաճախորդի վերաբերյալ տեղեկություն

հաճախորդի ֆինանսական դրության վերաբերյալ տեղեկատվություն:

Առաջին բաժինը ներառում է բանկի այն աշխատակցի մասին տվյալներ, ով տրամադրում է վարկը, նշվում է հաճախորդի վարկային գործի համարը, աշխատանքի վայրը, տրամադրվող վարկի տեսակը, մարման ձևը, տոկոսադրույքը, վարկի տրամադրման և մարման ամսաթիվը, ապահովագրման անհրաժեշտության վերաբերյալ կարծիք և այլն:

Երկրորդ բաժինը ներառում է հաճախորդի մասնագիտության մասին տեղեկություն, որոշակի սոցիալական խմբի պատկանելության, տարեկան զուտ աշխատավարձի, տարեկան ծախսումների, աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկություն:

Երրորդ բաժինն իր մեջ ներառում է հաճախորդի ֆինանսական վիճակի մասին տեղեկություններ – հաշիվներում եղած գումարային մնացորդներ, ծախսերի և եկամուտների հարաբերակցություն և այլն:

Այս տեղեկությունների հիման վրա հնարավոր է դառնում տալ եզրակացություն վարկի տրամադրման վերաբերյալ:

ԱՄՆ-ում ֆիզիկական անձանց վարկունակության գնահատականի հիմքը հանդիսանում է նրա վարկային պատմությունը: Բանկն օգտագործում է հաճախորդի կողմից բանկ ներկայացրած դիմումի մեջ արտացոլված տվյալները. անունը, հասցեն, բնակության վայրը, սոցիալական ապահովության համարը: Այս տվյալների հիման վրա այլ բանկերից, վարկային քարտեր թողարկող և այլ կազմակերպություններից հավաքվում է տեղեկություն բոլոր չվճարման դեպքերի մասին, եթե այդպիսիք կան: Բանկին հետաքրքրում են չվճարված գումարների մեծությունը, ժամկետանց օրերի թիվը, ժամկետանց պարտավորությունների մարման ձևերը և այլն: Այս ամենի հիման վրա ձևավորվում է հաճախորդի վարկային պատմությունը:

Վարկային պատմությունից բացի ԱՄՆ բանկերը ֆիզիկական անձանց վարկունակության գնահատականը տալուց հաշվի են առնում նաև հետևյալ ցուցանիշները. պարտքի և եկամուտների հարաբերակցությունը, եկամտի կայունությունը և մեկ վայրում աշխատանքի տևողությունը, մեկ հասցեով բնակության տևողությունը, կապիտալի ծավալը և այլն:

4.5.1. Սպառողական վարկ ստանալու հայտի գնահատումը

Սպառողական վարկ ստանալու ցանկացած հայտ վերլուծելու վճռորոշ գործոններն են, ինչպես արդեն նշվեց, փոխառուի բնավորությունը (характер) և նրա վճարունակությունը: Վարկային գործակալը պետք է վստահ լինի, որ փոխառուն պատասխանատվություն է զգում վարկի լրիվ և ժամանակին մարման համար: Ավելին, նրա եկամուտների և արժեք ներկայացնող ակտիվների՝ արժեթղթեր, ավանդներ և այլն, ծավալը այնքան պետք է լինի, որ վարկային գործակալը վստահ լինի, թե փոխառուն ունակ է առանց մեծ ջանքեր գործադրելու մարել վարկը:

Հաճախ *փոխառուի բնավորությունը* բացահայտվում է հայտում նշված վարկավորման նպատակը վերլուծելիս: Վարկային տեսուչը պետք է վստահ լինի, որ հաճախորդը հստակ ցույց է տվել, թե ուր են ուղղվել ստացված միջոցները և արդյոք փոխառուն վարկը մարելու անկեղծ մտադրություն ունի:

Այն դեպքում, երբ փոխառուն չունի վարկային պատմություն, կամ անցյալում ճշտապահ չի եղել պարտավորությունները կատարելիս, նրանից կարող են պահանջել մեկ ուրիշ անձի ստորագրություն կամ երաշխավորություն, ում վրա կտարածվի վարկը մարելու պատասխանատվությունը:

Եկամտի մակարդակը: Սպառողական վարկերով զբաղվող գործակալները մեծ նշանակություն են տալիս ֆիզիկական անձանց եկամտի չափին և կայունությանը: Նրանք նման տեղեկություն ստանում են վարկառուի աշխատանքի վայրից:

Ավանդի մեծությունը: Եկամտի չափը և կայունության անուղղակի գնահատականն է հաճախորդի մեկ օրվա հաշվով ունեցած միջին ավանդի մեծությունը:

Զբաղվածության և բնակավայրի կայունությունը հաշվառվող գործոններ են վարկառուի բնավորությունը որոշելիս:

Պարտքի բուրգը՝ պարտքի ավելացումը (նվազումը) հաճախորդի ամենամսյա եկամուտների նկատմամբ:

Գոյություն ունի արդյո՞ք սպառողական վարկ ստանալու հավանականությունը մեծացնող միջոց: Դրական գործոններից է տան սեփականության իրավունքը, ինչպես նաև այլ ցանկացած անշարժ գույքի սեփականության իրավունք, արժեթղթեր ունենալը և այլն: Նույնիսկ եթե այլ ունեցվածքը հանդես չի գալիս վարկի ապահովվածություն, մա վկայում է կայունության և դրամական միջոցները կառավարելու ունակության առկայության մասին:

4.5.2. Հայտերի գնահատման բալային համակարգը (Վարկային ՄԿՈՐԻՆԳ)

Այս համակարգը հիմնականում հիմնվում է դիսկրիմինանտ մոդելների վրա:

Գնահատման համար հիմք են հանդիսանում ներքոհիշյալ կետերը, որոնք նշվում են վարկային հայտում:
Յուրաքանչյուր կետի համար տրվում է բալ (1 - 10):

Օրինակ՝		Հաճախորդի զբաղվածության ոլորտը	(0 - 10)
1 - 1	մենեջեր		10
1 - 2	որակյալ բանվոր		8
1 - 3	գործակալ		7
1 - 4	ուսանող		5
1 - 5	ոչ որակյալ բանվոր		4
1 - 6	ոչ լրիվ աշխատանքային օր		2
		Բնակարանով ապահովվածությունը	(0 - 6)
2 - 1	սեփական տուն		6
2 - 2	վարձակալած տուն		4
2 - 3	ընկերոջ կամ բարեկամի մոտ է ապրում		2
		Վարկային ռեյտինգը	(0 - 10)
3 - 1	գերազանց		10
3 - 2	միջին		5
3 - 3	ինֆորմացիա չկա		2
3 - 4	վատ		0
		Աշխատանքի տևողությունը	(0 - 5)
4 - 1	1 տարուց ավելի		5
4 - 2	1 տարուց պակաս		2
		Տվյալ հասցեով ապրելը	(0 - 2)
5 - 1	մեկ տարուց ավելի		2
5 - 2	մեկ տարուց պակաս		1
		Հեռախոսի առկայությունը	(0 - 2)
6 - 1	կա		2
6 - 2	չկա		0
		Խնամքի տակ անձանց թիվը	(0 - 4)
7 - 1	չկա		3
7 - 2	1		3
7 - 3	2		4
7 - 4	3		4
7 - 5	3-ից ավելի		2
		Բանկային հաշիվների առկայությունը	(0 - 4)
8 - 1	չեկային և խնայողական հաշիվ		4
8 - 2	միայն խնայողական հաշիվ		3
8 - 3	միայն չեկային հաշիվ		2
8 - 4	չկա		0

Նման բալային համակարգով հնարավոր է որոշել վարկ տալու և չտալու հարցը, ինչպես նաև վարկի մեծությունը:

Ընդհանուրը 28 բալից ցածր գնահատականի դեպքում վարկային հայտը մերժվում է, այսինքն կայացվում է որոշում վարկի դիմումի մերժման վերաբերյալ: Ընդհանուրը 28 բալից ավելի գնահատականի դեպքում առաջարկվում է հետևյալ սանդղակը, որտեղ վարկի գումարի մեծությունը ուղղակիորեն կախվածության մեջ է դրվում վարկային սկորինգից.

29 - 30 բալ	500 ԱՄՆ դոլարին համարժեք
31 - 33 բալ	1,000 ԱՄՆ դոլարին համարժեք
34 - 36 բալ	2,500 ԱՄՆ դոլարին համարժեք
37- 38 բալ	3,500 ԱՄՆ դոլարին համարժեք
39 - 40 բալ	5,000 ԱՄՆ դոլարին համարժեք
41- 43 բալ	8,000 ԱՄՆ դոլարին համարժեք

Նման համակարգը չի հաշվարկում «անճանական» գնահատումը, և բանկը իր հաճախորդների մի մասին կորցնելու ռիսկի է ենթարկվում: Բացի այդ, այս համակարգը չպետք է պարունակի դիսկրիմինացիոն մոտեցումներ (տարիքային, ռասսայական, ընտանեկան վիճակ և այլն):

4.6. Վարկային ռիսկի կառավարումը

Վարկային ռիսկի կառավարումը՝ դրա նվազեցմանն ուղղված համալիր գործողությունների համակարգ է, որը ներառում է վարկային ռիսկի կանխատեսումը, կառավարման ռազմավարության մշակումը և իրագործումը, ռիսկի հնարավոր չափերի և հետևանքների որոշումը, հնարավոր կորուստների կանխարգելման և նվազեցման միջոցառումների իրականացումը:

Վարկային ռիսկի կարգավորման հիմնական խնդիրը շահութաբերության, անվտանգության և վճարունակության գործակիցների ընդունելի հարաբերակցության պահպանումն է: Ռիսկի մակարդակի կառավարումը ենթադրում է մի շարք գործողությունների իրականացում, սկսած ռիսկի մոնիտորինգից ընդհուպ մինչև դրա արժեքային գնահատումը, պորբլեմային վարկերի վերականգնումը:

Ռիսկերի կառավարման ռազմավարության նպատակները և խնդիրներն առավելապես որոշվում են անընդհատ փոփոխվող արտաքին տնտեսական միջավայրով, որտեղ գործում է բանկը: Ոստի հաջող վարկավորման համար բանկը պետք է մշակի և ներդնի վարկային ռիսկի կառավարման ճկուն համակարգ:

Նման համակարգի հանգուցային տարրերն են՝

- վարկային գործունեության կազմակերպական ապահովումը
- սահմանաքանակների սահմանումը
- վարկային հայտի քննարկումը և հավանական վարկառուի վարկունակության գնահատումը
- վարկերի դասակարգումը ըստ վարկային ռիսկի մակարդակի
- վարկի տոկոսադրույթի որոշումը
- վարկավորման վերաբերյալ որոշումներ ընդունելիս իրավասությունների բաշխումը
- վարկային մոնիտորինգը
- վարկային պորտֆելի կառավարումը
- պորբլեմային (անհուսալի ճանաչված և հաշվեկշիռից դուրս գրված) վարկերի վերականգնումը:

Բանկի կողմից ռիսկերից պաշտպանվածության կառավարման գործընթացը կոչվում է *հեջավորում* կամ հեջինգ: Հեջինգը հնարավոր կորուստների ռիսկը նվազագույնին հասցնելու գործընթացն է: Հեջավորման բացակայությունը կարող է ունենալ հիմնականում երկու պատճառ: Նախ, բանկը կարող է տեղյակ չլինել ռիսկերի գոյության կամ դրանց փոքրացման հնարավորությունների առկայության մասին: Երկրորդ, նա կարող է համարել, որ պայմանները (օրինակ՝ արտաբերության փոխարժեքները և տոկոսադրույթները) չեն փոխվելու, կամ փոխվելու են հոգուտ իրեն: Արդյունքում՝ բանկի սպասումները կարողարացվեն կամ նա վնասներ կկրի:

Իր գործունեությունը իրականացնելիս բանկը պետք է կարողանա ստանձնել այնպիսի ռիսկեր, որոնք ի վիճակի լինի հետագայում ճիշտ գնահատել և արդյունավետ կառավարել:

Վարկային ռիսկի կառավարման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

վարկային ռիսկի հետ կապված հնարավոր կորուստների կամ այդ կորուստների առաջացման աղբյուրների կանխատեսումը,

ռիսկերի ֆինանսավորումը,

ռիսկերի կառավարման քաղաքականության և մեխանիզմների հստակությունը,

բանկի ղեկավարների և աշխատակիցների պատասխանատվության և պարտականության սահմանումը, բանկի բոլոր ստորաբաժանումների և ծառայությունների կողմից ռիսկերի կորոդինացված վերահսկումը: Վարկային ռիսկի կառավարման գործընթացի վերջնական և կարևոր փուլը դրա ծագման կանխարգելումը կամ նվազեցումն է: Դրանց ուղղված միջոցներից են երաշխիքները, գրավը, վարկերի և ավանդների ապահովագրման ինստիտուտը, փոխառուի վճարունակության գնահատումը, վարկային պայմանագրի պայմանները, մեկ փոխառուին տրվող վարկերի չափերի կրճատումը և այլն: Եթե հնարավոր չէ ռիսկերն ամբողջությամբ կանխել, ապա դրանց կարգավորման վերջին միջոցը փոխհատուցումը, որը ներառում է.

- բանկի կողմից ծախսերի հաշվին ստեղծվող պահուստների ձևավորումը,
- ծախսերի հաշվին համապատասխան կորուստների (անհուսալի ճանաչված վարկերի) դուրսգրումը,
- վարկի տոկոսների կուտակման դադարեցումը:

Կարելի է տարանջատել բանկերի առավել բնորոշ սխալները, որոնք ռիսկերի կառավարման վերջնական փուլում հանգեցնում են կորուստների:

Դրանցից են՝

- վարկային ներդրումների ծավալների վտանգավոր մեծացում, երբ վարկային ներդրումների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը կազմում է 65% և ավելի,
- տարամադրվող վարկերի կամ դրանց ժամկետների երկարաձգման հետևանքով բանկի իրացվելիության և այլ ցուցանիշների վատթարացումը,
- ըստ ճյուղերի, գործառնությունների տեսակների և այլ հատկանիշների վարկային ռիսկի տեղաբաշխման օրինակներ, ցածր մակարդակը,
- վարկային պայմանագրերով սահմանված ժամկետների հաճախակի վերանայումները,
- առանց ապահովվածության վարկերի տրամադրումը,
- բանկի հետ կապված անձանց հետ վարկային գործարքների մեծ ծավալը,
- վարկերի վերադարձվելիության ապահովման ոչ արդյունավետ միջոցների կիրառումը,
- վարկերի դասակարգման մեխանիզմի բացակայությունը կամ դրանց ոչ ճիշտ իրականացումը,
- տրամադրվող դիմաց բանկի կողմից առաջարկվող չհիմնավորված բարձր տոկոսարույթները,
- ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետային անհամապատասխանությունը,
- արտարժույթային միջոցների մեծ ծավալների առկայությունը,
- բանկի ծախսերի ակնհայտ աճման միտումները,
- բանկի եկամուտների ակնհայտ նվազման միտումը և այլն:

♦ Վարկերի որակը գնահատելիս պետք է առանձնակի ուշադրություն դարձնել կառավարման տեղեկատվական համակարգին: Բանկի ղեկավարումը պետք է մշակի և ներդնի այնպիսի տեղեկատվական համակարգ, որն ապահովում է ճշգրիտ որոշումների կայացման համար անհրաժեշտ տեղեկատվություն: Նման տեղեկատվություն կարելի է ապահովել խելամիտ վարկային քաղաքականության, արդյունավետ ներքին վերահսկողության և վարկավորման գործընթացի փաստաթղթավորման միջոցով:

Բանկի վարկային ռիսկի կառավարման գործընթացը պետք է լինի դրա նվազեցմանն ուղղված *ներքին վերահսկողության համակարգի* շարունակությունը:

Ներքին վերահսկողության արդյունավետ համակարգը բանկի կառավարման կարևոր բաղադրիչ և անվտանգ գործունեության հիմք է: Այն պետք է ապահովի նաև բանկի առջև դրված խնդիրների և նպատակների իրականացումը, նպաստի երկարատև շահութաբերության ապովմանը, օրենսդրության շրջանակներում գործունեության ծավալմանը, որդեգրած վարկային քաղաքականության իրականացման գործընթացին, ինչպես նաև անսպասելի կորուստների կրճատմանը, բանկի խնդի բարձրացմանը:

Ներքին վերահսկողությունը ներառում է կազմակերպական ծրագրերը և ակտիվների անվտանգության, հաշվեկշռային տվյալների ճշգրտության ստուգման, կառավարչական ռազմավարության խթանման համար այլ տարբեր կոորդինացիոն մեթոդներ:

Վերահսկողական գործունեությունը պետք է լինի բանկի ամենօրյա գործունեության կարևոր մասը: Ներքին վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու համար գործադիր ղեկավարությունը պետք է կազմակերպի համապատասխան հսկողական համակարգ, սահմանի վերահսկողական գործունեությունը բանկի գործունեության յուրաքանչյուր մակարդակում: Այս շրջանակում պետք է ներառվեն կատարողական հաշվետվությունները, գործունեության և համապատասխանությունը պահանջվող նորմերին և սահմանաչափերին:

Կարևոր հարց է նաև, թե ղեկավարությունը որքանով է հետևում իր իսկ նախընտրած քաղաքականության հիմնական ուղղություններին: Այդ իսկ պատճառով վարկի կառավարման արդյունավետության տեսանկյունից շատ կարևոր է կառավարման տեղեկատվական համակարգի արդյունավետության գնահատումը բանկի ներքին վերահսկողության կողմից, որը ներառում է.

- վարկերի վերաբերյալ հաշվետվությունները, որոնք արագ և առանց դժվարությունների հասանելի են կառավարման մարմիններին և ղեկավարությանը,
- ժամկետանց վարկերի հաշվառման, մոնիտորինգի և հավաքագրման գործընթացները,
- պորթֆելային վարկառուների ցուցակի կազմումը,
- բանկի քաղաքականության հետ չհամատեղվող վարկերի մասին հաշվետվությունները,
- չմարված վարկերի պահանջի իրավունքի փոխանցման վերաբերյալ հաշվետվությունները,
- ըստ վարկառուների, արդյունաբերության ճյուղերի վարկային ներդրումների, դրանց ապահովվածության և այլնի համակենտրոնացման մասին տեղեկատվություն:

Կառավարման տեղեկատվական համակարգը պետք է լինի լայնածավալ և ներառի ներքին ֆինանսական, գործառնական, արտաքին ռեկայի նախանշանների և պայմանների վերաբերյալ տվյալներ, որոնք վերաբերվում իրականացվող որոշումներին:

Չադրողակցման ուղիները պետք է արդյունավետ լինեն ապահովելու համար ղեկավարության լրիվ իրազեկությունը այն և իրադարձությունների վերաբերյալ, որոնք կարող են ազդել բանկի պարտականությունների կատարման վրա:

Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պետք է ունենան համապատասխան մասնագիտական պատրաստվածություն, իրենց պարտականությունների իրականացման առումով: Ներքին աուդիտի գործունեությունը պետք անկախ լինի և հաշվետու լինի միայն [բանկի](#) խորհրդին:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ եք հասկանում հաճախորդի վարկունակություն ասելով և որոնք են դրա չափանիշները:
2. Ինչպե՞ս կարող եք գնահատել վարկառուի վարկունակությունը՝ նրա դրամական հոսքերի վերլուծության հիման վրա:
3. Ի՞նչ է իրենից ներկայացնում հաճախորդի վարկունակության գնահատումը ֆինանսական գործակիցների հիման վրա:
4. Ի՞նչ հիմնական գործակիցներ են կիրառվում հաճախորդի վարկունակության գնահատման համար:
5. Հաշվեկշռային ի՞նչ ցուցանիշներ են օգտագործվում վարկունակության գնահատման ժամանակ:
6. Ի՞նչ է իրենից ներկայացնում գործարար ռիսկը և ի՞նչ փուլեր է այն ներառում:
7. Ինչպե՞ս է իրականացվում ֆիզիկական անձանց վարկունակության գնահատումը:
8. Ի՞նչ է վարկային սկորինգը:
9. Ի՞նչպես է իրականացվում սպառողական վարկային հայտի գնահատումը վարկային սկորինգի համակարգով:
10. Ի՞նչ է իրենից ներկայացնում վարկային ռիսկի կառավարումը:
11. Որո՞նք են վարկային ռիսկի կառավարման ճկուն համակարգի հանգուցային տարրերը:
12. Ի՞նչ է իրենից ներկայացնում հեջինգը:
13. Որո՞նք են վարկային ռիսկի կառավարման հիմքում ընկած սկզբունքները:
14. Որո՞նք են բանկերի առավել բնորոշ սխալները, որոնք հանգեցնում են կորուստների:
15. Որո՞նք են բանկի վարկավորման ներքին ստանդարտները:
16. Ինչպե՞ս կարող եք բնութագրել բանկի ներքին վերահսկողության դերը վարկային ռիսկի կառավարման գործընթացում:
17. Ինչպե՞ս կարող եք բնութագրել տեղեկատվական համակարգի դերը վարկային ռիսկի կառավարման գործընթացում:

Թեմա 5. Տիպային վարկային պայմանագիրը և նրա բաժինները:

Թեմայի նպատակը: Սույն թեմայում ներկայացվում է բանկային վարկավորման գործընթացում բանկի և հաճախորդի միջև կնքվող վարկային պայմանագիրը և նրա բաժինները: Մանրամասն քննարկվում են վարկային պայմանագրի իրավական և տնտեսական հիմքերը:

Թեմայում պարզաբանվում են տիպային վարկային պայմանագրի բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները, ներկայացվում են առանձին բաժինների տիպային բովանդակությունները:

Հակիրճ ձևով ներկայացվում է նաև բանկային պրակտիկայում վարկային պայմանագրերի օգտագործման միջազգային փորձը:

Ուսանողությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ունկնդիրները կկարողանան՝

- ներկայացնել վարկային պայմանագրի իրավական և տնտեսական հիմքերը
- բնութագրել վարկային պայմանագրի բովանդակության նկատմամբ ներկայացվող հիմնական պահանջները
- բնութագրել վարկային պայմանագրի առանձին բաժինները
- ներկայացնել բանկային պրակտիկայում վարկային պայմանագրերի օգտագործման միջազգային փորձը:

5.1. Բանկի և հաճախորդի միջև կնքվող վարկային պայմանագրի իրավական և տնտեսական հիմքերը

Շուկայական տնտեսությունը իրավահավասար և հավասար պատասխանատվություն կրող գործընկերների միջև պայմանագրային հարաբերությունների տնտեսություն է:

Բանկի կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկավորման յուրահատկություններից է յուրաքանչյուր վարկային գործարքի պայմանագրային բնույթը:

Բանկի և հաճախորդի միջև կնքվող վարկային պայմանագիրը որոշում է վարկային գործարքի իրավական և տնտեսական պայմանները:

Վարկային պայմանագիրը հանդիսանում է իրավաբանական փաստաթուղթ և նրա կետերը ենթակա են պարտադիր կատարման կողմերի համար:

Վարկային պայմանագրի իրավական բնույթը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածներով (ՀՀ քաղ. օրենսգրքի գլուխ 47):

Վարկային պայմանագրում արտացոլված իրավական հարաբերությունների էությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ներկայացվում է հետևյալ կերպ. «Վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից»:

Որպես իրավաբանական փաստաթուղթ վարկային պայմանագիրը կարգավորում է կողմերի միջև տվյալ վարկային գործարքի գծով ծագած հարցերի ամբողջությունը:

Վարկային պայմանագրում շեշտվում են. կողմերի անվանումները, պայմանագրի գործողության ժամկետը, վարկային գործարքի առարկան և պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտավորությունները, այդ պարտավորությունների կատարման իրավական երաշխիքները:

Այդպիսի իրավական երաշխիքներ են. վարկառուի իրավական կարգավիճակը, վարկի վերադարձնելու բնույթը ապահովվածության միջոցները (գրավ, երաշխիք, ապահովագրություն), կողմերից մեկի պարտավորությունների խախտման համար նախատեսված պատժամիջոցները, վարկային պայմանագրի անվավերության կամ չեղյալ հայտարարման դեպքերը:

Վարկառուի իրավական կարգավիճակն անհրաժեշտ է նախ նրա գործունակության հիմնավորման նպատակով, երկրորդ՝ գործունեության արդյունքների համար պատասխանատու անձանց շրջանակի բացահայտման նպատակով:

Ելնելով իրավական կարգավիճակից տարբերում են. մասնավոր ձեռնարկություններ և ընկերություններ:

Վարկային պայմանագիրը կնքվում է գրավոր: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է վարկային պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առոչինչ է:

Որպեսզի վարկային պայմանագիրը իրավաբանորեն ճիշտ ձևակերպվի, անհրաժեշտ է բանկի և հաճախորդի իրավաբանների ակտիվ մասնակցություն այդ գործին:

Իրավական տեսանկյունից վարկային պայմանագիրն ունի մի շարք առանձնահատկություններ:

Իր իրավական բնույթով վարկային պայմանագիրը միավորում է կողմերի մտադրությունը և այդ մտադրության իրականացումը: Մտադրության գծով վարկային պայմանագիրն արտացոլում է որոշակի պայմաններով վարկ տրամադրելու բանկի համաձայնությունը և փոխառուի պատրաստակամությունը վերադարձնելու այդ վարկը որոշակի ժամանակ անց: Որպես մտադրության իրականացում վարկային պայմանագիրը նախատեսում է վարկի տրամադրման և մարման կոնկրետ գործողություններ:

Վարկային պայմանագրի առանձնահատկություններից է նաև այն հանգամանքը, որ չնայած ֆորմալ տեսանկյունից կողմերը իրավահավասար են, բանկը հանդես է գալիս որպես ուժեղ կողմ: Դա արտահայտվում է նրանում, որ բանկը առանձին դեպքերում հաճախորդին պարտադրում է իր պայմանները, որոնք ոչ միշտ են տնտեսապես հիմնավորված: Օրինակ, վարկային պայմանագրում կարող է նախատեսվել կետ, համաձայն որի

վարկի տրամադրման օր է համարվում ոչ թե հաճախորդի հաշվին գումարի մուտքագրման օրը (եթե հաշիվն այլ բանկում է), այլ գումարի փոխանցման օրը:

Միաժամանակ վարկային պայմանագիրը կարգավորում է վարկային գործարքի տնտեսական պայմանները: Մի կողմից բավարարվում են հաճախորդի պահանջմունքները (ընթացիկ ծախսերի բավարարում, օվերդրաֆտ, նպատակային վարկեր), մյուս կողմից բանկն իրականացնում է իր գործունեությունը (տոկոսադրույքի սահմանում, գրավի ձևակերպում և այլն):

5.2. Վարկային պայմանագրի բովանդակության նկատմամբ ներկայացվող հիմնական պահանջները

Ըստ բովանդակության և ձևի յուրաքանչյուր վարկային պայմանագիր հիմնվում է 4 հիմնական սկզբունքների վրա՝ ամուր իրավական հիմք, կամավոր մասնակցություն գործարքին, կողմերի իրար նկատմամբ շահագրգռություն, գործարքի պայմանների համաձայնություն:

Վարկային գործարքի իրավական հիմքը կազմում են օրենքները և այլ իրավական ու նորմատիվային ակտերը, որոնք վերաբերում են ողջ տնտեսությանը և բանկային համակարգին:

Կամավորության սկզբունքը պայմանագրի կնքման ժամանակ արտահայտվում է հաճախորդի կողմից բանկի ազատ ընտրության, բանկի կողմից վարկավորման որոշման կայացման ազատության մեջ: Երկու կողմերն էլ կամավոր են մտնում պայմանագրային հարաբերությունների մեջ:

Երկկողմանի շահագրգռության սկզբունքը պայմանավորում է վարկային գործարքի պայմանների համաձայնեցման հնարավորությունը: Կողմերից յուրաքանչյուրը փորձում է գտնել իր շահերի բավարարման օպտիմալ տարբերակ: Վարկային պայմանագիրը կնքելիս անհրաժեշտ է հաշվի առնել էական և լրացուցիչ պայմանների առկայությունը:

Էական են համարվում այն պայմանները, որոնք որոշում են վարկային պայմանագրի կնքման հնարավորությունը: Դրանք ընդգրկում են. կողմերի անվանումները, պայմանագրի ժամկետը, պայմանագրի առարկան և գումարը, վարկի տրամադրման և մարման կարգը, վարկի օգտագործման դիմաց վճարի մակարդակը, վարկի վերադարձելիության ապահովման ձևը, կողմերի պատասխանատվությունը:

Լրացուցիչ պայմաններն ուղղված են վարկի վերադարձելիության ապահովման համար լրացուցիչ պայմանների ստեղծմանը: Սրանք ընդգրկում են. վարկառուի կողմից վարկունակության որոշակի մակարդակի ապահովման պարտավորությունները, հաշվառման և հաշվետվության անհրաժեշտ պայմանները, գրավադրված արժեքների պահպանությունը, բանկային վերահսկողության կանոնների պահպանումը, առանց բանկին տեղյակ պահելու վարկառուի վերականգնվողման արգելումը և այլն:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, վարկային պայմանագրի ընդհանուր սխեման կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

Ներածական

I. Պայմանագրի առարկան և գումարը

II. Վարկի տրամադրման և մարման կարգը

III. Վարկի դիմաց վճարը (տոկոսադրույքը)

IV. Վարկի վերադարձելիության ապահովման միջոցները

V. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

VI. Կողմերի պատասխանատվությունը

VII. Պայմանագրի լրացուցիչ պայմանները

VIII. Վեճերի կարգավորումը

IX. Պայմանագրի գործողության ժամկետը

X. Կողմերի իրավաբանական հասցեները, ստորագրությունները:

Ներածականում ներկայացվում է վարկային գործարքի մասնակիցների, որպես իրավաբանական անձանց, հիմնական վավերապայմանները. փոխառուների համար՝ անվանումը, ենթակայությունը, հաշվարկային հաշվի համարը, բանկի համար՝ անվանումը, տեղաբաշխումը: Այստեղ անհրաժեշտ է նշել նաև կողմերի իրավաբանական կարգավիճակները: Սա կարևոր է այն անձանց շրջանակը պարզելու համար, ովքեր նյութական պատասխանատվություն են կրում կազմակերպության գործունեության արդյունքների համար:

Առաջին բաժնում՝ «Պայմանագրի առարկան և գումարը» արտացոլվում է վարկային գործարքի օբյեկտի քանակական և որակական բնութագիրը:

Վարկային գործարքի օբյեկտի քանակական բնութագիրը վարկի գումարի նպատակային ուղղվածության և վարկավորման օբյեկտի կառուցվածքի ներկայացումն է: Միջազգային պրակտիկայում նշված չափանիշներով վարկի տեսակները դասակարգվում են.

1. Կախված նպատակներից վարկը կարող է ուղղված լինել.

- ընթացիկ արտադրական պահանջմունքների բավարարմանը
- առևտրամիջնորդային պահանջների բավարարմանը
- ներդրումային կարիքների բավարարմանը
- սպառողական նպատակներով:

2. Կախված տնտեսական բովանդակությունից, վարկավորման օբյեկտ են հանդիսանում հետևյալ վարկերը.

- վճարմունքներն իրականացնելու համար միջոցների անբավարարության համար

- ապրանքանյութական պաշարների ձևավորման համար
 - արժեթղթերի ձեռքբերման համար
 - արտադրական ծախսերի համար
 - անշարժ գույքի ձեռքբերման համար
 - այլ վարկեր:
3. Կախված օբյեկտի կենտրոնացվածությունից, վարկերը լինում են.
- խոշորացված
 - համախմբված
 - վարկի առանձին պահանջարկ

Բացի վարկի օբյեկտից այս բաժնում արտացոլվում է նաև վարկի գումարը, որը տալիս է վարկի քանակական բնութագիրը:

Երկրորդ բաժինը բնութագրում է «Վարկի տրամադրման և մարման կարգը»: Խոշորացված կամ համախմբված օբյեկտի վարկավորումը, որպես կանոն, իրականացվում է սիստեմատիկ կերպով, այդ պատճառով վարկի տրամադրումն իրականացվում է ամփոփապես վճարման պահին՝ շրջանցելով հաշվարկային հաշիվը: Վարկի մարումը նույնպես կատարվում է սիստեմատիկ կերպով՝ հաշվարկային հաշվից նախօրոք կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում:

Առանձին օբյեկտների վարկավորումը այլ տրամադրման և մարման մեխանիզմ ունի, որը պետք է նշված լինի վարկային պայմանագրում: Այսպես, հնարավոր է վարկի ամբողջ գումարի կամ մասնակի գումարների տրամադրում և մարում: Համապատասխանաբար, վարկային պայմանագրում նշվում են տրամադրման և մարման գումարները և ժամկետները: Վարկի տրամադրումը կարող է իրականացվել ինչպես միանգամից վճարումների կատարման, այնպես էլ հաշվարկային հաշվին փոխանցման ճանապարհով: Երկրորդ դեպքում պարտադիր պետք է նախատեսված լինի վարկի օգտագործման նպատակը և բանկի կողմից վերահսկման մեխանիզմները:

Նույն բաժնում անհրաժեշտ է արտացոլել տրամադրվող վարկի առավելագույն սահմանաչափի կարգավորման միջոցը. վարկային գիծ, սահմանաչափ:

Վարկային պայմանագրի երրորդ բաժինը արտացոլում է վարկի օգտագործման դիմաց բանկին վճարվող տոկոսագումարների մակարդակը (տոկոսադրույքը):

Այս բաժնում նշվում են հետևյալ [տոկոսադրույքները](#).

- ժամկետային վարկի տոկոսադրույք
- երկարաձգման դեպքում գործող տոկոսադրույք
- ժամկետանց վարկի և տոկոսագումարների տոկոսադրույք:

Բացի այդ, վարկային պայմանագրում կարող են նախատեսվել տոկոսադրույքների փոփոխման հետևյալ տարբերակները.

- առանց հաճախորդի հետ լրացուցիչ համաձայնության, հիմք ընդունելով վարկի տոկոսադրույքը, որը կապակցված է Կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսադրույքի հետ
- հաճախորդի հետ համաձայնեցնելով նոր տոկոսադրույքը:

Վարկային պայմանագրի չորրորդ բաժինը հաստատագրում է վարկի վերադարձելիության ապահովման միջոցները:

Վարկի ապահովման միջոց են հանդիսանում համապատասխան գույքի գրավադրումը, երաշխիքները, վարկային ռիսկի ապահովագրումը և այլն: Վարկային պայմանագրում նշվում են նաև վարկի մարման երկրորդային աղբյուրները: Վարկի վերադարձելիության ապահովումը ամրագրվում է հատուկ փաստաթղթերով՝ գրավի պայմանագրով, երաշխիք նամակով, ապահովագրական պոլիսով, որոնք համարվում են վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

Վարկային պայմանագրի հինգերորդ բաժինն արտացոլում է կողմերի իրավունքներն ու պարտավորությունները:

Բանկի պարտավորություններից են համապատասխան գումարով, ձևով և ժամկետներով վարկի տրամադրումը: Այս պարտավորության խախտման դեպքում նախատեսվում են որոշակի տուգանքներ, որոնք վճարում է բանկը հաճախորդի օգտին: Սակայն միաժամանակ վարկային պայմանագրում հնարավոր է նախատեսել վարկի լրիվ կամ մասնակի տրամադրումից հրաժարվելու բանկի իրավունքը, եթե պարզվում է, որ հաճախորդն ի վիճակի չի լինի վարկը հետ վերադարձնել:

Բանկի պարտավորությունները կարող են կրել նաև նպաստավոր բնույթ՝ խորհրդատվական ծառայությունների, համապատասխան տեղեկատվության տրամադրում և այլն: Սակայն, ընդհանուր առմամբ, բանկի պարտավորություններն այնքան էլ լայն չեն:

Բավականին լայն են հաճախորդի պարտավորությունները: Նրանք ուղղված են վարկի նպատակային օգտագործմանը, վարկի և տոկոսագումարների ժամանակին և ամբողջովին մարմանը: Այդ պատճառով հաճախորդի պարտավորություններն անմիջապես վերաբերվում են վարկավորման սկզբունքների պահպանմանը: Հաճախորդի հնարավոր պարտավորությունները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

- ընդհանուր բնույթի
- որոշակի համապատասխան ֆինանսական մակարդակի պահպանմանը վերաբերող
- բանկին ներկայացվող հաշվետվություններին և հաշվառմանը վերաբերող:

Ընդհանուր բնույթի պարտավորություններն ընդգրկում են վարկի նպատակային օգտագործման, վարկի և տոկոսագումարի ժամանակին և ամբողջովին մարման, առանց բանկին տեղյակ պահելու իր իրավաբանական կարգավիճակի չփոփոխման վերաբերյալ և այլ պայմաններ:

Որոշակի համապատասխան ֆինանսական մակարդակի պահպանմանը վերաբերող վարկառուի պարտավորությունները կարող են արտահայտվել վարկունակության որոշակի նորմատիվների պահպանման ձևով, ծածկման, իրացվելիության, սեփական շրջանառու միջոցներով ապահովման և այլ գործակիցների որոշակի մակարդակների պահպանման ձևով:

Բանկին ներկայացվող հաշվետվություններին և հաշվառմանը վերաբերող հաճախորդի պարտավորությունները կախված են բանկի կողմից վարկի վերադարձելիության իրականացվող վերահսկման կազմակերպման վիճակից: Կասկածների դեպքում բանկը կարող է հաճախորդից պահանջել աուդիտի անցկացում և արդյունքների ներկայացում բանկ: Միաժամանակ բանկը պետք է հավանություն տա ընտրված աուդիտ կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքին: Այս ամենը պետք է արտացոլված լինի վարկային պայմանագրում:

Այս ամենի հետ վարկային պայմանագրում կարող է նախատեսված լինել որոշակի այլ հաշվետվության և տեղեկատվության տրամադրում, որը կարող է հավաստել, որ վարկը կմարվի ժամանակին և լրիվ գումարով:

Վարկային պայմանագրի առանձին ենթաբաժնով կարելի է առանձնացնել բանկային վերահսկողության կազմակերպման հարցերը: Սա առանձնապես կարևոր է երկարաժամկետ վարկավորման դեպքում և այստեղ անհրաժեշտ է նախատեսել բանկի իրավունքը հաճախորդի ֆինանսական վիճակի, վարկունակության, վարկի նպատակային օգտագործման, ապահովվածության ստուգման վերաբերյալ և այլն:

Վարկային պայմանագրի վեցերորդ բաժինը՝ «Կողմերի պատասխանատվությունը», կոնկրետացնում է պայմանագրի մասնակիցներից յուրաքանչյուրի կողմից վարկային պայմանագրի պայմանների խախտման դեպքերը և համապատասխան տույժերն ու տուգանքները:

Վարկային պայմանագրի յոթերորդ բաժինը՝ «Պայմանագրի լրացուցիչ պայմաններ», անհրաժեշտության դեպքում ֆիքսվում է այլ պայմաններ, որոնք հաշվի չեն առնվել մյուս բաժիններում: Այդ պայմաններից են վարկային գումարի սահմանաչափի փոփոխման կարգը, վարկային պայմանագրի փոփոխման և լրացման կարգը և այլն:

Վարկային պայմանագրի ութերորդ բաժինը՝ «Վեճերի կարգավորումը», ընդգրկում է.

- կողմերի վեճերի կարգավորումը բանակցությունների միջոցով
- բանակցությունների միջոցով փոխշահավետ լուծում չգտնելու դեպքում դատարան դիմելու կարգը:

Վարկային պայմանագրի իններորդ բաժնում ֆիքսվում է վարկային պայմանագրի գործողության ժամկետը: Հիմնականում այն գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:

Վարկային պայմանագրի տասներորդ բաժնում արտացոլվում են կողմերի իրավաբանական հասցեները, ստորագրությունները և կնիքները:

Ներկայացրած ձևը տիպային վարկային պայմանագիրն է, որը սակայն կարող է բանկերի կողմից փոփոխվել կախված վարկի ծավալից, ձևից, ժամկետից և այլն:

5.3. Բանկային պրակտիկայում վարկային պայմանագրերի օգտագործման միջազգային փորձը

Արտասահմանյան բանկերը վարկային գործարքների կատարման ժամանակ վարկային պայմանագրերի օգտագործման բավականին փորձ են կուտակել:

Արտասահմանյան բանկերի կողմից կնքված վարկային պայմանագրերի գլխավոր առանձնահատկություններն են.

- իրավական կուլտուրայի բարձր մակարդակը
- վարկային գործարքի մանրամասն բնութագիրը
- վարկային պայմանագրերի տիպայնությունը:

Վարկային պայմանագրերի իրավական բարձր կուլտուրան պայմանավորված է բանկային, տնտեսական և քաղաքացիական զարգացած օրենսդրությամբ, պայմանագրերի կազմմանը բանկի և հաճախորդի իրավաբանների ակտիվ մասնակցությամբ, իրավաբանական կադրերի բարձր պրոֆեսիոնալիզմով, վարկային պայմանագրերի օգտագործման հարուստ փորձով:

Ճապոնիայում առկա է բանկի իրավաբանների իրավաբանական գրասենյակների հետ մշտական համագործակցության պրակտիկա, որը թույլ է տալիս գտնել ամենաբարդ հարցերի արդյունավետ լուծումներ, ձեռք բերել դատական գործընթացում գտնվող վարկային պայմանագրերի գծով զանազան օպերատիվ տեղեկատվություն և այլն: Այստեղ իրատարակվել է բանկային հարցերի վերաբերյալ օրենքների գիրք, որի մեջ բերված են տարբեր դեպքեր և դրանց գծով տրված լուծումներ: Իրականացվում է իրավաբանների սիստեմատիկ ուսուցում և վերապատրաստում:

Տարբեր երկրների վարկային պայմանագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք բավականին ծավալուն են՝ մինչև 20 տպագիր էջ: Դա վկայում է վարկային պայմանագրերում լայնածավալ պայմանների առկայության մասին:

Օրինակ ԱՄՆ-ում վարկային պայմանագրի ծավալը կախված է վարկի ժամկետայնությունից. կարճաժամկետ վարկերի համար օգտագործվում է կրճատված պայմանագիր:

Առավել մանրամասն վարկային պայմանագիրը ընդգրկում է.

1. հաճախորդի մասին ընդհանուր տվյալները.
 - անվանումը, իրավական կարգավիճակը, գրանցման վայրը և ամսաթիվը
 - հաճախորդի գործունեության տեսակը
 - վարկային պայմանագիրը ստորագրող անձանց իրավասությունների հաստատումը
 - հարկերի ժամանակին վճարման հաստատումը
2. վարկային պայմանագրի հիմնական տարրերը (գումարը, ժամկետը, նպատակը)
3. հաստատող պայմանները.
 - համապատասխան հաշվետվության ներկայացում բանկ
 - բանկի աշխատակիցներին թույլ տալ կատարելու ֆինանսական վիճակի և հաշվետվությունների ստուգում
 - հետևել տվյալ երկրում գործող օրենսդրությանը
 - պահպանել առկա մեներջմենթը
 - բանկում պահել հաշվարկային հաշվի որոշակի նվազագույն մնացորդ
 - պահպանել ծածկման, իրացվելիության գործակիցների, դրամական հոսքերի, մուտքերի որոշակի մակարդակ

բացառող պայմանները.

- առանց բանկին տեղյակ պահելու ակտիվների վաճառք չիրականացնել
- միևնույն արժեքի կրկնակի գրավադրում չիրականացնել
- չգերազանցել ղեկավար աշխատակիցներին կատարվող վճարների որոշակի սահմանաչափը
- չգերազանցել վճարվող մասնաբաժինների որոշակի սահմանաչափը

վարկի մարման երաշխիքները**պայմանագրի պայմանների չկատարման համար նախատեսվող պատժամիջոցները****անվճարումակ և սնանկ ճանաչելը****բանկի իրավունքները պարտքի չվճարման դեպքում:**

Միաժամանակ վարկային պայմանագրին կից կազմվում է առանձին պարտավորագիր, որտեղ նշվում են կողմերի անվանումները, վարկի գումարը, ժամկետը, վարկի և տոկոսագումարների վճարման և մարման կարգը և այլ մանրամասներ, որոնք ներառված են վարկային պայմանագրում:

Վարկային պայմանագրերի օգտագործման այլ պրակտիկա է ընդունված Գերմանիայում: Այստեղ միևնույն համակարգի բանկերի (մասնավոր, խնայողական և այլն) համար հաստատված են ընդհանուր վարկային պայմաններ: Ընդհանուր վարկային պայմանների սահմանումը [բանկային ռիսկի](#) նվազեցման միջոցներից է:

Վարկային պայմանագրերի կնքման փուլերը հետևյալն են.

- հաճախորդի կողմից վարկային պայմանագրի բովանդակության ձևավորում
- հաճախորդի կողմից ներկայացված վարկային պայմանագրի տարբերակի քննարկում և վարկավորման վերջնական որոշման ընդունում
- բանկի և հաճախորդի կողմից վարկային պայմանագրի համատեղ ճշտում և ներկայացում իրավաբաններին քննարկման
- վարկային պայմանագրի երկկողմ ստորագրում:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են բանկի և հաճախորդի միջև կնքվող վարկային պայմանագրի իրավական և տնտեսական հիմքերը:
2. Ի՞նչ հիմնական սկզբունքների վրա է կառուցվում վարկային տիպային պայմանագիրը և ինչ էական և լրացուցիչ պայմաններ պետք է հաշվի առնվեն վարկային պայմանագիրը կնքելիս:
3. Ի՞նչ հիմնական պահանջներ են ներկայացվում վարկային պայմանագրի բովանդակությանը:
4. Ներկայացնել վարկային պայմանագրերի միջազգային փորձը և ցույց տալ տարբեր երկրների միջև նմանություններն ու տարբերությունները:
5. Որո՞նք են վարկային պայմանագրի կնքման փուլերը:

Թեմա 6. Վարկային վերահսկողություն

Թեմայի նպատակը: Սույն թեմայում արծարծվում են վարկային վերահսկողության մանրամասները, քննարկվում է վարկի մարմանն ուղղված վերահսկողության համակարգը, այդ խնդրին ուղղված միջոցառումների մշակման ու որոշումների ընդունման հարցերը:

Ուսնակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ունկնդիրները կկարողանան՝

- ներկայացնել վարկային վերահսկողության սկզբունքները
- տալ մոնիտորինգի և վերահսկման սահմանումները
- ներկայացնել վերահսկման դերն ու իրականացման կարգը
- մանրամասն բնութագրել պրոբլեմային վարկերի գծով տարվող աշխատանքը
- դասակարգել ակտիվներն /վարկերը/ ըստ ծախսողման և կորստի ռիսկի
- ներկայացնել վերահսկման այցելությունների գրաֆիկների կազմման և այցելությունների կատարման սկզբունքները:

6.1. Վարկային վերահսկողության սկզբունքները

«Վարկային վերահսկողություն» հասկացությունն իր մեջ ներառում է վարկերի մարմանն ուղղված վերահսկողության համակարգը, այդ խնդրին ուղղված միջոցառումների մշակման ու որոշումների ընդունման հարցերը:

1. Չնայած այն հանգամանքին, որ այսօր բանկային համակարգում օգտագործվում են վարկային մոնիտորինգի զանազան մեթոդներ, դրանք բոլորն էլ հիմնված են մի քանի հիմնական սկզբունքների վրա. բոլոր տեսակի վարկերի պարբերական ստուգում: Յուրաքանչյուր 30, 60, կամ 90 օրը մեկ ստուգվում են բոլոր խոշոր վարկերը, իսկ մանրերը՝ ըստ ընտրության:
2. Ըստ յուրաքանչյուր վարկի բոլոր կարևորագույն պայմանների ստուգման նպատակով վարկային վերահսկման փուլերի մանրամասն մշակում: Այդ կարևորագույն պայմաններից են.
 - վարկի գծով փաստացի վճարումների համապատասխանությունը կատարված նախնական հաշվարկներին (տոկոսագումարների, մասնակի մարումների վճարում)
 - վարկի ապահովվածության որակն ու վիճակը (գրավի որակն ու ընթացիկ վիճակը)
 - համապատասխան փաստաթղթերի ամբողջականությունը, գրավի տնօրինման հնարավորությունը և փոխառուի գծով դատական գործընթաց սկսելու իրավունքի առկայությունը
 - փոխառուի ֆինանսական վիճակի փոփոխության գնահատականը և բանկային վարկի գծով նրա պահանջարկի ավելացման կամ կրճատման գծով կանխատեսումները
 - վարկի գումարի օգտագործման համապատասխանությունը վարկի նպատակին
 - բանկի կողմից իրականացվող վարկային քաղաքականության և ընդունված չափանիշներին տրամադրված վարկի համապատասխանության գնահատում:
3. Պրոբլեմային վարկերի առավել հաճախակի ստուգում և ստուգումների քանակի ավելացում հիմնախնդիրների ավելացմանը զուգընթաց:
4. Վարկերի հաճախակի ստուգում տնտեսական անկման պայմաններում կամ հիմնախնդիրների առաջացման դեպքում այն ճյուղերում, որոնց տրված է վարկը (օրինակ՝ նոր մրցակիցների ի հայտ գալը շուկայում, տեխնոլոգիաների փոփոխության պահանջը արտադրության նոր մեթոդների օգտագործման համար և այլն):

6.2. Մոնիտորինգի և վերահսկման սահմանումները և վերահսկման իրականացման կարգը

Վարկավորման ոլորտում *վերահսկում* և *մոնիտորինգ* հասկացությունները հաճախ գործածվում են որպես հոմանիշներ: Սա ճիշտ չէ և տանում է վարկի վերահսկման նկատմամբ ոչ ճիշտ մոտեցման: Ստորև բերված սահմանումները ցույց են տալիս երկու հասկացությունների միջև առկա տարբերությունը:

1. Մոնիտորինգ
 - դիտորդի դեր, որի նպատակն է գրանցել առաջընթացը, վերլուծել և մեկնաբանել ինֆորմացիան, ինչպես նաև ձևակերպել ճանաչված կամ ակնկալվող հիմնախնդիրների լուծման տարբերակներ
 - գործունեության կանոնավոր ստուգման գործընթացն ըստ նախապես սահմանված նպատակների, պայմանների և չափանիշների:
 2. Վերահսկում
 - այլ մարդկանց կողմից իրականացված գործունեության ուղղորդում և հսկում:
- Այլ մարդկանց գործունեությունը ուղղորդելու և հսկելու համար հարկավոր է ինչ - որ մեկի ֆիզիկական ներկայությունը և պարտադիր չէ, որ վերջինս շարունակական լինի: Այլ մարդկանց գործունեությունը ուղղորդելը և հսկելը ավելի շատ ջանք է պահանջում, քան գործունեություն ձեռնարկելը: Այսինքն, վերահսկողը պետք է տիրապետի այլ մարդկանց ցուցադրելու, խորհուրդ և ուղղություն տալու հմտություններին, որպեսզի նրանք հասնեն իրենց նպատակին:

Վարկառուի կառավարման սահմանափակ հմտությունների առկայությունը ամբողջ աշխարհում վարկային պրակտիկային բնորոշ առանձնահատկություն է և պահանջում է ավելի սերտ հարաբերություններ, քան գրավադրմամբ վարկ տրամադրելու դեպքում: Հայկական բանկերի դեպքում վերահսկումը մեծ մասամբ կլինի միջամտություն, որպեսզի

- ապահովի պլանավորված ֆիզիկական զարգացումը
- ուղղություն տա գործարար մարդուն իր գործունեությունը կառավարելու մեջ
- զարգացնի ձեռնարկատիրոջ գործարար հմտությունները
- վարկառուին օգնի գնահատել իր անցած գործունեությունը և պլանավորել ապագա գործողությունները:

3. Վերահսկման դերը

Վարկի ակտիվ վերահսկումը պետք է արտացոլի վարկատուի նպատակաուղղվածությունը տեսնելու այն գործի հաջողությունը, որին նա աջակցում է: Բացի իր ներդրումը պաշտպանելուց, վարկ տրամադրող բանկը պետք է ուսուցման միջոցով վարկառուներին օգնի զարգացնել նրանց գործարար և կառավարման հմտությունները:

Վերահսկման նախնական այցելություններով վարկային մասնագետը պետք է համոզվի, որ տրամադրված ֆոնդերն օգտագործվել են վարկային պայմանագրում նշված նպատակներով, ընկերության բիզնես պլանին և գնահատման հաշվետվությանը համապատասխան:

Վերահսկման հաջորդական այցելությունների միջոցով վարկային մասնագետը պետք է վերահսկի ընկերության գործունեությունը: Այցելությունների հաճախականությունը պետք է որոշվի վարկառուի գործունեությամբ: Հաջող գործունեություն ծավալող ընկերություններին այցելություններն ավելի հազվադեպ են նվազ հաջողակների համեմատ:

Վարկի վերահսկումը պետք է լինի պրոակտիվ, նպատակ ունենալով նախորոշել բիզնեսի այնպիսի պոտենցիալ հիմնախնդիրներ, որոնք կարող են ազդել վարկի մարման վրա: Այսպիսով վարկառուին հարկավոր է օգնել այդ հիմնախնդիրներից խուսափելու կամ դրանք լուծելու հարցում: Վճարումները կատարելուց հետո պրոակտիվ վերահսկումը համարվում է ձախողումից խուսափելու առաջնային միջոց: Այն վարկային մասնագետի իրականացրած ամենակարևոր գործունեությունն է:

4. Աշխատանք պրոբլեմային վարկերի հետ

Չնայած վարկավորման ծրագրում բանկերի կողմից ներառված ապահովվածության տարրերին, որոշ վարկեր անխուսափելիորեն դառնում են խնդրահարույց /պրոբլեմային/:

Սովորաբար դա նշանակում է, որ փոխառուն ժամանակին չի կատարել մեկ կամ մի քանի վճարումներ կամ վարկի ապահովվածության /գրավի/ արժեքը բավականին նվազել է: Չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր պրոբլեմային վարկ ունի իր առանձնահատկությունները, բոլոր նմանատիպ վարկերին հատուկ են որոշակի ընդհանուր հատկանիշներ, որոնք բանկի աշխատակցին տեղեկացնում են ի հայտ եկած կամ սպասվող դժվարությունների մասին: Այդ հատկանիշներից են.

5. Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման, վճարումների կատարման ուշացումներ, կամ բանկի աշխատաքիցների հետ կապերի խզում:
6. Կազմակերպությունների համար- շահաբաժինների /դիվիդենտների/ վճարումից հրաժարում, փոխառուի վարկային ռեյտինգի փոփոխություն:
7. Փոխառուի արժեթղթերի գնի անբարենպաստ փոփոխություն:
8. Ձուտ վնասի առկայություն:
9. Փոխառուի կապիտալի կառուցվածքի անբարենպաստ փոփոխություն:
10. Փաստացի և պլանավորված վաճառքի ծավալների, դրամական հոսքերի անբարենպաստ շեղումներ:
11. Փոխառուի հաշիվների մնացորդների ծավալների անսպասելի և անբացատրելի անբարենպաստ փոփոխություններ:

Ինչպիսի քայլեր պետք է ձեռնարկվի բանկի աշխատակցի կողմից այն դեպքում, երբ վարկը դարձել է պրոբլեմային: Առաջարկվում են հետևյալ քայլերը.

1. Բանկի միջոցների փոխհատուցման հնարավորությունների մաքսիմիզացում /գրավադրված միջոցների ավելացում և այլն/:
2. Վարկերի հետ կապված ցանկացած հիմնախնդրի արագ բացահայտում: Ուշացումը հանգեցնում է իրավիճակի վատթարացման:
3. Հիմնախնդրի լուծման հնարավոր տարբերակների քննարկման վարկառուի հետ, հատկապես ծախսերի կրճատման, դրամական հոսքերի ավելացման, կառավարիչների կողմից վերահսկման բարելավման տարբերակները: Նման քննարկմանը պետք է նախորդի հիմնախնդրի վերլուծությունը, նրա ի հայտ գալու հնարավոր պատճառները, ինչպես նաև այլ հիմնախնդիրների հայտնաբերումը: Բանկի համար ռիսկի աստիճանի որոշումից և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստումից հետո պետք է մշակվի միջոցառումների նախնական պլան:
4. Պետք է գնահատվեն պրոբլեմային վարկի հետ վերադարձման հետ կապված ծախսերը:
5. Վարկի հետ վերադարձմամբ զբաղվող աշխատակիցները պետք է ուսումնասիրեն հարկային հայտարարագրերը, դատական հայցերը, որպեսզի հայտնաբերեն փոխառուի կողմից չվճարված այլ պարտավորություններ:
6. Վարկային գործակալները տեղում պետք է գնահատեն վարկառու ձեռնարկության ղեկավարության իրավասությունը, վարկառուի գույքը և գործունեությունը:
7. Վարկային գործակալները պետք է քննարկեն պրոբլեմային վարկի մարման բոլոր հնարավոր տարբերակները, այդ թվում՝ նոր, ժամկետային համաձայնության կնքման տարբերակ, եթե հիմնախնդիրները կարճաժամկետ բնույթ են կրում, կամ մշակեն դրամական հոսքերի մեծացմանն ուղղված տարբերակ /ծախսերի կրճատում, իրացման նոր շուկաների հայտնաբերում/:

Բնականաբար, ամենաընդունելի տարբերակը միշտ էլ հանդիսանում է վարկային պայմանագրի պայմանների այնպիսի վերանայումը, որը և բանկին և փոխառուին հնարավորություն է տալիս վերականգնելու նորմալ գործունեությունը:

6.3. Վարկերի դասակարգումը

Վարկային յուրաքանչյուր հաշիվ պետք է դասակարգել ըստ ծախսողման և կորստի ռիսկի: Գոյություն ունեն չորս կարգեր, որոնք հիմնականում սահմանվում են ըստ պարտքերի վաղեմության: Վարկը կարելի է դասակարգել ավելի մեծ ռիսկի կարգում, քան ժամկետանց օրերն են թելադրում, եթե վարկային մասնագետի կարծիքով վերադարձման հավանականությունը փոքր է: Վարկը չի կարելի դասակարգել ավելի քիչ ռիսկ ունեցող խմբում, քան թելադրում է ժամկետանց օրերի թիվը: Ըստ ՀՀ ԿԲ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» (1999թ. հունիսի 4) երրորդ բաժնի 3.1 կետի, հարկավոր է յուրաքանչյուր ամսվա վերջին բանկային օրը վերանայել հաշվի դասակարգումը: Ակտիվների դասակարգման սահմանումները ներկայացվում են ստորև.

Ստանդարտ են դասակարգվում այն ակտիվները, որոնք սպասարկվում են պայմանագրի համաձայն և խնդրահարույց չեն: Որպես կանոն ստանդարտ ակտիվին բնորոշ հատկանիշներն են.

ա/ փոխառուի ֆինանսական վիճակը կասկած չի հարուցում,

բ/ առկա է ակտիվը մարելու փոխառուի բավարար ունակությունը:

Ստանդարտ ակտիվներն ունեն բավարար ապահովվածություն ինչպես հիմնական գումարի, այնպես էլ տոկոսային պարտքի գծով: Ստանդարտ ակտիվների գծով ձևավորվում է միայն ընդհանուր պահուստ:

Հսկվող են դասակարգվում այն ակտիվները, որոնք ամբողջությամբ համապատասխանում են ներկայացված ստանդարտ ակտիվների սահմանմանը, սակայն դրանց հիմնական գումարի /կամ դրա մի մասի/ մարումը կամ տոկոսների վճարումը ուշացել է սահմանված ժամկետից մինչև 90 օր:

Ոչ ստանդարտ ակտիվներն բնորոշ է հետևյալը.

ա/ ժամկետում մարումը հնարավոր չէ փոխառուի դրամական միջոցների անբավարար հոսքի պատճառով

բ/ փոխառուի ֆինանսական ոչ բարվոք վիճակի հետևանքով առաջնային աղբյուրները բավարար չեն. այս դեպքում բանկը պետք է դիմի երկրորդային աղբյուրներին՝ գրավի, գույքի վաճառք, տրված վարկերի պայմանների վերանայում և այլն

գ/ փոխառուի սեփական կապիտալի և ներգրավված միջոցների անբավարար աստիճան ունեցող փոխառու վարկերը, կանխավճարները և նրա նկատմամբ այլ պահանջները:

Նշված ակտիվի դասակարգումը պարզելու համար պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները.

ա/ ակտիվի սպասարկման պայմանների անընդհատ վերանայումները (ձևակերպումները), առանց դրանց զգալի մարման

բ/ փոխառուի ֆինանսական վիճակի հետ կապված նրա կողմից ակտիվի մարման ուղղված նպաստավոր պայմաններով առաջարկ ներկայացնելը

գ/ ոչ համարժեք գրավի առկայությունը և այլն:

Կասկածելի ակտիվներն ունեն ոչ ստանդարտ ակտիվներին բոլոր հատկանիշները, ինչի արդյունքում ակտիվի մարման հավաքագրումը տվյալ պահին դառնում է չափազանց դժվար կամ անհնար, կորուստների հավանականությունը՝ բարձր, կորուստների չափերը պարզ չեն, որը պայմանավորված է մի շարք գործոններով:

Անհուսալի ակտիվներն անհավաքագրելի և ցածրարժեք ակտիվներ են, որոնց հաշվառումը հաշվեկշռում այլևս նպատակահարմար չէ, այս ակտիվները պարունակում են նախորդ ստանդարտներին բնորոշ բոլոր հատկանիշները և հաշվեկշռից դուրսգրման պահին համարվում է որպես արժեզրկված ակտիվ:

Սույնով նախատեսված ակտիվների դասակարգումը տարածվում է ինչպես ակտիվի ամբողջ գումարի, այնպես էլ դրա մասերի վրա: Բանկերի կողմից կիրառելի կարգերը ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Բանկերի կողմից կիրառելի կարգերը

Ակտիվի դասը	Օբյեկտիվ	Սուբյեկտիվ
Ստանդարտ ակտիվ կարգ «Ա»	Ակտիվն աշխատող է և գտնվում է սպասարկման ընթացքում, համաձայն պայմանագրի	Համապատասխանում է ստանդարտ ակտիվի սահմանմանը
Հսկվող կարգ «Բ»	Չաշխատող է մինչև 90 օր	Համապատասխանում է հսկվող ակտիվի սահմանմանը
Ոչ ստանդարտ ակտիվ կարգ «Գ»	Չաշխատող է մինչև 91-180 օր	Համապատասխանում է ոչ ստանդարտ ակտիվի սահմանմանը
Կասկածելի ակտիվ կարգ «Դ»	Չաշխատող է 181- 270 օր	Համապատասխանում է կասկածելի ակտիվի սահմանմանը
Անհուսալի ակտիվ կարգ «Ե»	Չաշխատող է 270 օր և ավելի	Համապատասխանում է անհուսալի ակտիվի սահմանմանը

Չաշխատող են այն ակտիվները, որոնք եկամուտ չեն ստեղծում և որոնց ա/ հիմնական գումարի կամ դրա մասի մարումը կամ տոկոսների վճարումը ուշացել է սահմանված ժամկետից 90 օրից ավելի

բ/ 90 կամ ավելի օրերին վերագրվող ժամանակի համար տոկոսային վճարները կապիտալացվել են (գումարվել են չմարված վարկի գումարին կամ վճարման պայմանները վերանայվել են):

Այն ակտիվները, որոնց համար սահմանված չեն մարման նախապես որոշված (նախատեսված) ժամկետներ, պայմաններ /օվերդրաֆտները և այլ գործիքներ/ համարվում են չաշխատող ակտիվներ, եթե 90 օրվա ընթացքում մարումներ չեն կատարվել, իսկ հաշվում առկա միջոցները բավարար չեն համապատասխան ժամանակահատվածում կապիտալացված (հաշվեգրված) տոկոսները մարելու համար:

Վարկային հաշվի դասակարգման վերանայումը ներառում է ժամկետանց գումարների հետ կապված պահուստագումարների ուսումնասիրություն: Վերանայման նպատակն է համոզվել, որ պահուստագումարի աստիճանը համապատասխանում է ժամկետանց պարտքերին և յուրաքանչյուր հաշվի դասակարգմանը:

6.3.1. Պահուստագումարի պահանջները

Պահուստավորումը և անհուսալի պարտքերի դուրսգրումը պետք է կատարվեն վարկային հաշվի դասակարգման հիման վրա: Պահուստագումարները պետք է պահուստավորվեն վարկի հիմնագումարի, տոկոսի, տույժի տոկոսի և ցանկացած այլ չկատարված վճարումների դեպքում ԶԶ կենտրոնական բանկի սահմանած դրույքներով:

Պահուստավորման համար հիմք է ընդունվում ակտիվների գծով կորուստների առաջացման հավանականությունը, դասակարգման պարզաբանված /բացահայտված/ օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշները, վերջիններիս հիման վրա ճանաչելով /գրանցելով/ որպես ծախս բանկի եկամուտների և ծախսերի հաշվետվությունում:

6.3.2. Դասակարգման մեջ փոփոխություններ կատարելը

Վարկային հաշվի կարգը ցանկացած ժամանակ կարող է փոփոխվել դեպի ավելի ցածր կարգ: Կարգերի փոփոխությունները կապված են մարման հեռանկարների հետ: Վարկը կարող է ավելի ցածր դասի կարգվել, եթե առկա են կանխիկ դրամի հոսքի հետ կապված այնպիսի ռիսկեր, որոնք սպառնում են վարկի մարման հնարավորությանը:

6.4. Վերահսկման այցելությունների գրաֆիկների կազմումը

Վերահսկման այցելությունների գրաֆիկը պետք է կազմվի հետևյալ կերպ՝

- Նախնական այցելություն վարկի առաջին վճարումից հետո մեկ ամսվա ընթացքում բոլոր վարկերի համար
- «Ա» և «Բ» կարգի հաշիվների համար այցելություն առնվազն յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ, վարկառուի հետ անձնական շփումները պահպանելու և բիզնեսի կարգավիճակը գնահատելու նպատակով
- «Գ» և «Դ» կարգի հաշիվների համար այցելություններ ամիսը մեկ անգամ բիզնեսի առաջընթացին բավական մանրամասն հետևելու և վարկառուին անընդհատ մարման մասին հիշեցնելու համար
- «Ե» կարգի հաշիվների համար եռամսյա այցելություններ, համոզվելու, որ որպես գրավ դրված ունեցվածքը դեռ տեղում է, ինչպես նաև անձնական շփումները պահպանելու համար, որը կարող է արագացնել պարտքերի վճարումը:

Վերահսկումը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ վարկային հաշվի վրա մնացորդ կա:

Եթե գործունեությունը բավարար է գնահատվում (վարկի մարումները կատարվում են ժամանակին և պարզվում է, որ բիզնեսը կենսունակ է), կարելի է կատարել վերահսկման կանոնավոր եռամսյակային այցելություններ: Եթե վարկի մարումները ժամանակին չեն կատարվում և պարզվում է, որ բիզնեսը կենսունակ չէ, հարկավոր է կատարել ուղղիչ վերահսկում: «Ա» և «Բ» կարգի հաշիվների այցելությունները համարվում են կանոնավոր: «Գ», «Դ» և «Ե» կարգի հաշիվների այցելությունները համարվում են ուղղիչ:

6.4.1. Վերահսկման կանոնավոր այցելություն կատարելը

Վարկային մասնագետը պետք է վարկառուի հետ հանդիպման համար նախնական պայմանավորվածություն ունենա: Ընդհանրապես հանդիպումը պետք է տեղի ունենա վարկառուի տարածքում: Այցելության ժամանակ և այցելությունից հետո հարկավոր է լրացնել **Այցելության հաշվետվություն**: Վերջինիս կանոնավոր կազմումը կարևոր է համոզվելու համար, որ բիզնեսի և վարկի առաջընթացի պատմությունը ներկայացված է փաստաթղթերում:

Այն առաջարկում է այցելության օրակարգ, որի ընթացքում վարկային մասնագետը պետք է համապատասխանեցնի այն, ինչ լսել է, իր տեսածի և վարկառուի հաշվի տեղեկագրում ներկայացված տեղեկատվության հետ: Ակնառու անհամապատասխանությունները հարկավոր է պարզել և իմաստավորել:

Զարկ է հատուկ ուշադրություն դարձնել շրջանառու միջոցների կարգավիճակին, որովհետև դա կօգնի վարկառուին գիտակցել իր ֆինանսական վիճակը և նրան կզգուշացնի վատթարացող իրավիճակի մասին:

Վերահսկման կանոնավոր այցելությունների համար, բացառությամբ այն դեպքի, երբ բացահայտվում է պոտենցիալ հիմնախնդիրների մասին տեղեկատվություն, հարկավոր է գրանցել նվազագույն պահանջվող տեղեկատվությունը:

6.4.2. Վերահսկման ուղղիչ այցելություններ կատարելը

Վերահսկման ուղղիչ այցելությունը ավելի շատ ժամանակ է պահանջում, քան կանոնավոր այցելությունը: Այն պետք է ներառի վարկառուի բիզնեսի հիմնախնդիրների մանրամասն ուսումնասիրություն և քննարկումներ: Բիզնեսի հիմնախնդիրներն իրենց բնույթով այնքան բազմազան են, որ հնարավոր չէ բավարարվել կարճ ձևերով:

Վարկային մասնագետը պետք է վերանայի բիզնես պլանից շեղումները: Եթե վարկի պայմանների և ժամկետների փոփոխության հավանականություն կա, վարկային մասնագետը կարող է վարկային կառավարչին հրավիրել իր հետ այցելության, քանի որ այսպիսի առաջարկները հետագայում հարկավոր է հիմնավորել վարկային հանձնաժողովի համար:

Ծրագրերն ու իրականությունը միշտ տարբեր են, բայց բիզնեսի հիմնախնդիրները հաջող կանխատեսելու հիմքում ընկած է բիզնեսի վրա լրջորեն ազդող այն գործոնների կանխորոշման կարողությունը, որոնք բիզնեսը դարձնում են անկենսունակ, և այն գործոնների, որոնք շահութաբերության վրա սահմանային ազդեցություն ունեն: Ուղղիչ խորհուրդները և վարկառուի ջանքերը պետք է ուղղված լինեն վերը նշվածի վրա:

Վերահսկման ուղղիչ այցելության արդյունքում միշտ հարկ է տալ գործողությունների հանձնարարականներ, որոնք կարող են ներառել՝ իրավիճակը շտկելու համար վարկառուի կողմից ձեռնարկված գործողություններ, վարկային հաշվի կարգավիճակում հնարավոր փոփոխությունների կատարում և հանձնարարականներ վարկի պայմանների ու ժամկետների վերանայման վերաբերյալ:

6.4.3. Վարկի պայմանների ու ժամկետների վերանայում և փոփոխություն

Վարկի պայմանները և ժամկետները փոխելը ցանկալի չէ: Այնուամենայնիվ, բանկերը, ինչպես նաև ցանկացած այլ բիզնես հաստատություններ, պետք է արձագանքեն անկանխատեսելի իրավիճակներին: Օրինակ՝

- վարկառուն չի կարող կատարել նախապես պայմանավորված սեփական միջոցների ներդրում
- հիմնական ակտիվներ գնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սակավություն
- հետաձգումներ բիզնեսը սկսելու կամ մատակարարներից նյութերը ձեռք բերելու հարցում
- հետաձգումներ գործառնությունները սկսելու հարցում՝ տեխնիկական պատճառներով
- անհրաժեշտ ակտիվների փոփոխություն, կապված շուկայի նոր հնարավորությունների հետ
- սպասվածից ավելի փոքր վաճառքի ծավալներ
- սպասվածից ավելի մեծ վաճառքի ծավալներ:

Ուստի, պետք է մեխանիզմներ մշակել փոփոխությունների առաջարկները ուսումնասիրելու և դրանք երաշխավորելու ու հաստատելու համար: Վարկային պայմանագրի փոփոխություններում պետք է ներկայացված լինի պայմանագրի ամբողջովին վերանայված յուրաքանչյուր կետ: Եթե փոփոխված են գրաֆիկները, դրանք նույնպես պետք է պատրաստեն և ստորագրեն երկու կողմերը:

6.4.4. Վերահսկման վերջնական այցելություն կատարելը

Երբ վարկն ամբողջովին մարված է, հարկավոր է կատարել վերահսկման վերջնական այցելություն, որի նպատակն է գնահատել վարկառուի հետագա աջակցության կարիքը և պատրաստել բիզնեսի ու վարկային գործունեության գնահատման հաշվետվություն, ինչպես նաև որոշել հետագա աջակցության հնարավորությունը:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են բանկի կողմից իրականացվող վարկային վերահսկողության սկզբունքները:
2. Ինչո՞վ են տարբերվում «Մոնիտորինգ» և «Վերահսկում» հասկացությունները:
3. Ո՞րն է վերահսկման դերը բանկային վարկավորման գործընթացում:
4. Ինչպիսի՞ հատկանիշներ են յուրահատուկ խնդրահարույց վարկերին:
5. Ինչպիսի՞ քայլեր պետք է ձեռնարկվեն բանկի աշխատակցի կողմից այն դեպքում, երբ վարկը դարձել է պրոբլեմային:
6. Ինչպիսի՞ գործոններ են հիմք ընդունվում վարկերի դասակարգման դեպքում:
7. Ինչպե՞ս են դասակարգվում վարկերը և ո՞ր դեպքում է կատարվում վարկերի դասակարգումը:
8. Ի՞նչ սկզբունքով է կազմվում բանկի կողմից տրամադրված վարկերի վերահսկման այցելությունների գրաֆիկը և սովորաբար ինչպիսի՞ այցելություններ են նախատեսվում այդ գրաֆիկում:

Թեմա 7. Բիզնես ծրագրերով վարկավորման գործընթաց

Թեմայի նպատակը: Սույն թեմայի նպատակն է նկարագրել միջին և փոքր վարկերի ուսումնասիրման, իրականացման և մարման մեթոդներն ու գործընթացները: Այն կազմված է առօրյա գործառնություններում օգտագործման համար, որպեսզի.

- ուղեցույց լինի վարկային մասնագետներին ամենօրյա գործերը վարելիս
- սխտեմատիկ մոտեցում ապահովի միջին և փոքր վարկերի նկատմամբ վարկային ցիկլի բոլոր փուլերում
- ապահովի մեթոդների և գործընթացների համաչափությունը
- կրճատի վարկերի իրականացման համար պահանջվող ժամանակը և ջանքերը:

Մանրամասն ներկայացվում է գործարար ծրագրի ցիկլը, վարկային ցիկլը և նրանց միջև կապը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ունկնդիրները կկարողանան՝

- ներկայացնել բիզնես պլանի ցիկլը, մասնավորապես բնութագրել կանխորոշման, պլանավորման, գնահատման, իրականացման և վերջնական գնահատման փուլերը,
- ներկայացնել վարկային ցիկլը, մասնավորապես բնութագրել ուսումնասիրության, դիմումի գնահատման և հաստատման, բիզնես պլանի գնահատման, վճարման, վեճախսման և վարկի մարման փուլերը:

7.1. Բիզնես պլանի ցիկլը

Բիզնես պլանները կազմվում և իրականացվում են որոշակի հաջորդականությամբ, որը կոչվում է Բիզնես պլանի ցիկլ: Այն ներառում է նախորոշում, պլանավորում, գործունեության գնահատում, իրականացում և վերջնական գնահատում գործընթացները:

7.1.1. Նախորոշում

Առաջին փուլը բիզնեսի պոտենցիալ հնարավորություններ գտնելն է: Առաջարկությունների աղբյուրները շատ են, ներառյալ տեխնիկական մասնագետները և տեղացի գործարարները: Իրենց գործունեությունն իրականացնելիս տեխնիկական մասնագետները կարող են նախանշել շատ ոլորտներ, որտեղ, իրենց կարծիքով, ներդրումը կարող է եկամտաբեր լինել: Տեղացի գործարարները նույնպես կարող են առաջարկություններ անել հնարավոր ներդրումների վերաբերյալ: Գործող բիզնես գործառնությունները ընդարձակելու համար պատրաստված առաջարկները նույնպես կարող են ներառել գաղափարներ նոր ներդրումների մասին:

7.1.2. Պլանավորում

Բիզնեսի հնարավորությունները նախորոշելուն հաջորդում է մանրամասն պլանավորման գործընթացը, որը ներառում է այն ամենը, ինչն անհրաժեշտ է պլանը վերջնական կետի հասցնելու համար: Այդ ժամանակ իրականացվում է մանրամասն ուսումնասիրություն կամ գնահատում և եթե պլանը հավանական համարվի, այն կֆինանսավորվի:

Սովորաբար առաջին փուլում պատրաստվում է բիզնես պլանը, որը պարունակում է բավականաչափ ինֆորմացիա ներդրման կենսունակությունը որոշելու համար: Բիզնես պլանի մանրամասն լինելը կախված է առաջարկի բարդությունից և այն բանից, թե ինչ է արդեն հայտնի տվյալ ոլորտում: Բիզնես պլանը առնվազն պետք է ընդգրկի հստակ նպատակներ և տեղեկատվություն ձեռքբերումների, կազմակերպման ու մեթոդների, շուկայավարության, կառավարման, եկամուտների և ծախսերի մասին: Հիմնավոր կազմված պլանը երաշխավորում է նրա հաջող իրականացումը, քանի որ այն կանխատեսել է բազմաթիվ հնարավոր դժվարություններ և ծրագրեր դրանք հաղթահարելու համար: Արագ պատրաստված, մակերեսային վերլուծությունների արդյունքում ստացվում են պլաններ, որոնք հնարավոր չի լինի իրականացնել ըստ գրաֆիկի, կունենան ցածր եկամտաբերություն, կառաջացնեն դժվարություններ և կվատենն սուղ միջոցները:

Առավել անհաջող են այն ներդրումները, որոնք կատարվում են առանց որևէ վերլուծության կամ պլանների: Հաճախ այս գործերը հանգեցնում են վարկերի մարման խնդիրների կամ վարկառուներն ի վիճակի չեն լինում վճարել կամ հարկավոր է լինում երկարացնել վարկի մարման ժամկետը:

7.1.3. Գնահատում

Պլանը կազմելուց հետո կատարվում է գնահատում, որի միջոցով հնարավոր է լինում վերաքննել պլանի յուրաքանչյուր կետը, գնահատելու համար, թե որքանով է առաջարկը համապատասխան և հիմնավոր ֆինանսավորման համար: Գնահատումը հենվում է բիզնես պլանի վրա, բայց այն կարող է պարունակել լրացուցիչ տեղեկատվություն, եթե գնահատողը կասկածներ ունի որոշ տվյալների վերաբերյալ կամ էլ առաջարկված ենթադրությունները ճշմարիտ չեն: Եթե գնահատողը եզրակացնում է, որ պլանը հիմնավոր է, ներդրումը կարելի է կատարել: Եթե նա գտել է լուրջ թերություններ, անհրաժեշտ կլինի փոփոխություններ մտցնել կամ ամբողջովին նոր պլան կազմել: Գնահատումը սովորաբար ներկայացվում է գրավոր տեսքով նրանց, ովքեր պետք է հավանություն տան կամ մերժեն:

7.1.4. Իրականացում

Իրականացումը բիզնես պլանի ցիկլի ամենակարևոր մասն է: Պլանավորման փուլում հարկավոր է ուշադրություն դարձնել իրականացման որոշ կարևոր հարցերի վրա: Առաջին, իրականացման պլանները պետք է իրատեսական լինեն, այնպես, որ իրականացումը լինի այնպես, ինչպես պլանավորվել էր, իսկ սպասվող եկամուտները իրականանան: Միշտ հարկավոր է հիշել, որ պլանները և նախագծերն ընդամենը այն բաների մոտավոր կանխատեսումներն են, որոնք կարող են պատահել: Իրականացումն է, որ ցույց է տալիս այն, ինչ պատահելու է: Երկրորդ, իրականացման պլանը պետք է ճկուն լինի, որովհետև կարող է առաջանա վերանայման կարիք, նույնիսկ եթե իրականացումն ընթացքի մեջ է, հաշվի առնելով անկանխատեսելի հիմնահարցերը կամ հետաձգումները:

7.1.5. Վերջնական գնահատում

Բիզնես պլանի ցիկլի ավարտական փուլը վերջնական գնահատումն է, որի նպատակն է որոշել այն աստիճանը, ըստ որի պլանը հասել է իր առջև դրված խնդիրներին: Վերջնական գնահատականը տրվում է պլանի ավարտին կամ ավելի շուտ, եթե արդեն հասել են որոշակի խնդիրների կամ եթե հանդիպել են պրոբլեմների: Առաջին դեպքում հարկավոր է սովորել, թե ինչպես կարելի է բարելավել հետագայում ծրագրի մշակումը և իրականացումը: Վերջին դեպքում հարկավոր է վերանայել ծրագրի իրականացման պլանները և ֆինանսական պահանջները և հայտնաբերել այլընտրանքային ռազմավարություններ, որպեսզի բիզնեսի իրականացումը ավելի հաջող լինի:

7.2. Վարկային ցիկլը

Վարկային ցիկլը սերտորեն կապված է բիզնես պլանի ցիկլի հետ: Այն սկսվում է ուսումնասիրություններով, որին հաջորդում են դիմումի գնահատումն ու հաստատումը, վճարումը, ղեկավարումը և վարկի մարումը: Այս գործընթացներից յուրաքանչյուրը կապված է բիզնեսի պլանավորման ցիկլի մեկ փուլի հետ և գործն ռեզիլիանտ ֆինանսական հաստատության որոշակի խնդիրների ու գործունեության հետ, որին անհրաժեշտ է գործի մեջ պաշտպանել իր ներդրումը:

7.2.1. Ուսումնասիրություն

Վարկային մասնագետի գործառնությունը ներառում է օժանդակություն գործարարներին և ներդրողներին բիզնես պլան կազմելիս: Բոլորովին էլ պարտադիր չէ, որ վարկային մասնագետը նախորոշի բիզնեսի որոշակի հնարավորություններ, ոչ էլ անհատների անունից բիզնես պլաններ կազմի: Նա պետք է խորհուրդներ տա պոտենցիալ վարկառուներին առկա հնարավորությունների, որոշակի ենթասեկտորի զարգացման քաղաքականության և պոտենցիալ ներդրումների հնարավորությունների վերաբերյալ ինֆորմացիայի աղբյուրների և լավ բիզնես պլանի պահանջների մասին:

Ուսումնասիրությունների նպատակն է ի հայտ բերել պոտենցիալ վարկառուի ու ընկերության համապատասխանությունը և գնահատել պոտենցիալ վարկառուի վարկունակությունը: Վարկային մասնագետը պետք է պոտենցիալ վարկառուից միայն պաշտոնական դիմում ընդունի և վարկը գնահատի միայն մանրամասն ուսումնասիրությունից հետո:

7.2.3. Դիմում, գնահատում և հաստատում

Մանրամասն ուսումնասիրությունը դիմումի գնահատման և հաստատման գործընթացը դարձնում է արդյունավետ: Դիմումի համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջականության մեջ համոզվելուց հետո գնահատվում է դիմորդի բիզնես պլանը:

Եթե մասնակցության չափանիշները, վստահելիությունը և առևտրային վիճակը դրական գնահատվեն, վարկային աշխատակիցը դիմորդին խորհուրդ կտա կազմել բիզնես պլան: Վարկային կառավարիչը պետք է բացատրի, որ անհրաժեշտ է կազմել կենսունակ բիզնես պլան, որպեսզի վարկի համար պաշտոնական դիմում տրվի: Բիզնես պլանը պետք է ներառի հետևյալը՝

- ընդհանուր ծանոթացում բիզնեսի, նրա պատմության և նպատակների հետ
- բիզնեսի նկարագիրը, մասնավորապես ինֆորմացիա ապրանքների ու ծառայությունների, հիմնական աշխատակազմի, սեփականատերերի, համագործակիցների, տնօրենների և բաժնետերերի այլ բիզնես շահերի մասին
- բիզնեսի զարգացման պլանը, որը նկարագրում է շուկան, հաճախորդներին, մրցակցությունը, բիզնեսի զարգացումն այդ շուկայում և հիմնական ռիսկերը
- դրամական հոսքի հաշվարկներ
- ֆինանսական տեղեկագրերի կազմում:

Վարկառուների ունակությունները տարբեր են բիզնեսի պլանավորման հասկացությունների և բիզնես պլան կազմելու վերաբերյալ: Որոշ պոտենցիալ վարկառուների համար նույնիսկ պարզագույն բիզնես պլան կազմելն այնքան վիատենցիոզ գործ է, որ արդյունքում նրանք կարող են կորցնել վարկի նկատմամբ շահագրգռությունը:

Վարկային աշխատակիցը պետք է ունակ լինի վարկառուին օգնելու բիզնես պլան- կազմելիս: Այս գործընթացը ոչյուրացնելու համար բիզնես պլանը կազմվում է հարցաթերթիկի ձևով: Ավելի մեծ

ծեռնարկությունները, որոնք ցանկանում են բիզնես պլանը կազմել իրենց հաշվապահների կամ ֆինանսական խորհրդականների հետ, պետք է օգտագործեն իրագործելիության ուսումնասիրություն կազմելու ուղեցույց:

Մյուս դիմորդները պետք է ներկայացնեն Բիզնես պլան, որը ներառում է մանրամասներ դիմորդի այն պլանների մասին, որոնք վերաբերում են ծեռնարկությանը: Անհրաժեշտության դեպքում վարկային աշխատակիցը կարող է վարկառուին օգնել այն լրացնելիս: Սա կարելի է անել տեղում: Ավելի կարող վարկառուներից կպահանջվի պլանը ինքնուրույն կազմել և հանձնել հիմնարկությանը կամ էլ հանձնելուց առաջ այն տալ վարկային մասնագետին ուսումնասիրելու համար:

Ուսումնասիրման գործընթացի կարևորագույն փուլ է պոտենցիալ վարկառուի հետ տեղում հարցազրույց վարելը, որի նպատակն է՝

- պարզել պոտենցիալ վարկառուի կարողությունները
- պարզել, թե նախատեսված աշխատավայրը որքանով է համապատասխանում գործունեությանը
- առաջարկվող պլանը դիտել աշխատանքի համատեքստում:

Զնայած վարկային մասնագետից է պահանջվում վերահսկել հարցազրույցի ընթացքը, ներկայացնողը հիմնականում պետք է լինի հեռանկարային վարկառուն: Կարևոր է ուշադիր լսել, թե ինչ է ասում պոտենցիալ վարկառուն և նրան լրացուցիչ հարցեր տալ, եթե պատասխանը հստակ ձևակերպված չէ կամ էլ եթե զրույցի ընթացքում այլ հարցեր են առաջանում: Յուրաքանչյուր հարց պետք է ուղղված լինի պարզելու՝

- պոտենցիալ վարկառուի կարողությունները /տեխնիկական, ֆինանսական, կառավարման/
- նրա անկեղծությունը ու ազնվությունը
- նրա ունակությունը անհրաժեշտ կապիտալ ներդնելու հարցում
- հաջողության հասնելու նրա նպատակաուղղվածությունը, ինչպես նաև ծանր աշխատանքին ընդունակ լինելը:

7.2.4. Բիզնես պլանի գնահատումը

Գնահատման գործընթացը հնարավորություն է տալիս վերաքննել բիզնես պլանի յուրաքանչյուր կողմը՝ գնահատելու առաջարկների հիմնավորությունը ֆինանսավորումը տրամադրելու համար: Վարկային մասնագետը պետք է հաստատի և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ մտցնի բիզնես պլանում ներկայացված ինֆորմացիայի, ենթադրությունների և առաջարկների մեջ: Վերանայումը պետք է մասնավորապես ներառի՝

- ընկերության կառավարման համապատասխանությունը
- բիզնես պլանի իրականացման համար առաջարկված ծրագրերը
- շուկայավարության ռազմավարությունը և պլանը
- ծախսերը, դրամական հոսքը և ֆինանսական պլանը
- առաջարկների տեխնիկական կողմերը:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել դրամական հոսքի և դրա հիմքում ընկած ենթադրությունների վրա: Պահանջվող պարտքի սպասարկման ծածկույթը պետք է ակնհայտ լինի:

Գնահատման նպատակն է ստուգել պլանի բոլոր ասպեկտները, ներառյալ ձեռքբերումները, իրականացումը, շուկայավարությունը, կառավարումը և ծախսերն ու եկամուտները: Գնահատման արդյունքում արվում է մեկնաբանություն, ըստ որի վարկը հաստատվում է կամ մերժվում: Եթե մեկնաբանությունը դրական է, որոշվում են ֆինանսավորման համար անհրաժեշտ գումարը և վարկի պայմանները:

Վարկի հաստատումը պաշտոնական գործընթաց է, ըստ որի գնահատված վարկը հաստատվում է: Հաստատող և գնահատող անձինք տարբեր են, իսկ նրանց անունները նշված են Տնօրենների խորհրդի կողմից լիազորված մարմինների ցուցակում:

7.2.5. Վճարում

Հաստատելուց հետո վարկը փաստաթղթավորվում է, որից հետո կատարվում է վճարումը: Անհրաժեշտ է, որ վարկը երաշխավորող իրավական փաստաթղթերը ներկայացնեն վարկառուն կամ նրա երաշխավոր անձը: Երբ փաստաթղթերի ձևակերպումն ավարտված է, կարելի է սկսել վճարումները:

Վարկի վճարումը տեղի է ունենում իրականացման ներդրումը կատարելու փուլի ժամանակահատվածում և կարող է շարունակվել մինչև այն ժամանակ, երբ գործառնական փուլին հասնելու համար անհրաժեշտ է կապիտալի ավելացում /օրինակ, շրջանառու կապիտալի/: Հնարավորության դեպքում, վարկատուն կարող է կատարել ուղղակի վճարում մատակարարին, ըստ ֆինանսավորման համար անհրաժեշտ իրերի ցուցակի:


7.2.6. Վերահսկում

Վարկի վերահսկումը սկսվում է ներդրման ժամանակահատվածի սկզբում և շարունակվում է բիզնես պլանի իրականացման ընթացքում, մինչև վարկի ամբողջական մարումը: Մոնիտորինգի գործընթացն իրենից ներկայացնում է բիզնեսի ֆիզիկական և ֆինանսական առաջընթացի կանոնավոր ստուգում, ըստ պլանի: Մոնիտորինգի գործընթացում ստուգվում է նաև այն, թե արդյոք վարկը ճիշտ է օգտագործվում: Վերահսկումը ներառում է հարկ եղած դեպքում միջամտություն, որի նպատակն է գործարարներին հուշել, թե որտեղ է անհրաժեշտ խուսափել կամ փոփոխություններ մտցնել պլանի կետերի մեջ կամ էլ օժանդակել վերապլանավորմանը:

7.2.7. Վարկի մարումը

Վարկի մարումը փոխառություններ (հիմնական, տոկոսային և այլ վճարումներ) հավաքելու գործընթացն է: Այն սկսվում է բիզնես պլանի իրականացման փուլի գործառնական ժամանակահատվածում, երբ արդեն բավականաչափ եկամուտ է ստացված փոխառությունը մարելու համար: Վարկի մարումը ընդգրկում է նաև ընթացակարգեր, որոնք գործում են այն դեպքում, երբ ձեռնարկությունը ի վիճակի չի լինում ժամանակին կատարելու վարկի մարումը, ինչպես օրինակ պարտավորությունների չկատարման, գրաֆիկի փոփոխման և վարկի հետ ստացման գործողությունների կառավարում:

Վերը նշված երկու ցիկլերի միջև եղած կապը պատկերված է նկար 1-ում:



Ինքնաստուգման հարցեր

1. Ինչպիսի՞ փուլեր է ներառում բիզնես պլանի ցիկլը:
2. Ի՞նչ են իրենցից ներկայացնում նախորոշման և պլանավորման փուլերը:
3. Ի՞նչ են իրենցից ներկայացնում գնահատման և իրականացման փուլերը:
4. Ինչպիսի՞ փուլեր է ներառում վարկային ցիկլը:
5. Ի՞նչ են իրենցից ներկայացնում ուսումնասիրման և դիմումի գնահատման և հաստատման փուլերը:
6. Ի՞նչ են իրենցից ներկայացնում բիզնես պլանի գնահատման, վճարման, վերահսկման և մարման փուլերը:

Թեմա 8. Վարկի նկատմամբ սահմանվող տոկոսադրույքները և տոկոսադրույքների սահմանման սկզբունքներն ու մեթոդները

Վարկավորման գործընթացում ամենադժվար խնդիրներից մեկը տոկոսադրույքների որոշման խնդիրն է: Վարկատուի սկզբնական շահը բարձր տոկոսադրույքի սահմանումն է՝ շահույթի ստացման և ռիսկերի ու ծախսերի փոխհատուցման համար, սակայն մյուս կողմից տոկոսադրույքը պետք է բավականին ցածր լինի, որպեսզի վարկառու ի վիճակի լինի սպասարկել վարկը և ժամկետին մարել վարկն ու տոկոսագումարները: Տոկոսադրույքները հիմնականում ձևավորվում են շուկայում՝ վարկերի առաջարկի և պահանջարկի տատանումներից և վարկային շուկայում ձևավորված մրցակցությունից ելնելով, որի վրա Հայաստանի Հանրապետությունում մեծ ազդեցություն է գործում ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսը, պետական արժեթղթերի գծով վճարված տոկոսը, միջազգային վարկային կազմակերպությունների տրամադրած վարկերի տոկոսները և այլն:

Մրցակցության բարձր մակարդակի դեպքում վարկատուն ավելի շուտ ընդունում է շուկայում վարկերի նկատմամբ ձևավորված տոկոսադրույքը, քան թե սահմանում այդ տոկոսադրույքը:

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել տարբեր վարկերի նկատմամբ սահմանվող տոկոսադրույքների ձևավորման սկզբունքներն ու մեթոդները:

Ուսնակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ունկնդիրները կկարողանան՝

- ներկայացնել վարկերի նկատմամբ սահմանվող տարբեր տոկոսադրույքների ձևավորման սկզբունքներն ու մեթոդները, մասնավորապես.
 - բնութագրել տոկոսադրույքի որոշումը «արժեք գումարած» սկզբունքով,
 - բնութագրել գնային առաջնության մոդելը,
 - բնութագրել ավելացումների մոդելը /պրայմ ռեյտինգ ցածր սահմանվող տոկոսադրույք/,
 - բնութագրել առավելագույն տոկոսադրույքի մոդելը /մոդել «կեպ»/,
 - բնութագրել «Վրժեք-օգտակարություն» մոդելը:

8.1. Տոկոսադրույքի որոշումը «արժեք գումարած» սկզբունքով

Վարկի նկատմամբ տոկոսադրույքի սահմանման դեպքում բանկը հիմք է ընդունում ներգրավված միջոցների արժեքը և գործառնական ծախսերը, որոնք բանկը կատարում է վարկավորման գործընթացի ժամանակ: Դա նշանակում է, որ բանկերը պետք է տեղյակ լինեն իրենց ծախսերի մակարդակից, որպեսզի տրամադրեն շահութաբեր, ճիշտ սահմանված տոկոսադրույքով վարկեր:

Տոկոսադրույքի սահմանման ամենապարզագույն մոդելը «արժեք գումարած» մեթոդն է, որի միջոցով տոկոսադրույքի սահմանումը հիմնվում է հետևյալ կոմպոնենտների վրա.

1. տվյալ վարկը տալու և ուղղված ներգրավված միջոցների գինը
2. բանկի գործառնական ծախսերը (հաշվարկված տվյալ վարկի գումարի համար)
3. պարտավորությունների չկատարման ռիսկի հետ կապված փոխհատուցումը
4. շահույթի մարժայի այնպիսի ցանկալի մեծություն, որը կբավարարի բանկի բաժնետերերին բավարար դիվիդենտ վճարելուն:

$$\text{Վարկի տոկոսադրույք} = \text{Ներգրավված միջոցների սահմանային արժեք} + \text{Բանկի գործառնական ծախսեր} + \text{Պարտավորությունների չկատարման ռիսկի փոխհատուցում} + \text{Շահույթի ցանկալի մարժա}$$

Վերոհիշյալ չորս բաղադրիչներից յուրաքանչյուրը կարելի է ներկայացնել վարկի գումարի նկատմամբ տարեկան տոկոսադրույքների տեսքով:

Օրինակ՝ առաջինը կարող է լինել ներգրավված ավանդների դիմաց բանկի կողմից տրվելիք տոկոսադրույքը, պետական արժեթղթերի տոկոսադրույքը (ունեցած արժեթղթերի վաճառք և վաճառքի գումարի հաշվին վարկի տրամադրում), այլ բանկերից վերցրած վարկի տոկոսը և այլն:

Երկրորդը՝ գործառնական ծախսերի համար տոկոսադրույքը, որոշվում է բանկի ամբողջ գործառնական ծախսերի և բանկի կողմից տրված վարկերի (տարեկան կշռված միջին թվերով) օգնությամբ:

Օրինակ, եթե բանկի կողմից տրված բոլոր վարկերի միջին կշռված թիվը մեկ տարվա համար կազմում է A մեծություն, գործառնական ծախսերը՝ B-մեծություն, ապա գործառնական ծախսերի համար նախատեսվող տոկոսը կլինի.

$$\text{Գործառնական ծախսերի տոկոսը} = \frac{B}{A} \times 100 \%$$

Երրորդ մեծությունը կապված է տվյալ վարկի ռիսկայնության հետ:

Չորրորդ մեծությունը կարող է լինել բանկային համակարգի համար ընթացիկ տարվա, նախորդ տարվա համար ձևավորված կամ նախօրոք որոշված դիվիդենդների միջին տոկոսադրույքը:

8.2. Գնային առաջնության մոդել

Վերոհիշյալ «Արժեք գումարած» մոդելի թերություններից է այն, որ ենթադրվում է, թե բանկը հաստատ գիտի իր ծախսերի մակարդակը և կարող է տոկոսադրույք սահմանել առանց հաշվի առնելու մրցակցության գործոնը այլ վարկատուների կողմից:

Սուտ 50 տարի առաջ աշխարհի մեծագույն բանկերը սկսեցին վարկավորման տոկոսադրույքի որոշումը կատարել «գնային առաջնության» մոդելով: 30-ական թվականներին բանկերի կողմից սահմանվել էր վարկի համատարած տոկոսադրույք՝ «Պրայմ ռեյտ» անվանմամբ /նաև որպես բազային տոկոսադրույք/, որն իրենից ներկայացնում էր ամենավարկունակ հաճախորդներին տրվող կարծաժամկետ վարկերի նվազագույն տոկոսադրույքը (հիմնականում շրջանառու միջոցների վարկավորում):

Վարկի տոկոսադրույքը գնային առաջնության մոդելով հաշվարկվում էր հետևյալ բանաձևով.

$$\begin{array}{c} \text{Վարկի} \\ \text{տոկոսադրույք} \end{array} = \begin{array}{c} \text{Պրայմ} \\ \text{րեյտ} \end{array} + \begin{array}{c} \text{Հավելում} \\ \text{ } \end{array}$$

Ոչ առաջնային
վարկառուների կողմից
պարտավորությունների
չկատարման ռիսկի
պրեմիա

+

Երկարաժամկետ
վարկավորման համար
դիմող վարկառուների
կողմից վարկի
ժամկետայնության համար
ռիսկի պրեմիա

Յուրաքանչյուր բանկի վարկային քաղաքականության մեջ պետք է մշակված լինեն ռիսկի որոշման և գնահատման մեխանիզմները, որոնք պետք է հիմնված լինեն հետևյալ սկզբունքների վրա.

1. նախ տրված լինեն վարկերի կատեգորիաները
2. ըստ կատեգորիաների որոշված լինի ռիսկի տոկոսը:

Վարկային կատեգորիաները կարող են լինել.

- առանց ռիսկի – 0%
- մինիմում ռիսկ – 0,25%
- ստանդարտ ռիսկ – 0,5%
- հատուկ ռիսկ – 1,5%
- ստանդարտից բարձր ռիսկ – 2,5%
- կասկածելի ռիսկ – 5%:

Պրայմ ռեյտը կարող է լինել որոշակի ժամանակաշրջանի համար ֆիքսված, կամ կարող է կրել «լողացող» մեծության բնույթ:

70-ական թվականներին Պրայմ ռեյտին սկսեց փոխարինել «ԼԻԲՈՐ» (Լոնդոնի միջբանկային տոկոսադրույք) «լողացող» տոկոսադրույքը:

8.3. Պրայմ ռեյտից ցածր սահմանվող տոկոսադրույք (ավելացումների մոդել)

80 - ական թվականներից սկսած մեծ բանկերը սկսեցին վարել էլ ավելի ագրեսիվ վարկային քաղաքականություն և հաճախ մրցակցությունում հաղթելու համար սահմանում էին «Պրայմ ռեյտ»-ից կամ «ԼԻԲՈՐ»-ից ցածր տոկոսադրույքներ:

$$\begin{array}{c} \text{Վարկի} \\ \text{տոկոսադրույք} \end{array} = \begin{array}{c} \text{Պրայմ կամ միջոցների ներգրավման} \\ \text{տոկոսային ծախսեր} \end{array} + \begin{array}{c} \text{Ռիսկերի ծածկման և շահույթի} \\ \text{ստացման հավելում} \end{array}$$

Ներկայումս ԱՄՆ-ում վարկային պորտֆելի 90 %-ը տրվում է պրայմ ռեյտից ցածր տոկոսադրույքներով:

8.4. Առավելագույն տոկոսադրույքի մոդել /Մոդել «կեպի»/

Երկարաժամկետ վարկավորումը մեծամասամբ կատարվում է «լողացող» տոկոսադրույքներով և այս դեպքում վարկառու գտնվում է անորոշ վիճակում՝ ապագայում սպասվելիք տոկոսադրույքների առումով:

Այդ իսկ պատճառով վարկային պայմանագրում հնարավոր է մտցնել տոկոսադրույքի առավելագույն չափը սահմանափակող մեծություն, որը կոչվում է «կեպ»: Նման վարկավորում ստանում են հիմնականում լավագույն վարկառուները, քանի որ ապագայում տոկոսադրույքների ավելացման առավելագույն չափը սահմանափակված է, և նրանք արդեն որոշակի գիտակցում են վարկերի գծով առավելագույն ծախսերի մակարդակը: «Կեպ» մոդելով երկարատև վարկավորման ընթացքում հնարավոր է միջին շուկայական տոկոսադրույքների աճ «կեպ»-ով սահմանափակումից բարձր, որը բանկի համար վնասաբեր կլինի, սակայն արդյունավետ հաճախորդի համար:

8.5. «Արժեք – օգտակարություն» մոդել

Մինչ վարկային տոկոսադրույքների հիմնական մասի հաշվարկը իրականացվում է բազային տոկոսադրույքի, ԼԻԲՈՐԻ և այլ տոկոսադրույքների հիման վրա, շատ բանկեր մշակում են վարկային տոկոսադրույքների սահմանման բարդ մոդելներ, որոնք թույլ են տալիս բանկերին ստանալ բավականաչափ միջոցներ իրենց ծախսերի փոխհատուցման և ռիսկերի ծածկման համար: Նմանատիպ մոդելներից է համարվում «արժեք-օգտակարություն» մոդելը:

Տվյալ մոդելը հիմնվում է երեք պարզագույն բաղադրիչների վրա.

1. Վարկի (վարկային գծի) բերած համախառն եկամուտը տոկոսադրույքների տարբեր մակարդակների պայմաններում:
2. Վարկի հետ կապված մաքուր գումարի մեծությունը (բացառությամբ վարկառուի բոլոր դեպոզիտների, որոնք պահվում են բանկում և ներառյալ պարտադիր պահուստավորման գումարները կենտրոնական բանկում):
3. Տվյալ վարկի շահույթը մինչև հարկերի վճարումը. Առաջին կետը բաժանած երկրորդ կետի վրա:

Վարկավորման որոշումն ընդունվում է վերոհիշյալ 3 բաղադրիչների հիման վրա՝ միաժամանակ կատարելով ռիսկի գնահատում:

Եթե տվյալ վարկի բերած շահույթը ավելի մեծ է, քան տվյալ «գումարի» գինը և գործառնական ծախսերը, ապա բանկը կարող է դրական որոշում ընդունել:

Ենթադրենք օրինակ, փոխառուն ցանկություն ունի բացել վարկային գիծ 5մլն ՀՀ դրամ գումարի չափ, բայց փաստացի օգտագործում է միայն 4 մլն. գումար 20 % տարեկան տոկոսադրույքով: Հաճախորդը պարտավոր է վճարել 1% կոմիսիոն վարկային գծի չօգտագործված գումարի դիմաց: Բացի այդ, բանկը պահանջում է պարտադիր մնացորդի առկայություն փաստացի օգտագործված գումարի 20%-ի չափով և չօգտագործված գումարի 5%-ի չափով: Կենտրոնական բանկի կողմից պարտադիր պահուստի պահանջը կազմում է 10%: Վերոհիշյալ տվյալներից ելնելով մենք ունենք հետևյալը.

Վարկի եկամտի գնահատումը	=	(Վարկային գծի օգտագործված մաս)	+	(Վարկային գծի չօգտագործված մաս)	=	8,10 .000
		4,000.000 x 0,20		1,000.000 x 0,1		
Փոխառուի կողմից օգտագործվող բանկային միջոցների գնահատումը	=	4,000.000	-	(4,000.000 x 0,20 + 1,000. 000 x 0,05)	+	0,10 (4,000.000 x 0,2 + 1,000.000 x 0,05)

Փոխառուի կողմից օգտագործվող բանկային միջոցների գնահատումը = 3,235.000

Տվյալ վարկի գծով բանկի եկամտի
գնահատումը մինչև հարկերը = 8,10.000/3,235.000 = 25,0%

Այսպիսով, եթե բանկի եկամուտը վարկի գծով (մինչև հարկերը վճարելը) ամբողջությամբ ծածկում է բանկի ծախսերը դրամական միջոցների գծով, ապա վերջնական որոշում ընդունելու համար վարկային կառավարիչներին մնում է միայն ավելացնել տվյալ վարկին բնորոշ ռիսկի տոկոսադրույքը և շահույթի մարժան:

8.5.1. Հաճախորդի եկամտաբերության վերլուծություն

«Արժեք - օգտակարություն» մեթոդի նման մոտեցումն ինքնին համարվում է ավելի լայն հասկացության մասնիկ, որը հայտնի է «Հաճախորդի եկամտաբերության վերլուծություն» անվամբ: Դա ենթադրում է, որ յուրաքանչյուր վարկային հայտի գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել տվյալ հաճախորդի հետ բոլոր փոխհարաբերությունները: Եկամտաբերության վերլուծության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում հաճախորդի հետ բոլոր փոխհարաբերություններից առաջացած եկամուտը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{Վարկի տրամադրման և այլ ծառայությունների մատուցման գծով ծախսեր} = \frac{\text{Հաճախորդի հետ բոլոր փոխհարաբերություններից շահույթի զուտ տոկոսադրույքը} - \text{Վարկից և այլ ծառայություններից ստացված եկամուտ}}{\text{Հաճախորդի դեպոզիտներից զատ վարկ տրամադրված զուտ միջոցները}}$$

Հաճախորդից ստացվող եկամուտները կարող են ընդգրկել վարկի տոկոսագումարները, կոմիսիոն վճարները և այլն: Հաճախորդի հետ կապված ծախսերը կարող են ընդգրկել բանկային աշխատակիցների աշխատավարձը, վարկային փաստաթղթերի ուսումնանսիրումը, դեպոզիտների գծով տոկոսագումարները, վարկային միջոցների ներգրավված տոկոսադրույքները:

Եթե հաճախորդի հետ բոլոր փոխհարաբերությունների գծով ստացված եկամտի զուտ դրույքը դրական է, վարկային հայտի բավարարման հավանականությունը բավականին մեծ է: Իսկ եթե այն բացասական է, ապա վարկային հայտը մերժվում է:

Օրինակ, ենթադրենք բանկը քննարկում է հաճախորդին 3 մլն դրամի չափով 9 ամիս ժամկետով վարկային գծի բացման հարցը: Ենթադրենք հաճախորդն ամբողջությամբ օգտագործելու է վարկային միջոցները և հաշվին պահելու է 20% դեպոզիտային մնացորդ: Հաճախորդի հետ բոլոր փոխհարաբերությունների գծով եկամուտներն ու ծախսերը կկազմեն.

Ենթադրվող եկամուտների աղբյուրները տվյալ հաճախորդի գծով.

Տոկոսային եկամուտ վարկից (12 % 9 ամսվա համար)	270,000
Կոմիսիոն վճար պարտավորության դիմաց (1%)	30,000
Հաճախորդի դեպոզիտների կառավարման կոմիսիոն վճար	6,000
Դրամական միջոցների փոխանցման դիմաց վճար	2,000
Հավատարմագրային ծառայությունների դիմաց վճար	13,000
Ընդամենը սպասվող տարեկան եկամուտ	321,000

Սպասվող ծախսեր տվյալ հաճախորդի սպասարկման գծով.

Դեպոզիտի գծով տոկոսագումարներ (10 %)	45,000
Ներգրավված վարկային միջոցների արժեք	160,000
Հաճախորդի հաշիվների հետ կապված գործառնական ծախսեր	25,000
Միջոցների փոխանցման արժեք	1,000
Վարկի գծով ինֆորմացիայի մշակման արժեք	3,000
Հաշվառման վարման գծով ծախսեր	1,000
Ընդամենը սպասվող տարեկան ծախսեր	235,000

Տվյալ հաճախորդի գծով սպասվող զուտ բանկային ռեզերվներ ընթացիկ տարում

Վարկի միջին գումար	3,000,000
Հանած հաճախորդի գծով դեպոզիտի միջին տարեկան մնացորդ	- 540,000
Հաճախորդին տրվող վարկային զուտ միջոցներ	2,460,000

$$\frac{\text{Եկամտի տարեկան զուտ դրույք հաճախորդի հետ բոլոր փոխհարաբերությունների գծով}}{\text{Տրամադրված վարկային միջոցների զուտ գումար}} = \frac{\text{Սպասվող եկամուտներ} - \text{Սպասվող ծախսեր}}{\text{Տրամադրված վարկային միջոցների զուտ գումար}}$$

$$= \frac{321,000 - 235,000}{2,460,000} = 0,35 \text{ կամ } 3.5\%$$

Այս դեպքում բանկը կտրամադրի վարկ, քանի որ բոլոր ծախսերը փոխհատուցվում են: Եթե հաճախորդի հետ բոլոր փոխհարաբերությունների գծով շահույթի զուտ դրույքը բացասական է, ապա դա մշանակում է, որ հաճախորդին մատուցվող ծառայությունների գծով սահմանված դրույքները պետք է վերանայվեն: Ինչքան բարձր է տվյալ վարկային հայտի հետ կապված ռիսկը, այնքան բարձր պետք է լինի բանկի համար շահույթի զուտ դրույքը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ մեթոդներով է որոշվում վարկի տոկոսադրույքը:
2. Ինչպե՞ս են բանկերը որոշում վարկի տոկոսադրույքը «արժեք գումարած» սկզբունքով:
3. Ի՞նչ է իրենից ներկայացնում տոկոսադրույքի որոշման Գնային առաջնության մոդելը:
4. Ի՞նչ են իրենցից ներկայացնում Պրայմ ռեյտինգ ցածր սահմանվող տոկոսադրույքները (ավելացումների մոդել):
5. Ի՞նչ է իրենից ներկայացնում տոկոսադրույքի որոշման Առավելագույն տոկոսադրույքի մոդելը:
6. Ի՞նչ է իրենից ներկայացնում տոկոսադրույքի որոշման «Արժեք – օգտակարություն» մոդելը:
7. Ինչպե՞ս է իրականացվում հաճախորդի եկամտաբերության վերլուծությունը:

Թեմա 9. Բանկային միջոցների աղբյուրների կառավարումը

Ավանդը այն հիմքն է, որի հաշվին բանկերը զարգանում և բարգավաճում են: Բանկի հաշվեկշռում ավանդները հանդես են գալիս հատուկ հոդվածով: Հասարակության կողմից բանկերի ճանաչման (գնահատման) հիմնական չափանիշն է հանդիսանում բանկի աշխատակիցների և ղեկավարության ունակությունը՝ կազմակերպություններին և սպառողներին շահագրգռելու բացել չեկային և խնայողական հաշիվներ: Ավանդներն ապահովում են, այսպես ասած, բանկերի վարկային միջոցները և այդպիսով իրենցից ներկայացնում են բանկի շահույթի մեծացման աղբյուրը: Սեփական ավանդները կառավարելիս յուրաքանչյուր բանկ պետք է որոշի երկու հանգուցային խնդիր.

1. բանկը որտեղից կարող է միջոցներ ստանալ հնարավոր նվազագույն ծախսերով
2. ղեկավարությունը ինչպես կարող է երաշխավորել ավանդները, որոնք բավարար են վարկերի ցանկալի ծավալներն ապահովելու և հասարակության կողմից պահանջվող ֆինանսական այլ ծառայություններ մատուցելու համար:

Այնքան էլ հեշտ չէ պատասխանել այս հարցերին, հատկապես ներկա խիստ մրցակցության և ֆինանսական շուկայի կարգավորման աճող գործընթացների պայմաններում: Բանկի կողմից հանրությանը վաճառվող հնարավոր ավանդների գումարն ու արժեքը մեծապես կախված են գնագոյացման սխեմաներից և մեծ թվով բանկերի ու ոչ բանկային հաստատությունների մրցունակությունից, որոնք առաջարկում են համանման ծառայություններ, ինչպիսիք են. դրամական շուկայի հիմնադրամներում բաժնային ավանդները, բրոքերային և ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվող դրամական հաշիվները, վարկային միությունների կողմից տրամադրվող և տոկոսներ բերող չեկային հաշիվները, խնայողություններն ու վարկերը: Ներկայումս բանկային գործունեության ոլորտը հեղեղել է նորամուծությունների ալիքը՝ գնագոյացման սխեմաների, սպասարկման մեթոդների, ավանդների նոր տեսակների տեսքով: Այն բանկերը, որոնք հետ են մնում ավանդների զների փոփոխությունից և իրենց մրցակիցների շուկայավարման ծրագրերից՝ կորցնում են և հաճախորդներին և շահույթը:

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել բանկային ավանդների տեսակները, ավանդների գնագոյացման սկզբունքները, մեթոդները և բանկերի կողմից ավանդային գործառնությունների իրականացման գործընթացը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման անցնելուց հետո ունկնդիրները կկարողանան՝

- ներկայացնել բանկային միջոցների աղբյուրների կառավարման հանգուցային խնդիրները
- ներկայացնել բանկերի կողմից տրամադրվող ավանդների տեսակները, մասնավորապես
 - ◆ բնորոշել տրանսակցիոն ավանդները
 - ◆ բնորոշել խնայողական կամ ժամկետային ավանդները
 - ներկայացնել տարաբնույթ ավանդների համար սահմանված ավանդները
 - ներկայացնել բանկային ավանդների գնագոյացման մեթոդները, մասնավորապես.
 - ◆ ավանդների զների ձևավորումը՝ «ծախքեր գումարած շահույթ» մեթոդով
 - ◆ ավանդների տոկոսադրույքների սահմանում ըստ սահմանային ծախքերի
 - ◆ ավանդների տոկոսադրույքների սահմանում՝ շուկա ներթափանցումն ապահովելու համար
 - ◆ գնագոյացում, որը նպատակաուղղված է առավել մեծ եկամուտ ունեցող հաճախորդների ներգրավմանը
 - ներկայացնել արտարժույթով ավանդային համակարգերը
 - ներկայացնել նոր ավանդների տեսակները:

9.1. Բանկերի կողմից տրամադրվող ավանդների տեսակները

Հաճախորդների միջոցների ներգրավման համար գործող տարատեսակ ավանդների քանակն այսօր գերազանցում է 30-ը, ընդ որում, դրանցից յուրաքանչյուրն ունի այնպիսի առանձնահատկություններ, որոնք առավելագույնս համապատասխանում են կազմակերպությունների և տնային տնտեսությունների պահանջներին՝ դրամական միջոցների խնայողությունը և ապրանքների ու ծառայությունների դիմաց կատարվող վճարումներն իրականացնելիս:

9.1.1. Տրանսակցիոն (վճարային) ավանդներ

Բանկի ավանդների վարման ծառայությունների հնագույն տեսակներից մեկն է հանդիսանում բանկի հաճախորդի անունից կատարվող վճարումները: Սպասարկելով տրանսակցիոն ավանդները կամ ցպահանջ ավանդները, բանկը պարտավոր է անմիջապես իրականացնել հաշվից ցանկացած միջոցների առհանում, որը կատարվել է անձամբ հաճախորդի կամ նրա հանձնարարությամբ՝ երրորդ անձի կողմից: Տրանսակցիոն ավանդները ներառում են սովորական առանց տոկոսի ցպահանջ ավանդներ, որոնք չեն բերում որևէ տոկոսային եկամուտ, սակայն հաճախորդի համար հեշտացնում են հաշվարկների իրականացումը, ապահովում են միջոցների պահպանումը և փաստում են (ֆիքսում են) չեկերով կատարված ցանկացած գործառնություն: Սակայն ցպահանջ ներդրումները բանկային միջոցների առավել անկայուն և պակաս կանխատեսելի աղբյուրների թվին են պատկանում, քանի որ դրանցից միջոցները կարող են հանվել առանց այլ մասին նախապես տեղեկացնելու: Առանց տոկոսի ցպահանջ ավանդների մեծ մասը բացվում են առևտրային կազմակերպությունների կողմից, բայց հաճախորդներից շատերն իրենց միջոցները փոխում են չեկային այլ տեսակի ավանդների, որոնք տոկոսային եկամուտ են բերում:

9.1.2. Խնայողական կամ ժամկետային ավանդներ

Խնայողական կամ ժամկետային հաշիվները կոչված են հաճախորդների միջոցները ներգրավելուն, որոնք ցանկանում են պահել իրենց դրամական միջոցները՝ հետագայում սպասելով հնարավոր ծախսերի կամ ֆինանսական միջոցների անհրաժեշտության առաջացման: Ընդհանուր առմամբ, ըստ այս ավանդների սահմանվում են առավել բարձր տոկոսադրույքներ, քան տրանսակցիոն հաշիվներով:

Որոշ բանկեր առաջարկում են [խնայողական ավանդներ](#)՝ հաշվից համակարգչային տպագրությամբ քաղվածքներով: Բացի դրանից, բազմաթիվ բանկեր առաջարկում են խնայողական գրքույկներով առավել ավանդական (տրադիցիոն) [ավանդներ](#), երբ հաճախորդը ստանում է գրքույկ, որտեղ նշվում է իր հաշվի մնացորդը, տոկոսային եկամուտը, ներդրված և հանված գումարները, ինչպես նաև պարունակում է հաճախորդի և բանկի պարտավորությունների ցանկը:

Արդեն շատ տարիներ ի վեր կարողունակ քաղաքացիներն ու կազմակերպություններն օգտվում են ժամկետային ավանդներից, որոնցով սահմանվում են հաստատագրված ժամկետներ (սովորաբար 30, 60, 90 և 180 օր) և հաստատագրված [տոկոսադրույքներ](#): Բոլորովին վերջերս սկսեցին առաջարկվել ժամկետային ավանդներ՝ պարբերաբար վերանայվող տոկոսադրույքներով (օրինակ, յուրաքանչյուր 90 օրը մեկ, դրանք կոչվում են "leg" կամ "roll" ժամանակահատված): Ժամկետային ավանդները պետք է ունենան մի քանի օրվա նվազագույն ժամկետ և դրանցից միջոցները կարելի է հանել միայն ժամկետը լրանալուց հետո: Ժամկետային ավանդները լինում են ամենատարբեր ձևերի. ավանդային հավաստագրերից (սերտիֆիկատներից), որոնք գտնվում են շրջանառության մեջ (որոնց կներկայացնենք հետագայում), մինչև Ծննդյան ակումբի ավանդները: Ավանդային հավաստագրերը թողարկվում են ինչպես *այլ անձանց փոխանցելու իրավունքով* (ավելի քան 100,000 դոլար), որոնք հիմնականում գնում են կորպորացիաներն ու կարողունակ քաղաքացիները, այնպես էլ *առանց փոխանցելու իրավունքի* (այսինքն, դրանք չեն կարող փոխանցվել որոշակի ժամանակահատվածի ընթացքում): Վերջինը, որպես կանոն, գնում են առանձին քաղաքացիներ:

Սկսած 70 - ական թվականների վերջից լայն տարածում գտան լողացող տոկոսադրույքով [խնայողական ավանդները](#), քանի որ բանկի հաճախորդների մեծ մասը ցանկանում էին սղաճից ապահովագրել իրենց՝ օգտագործելով խնայողական հաշիվները, որոնց հատուցման չափը զգալիորեն է կյանքի արժեքի փոփոխությունների նկատմամբ: *Դրամական շուկայի ավանդային հավաստագրերը* 1978 թվականին հավանության արժանացան դաշնային վերստուգող գերատեսչությունների կողմից, իսկ ըստ դրանց տոկոսադրույքները կապվում էին ԱՄՆ կառավարության արժեթղթերի շուկայական եկամուտներին: Ցավոք, նման ավանդների նկատմամբ հաճախ սահմանվում էին ավանդի բարձր նվազագույն գումար և ժամկետից շուտ հանելու դեպքում՝ մեծ տուգանքներ:

1981 թվականից «Հարկերի և տնտեսական վերականգման մասին» օրենքի ընդունումով Կոնգրեսը թույլ տվեց ընդունել ավանդային հաշվի ևս մեկ տեսակ՝ կենսաթոշակային խնայողական հաշիվները (ԿԽՀ): Բանվորներն ու ծառայողներն իրավունք ստացան ամեն տարի որոշակի չափով սահմանված՝ հարկերից ազատված գումար գումար հատկացնել (փոխանցել) բանկերի, ավանդային հաստատությունների, բրոքերային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և փոխադարձ հիմնադրամների կամ կենսաթոշակային ապահովման ինքնուրույն պլան ունեցող կազմակերպությունների կենսաթոշակային խնայողական հաշվին:

9.2. Տարաբնույթ ավանդների համար սահմանված տոկոսադրույքները

Ավանդների տարբեր տեսակները, սովորաբար, ունենում են տարբեր տոկոսադրույքներ: Ընդհանուր առմամբ, որքան երկար է ավանդի ժամկետը, այնքան ներդրողների համար տոկոսային մեծ եկամուտ պետք է ապահովվի ըստ այդ ավանդի՝ դրամի արժեքի պատճառով, հետագա ժամանակահատվածում եկամուտներն ու եկամուտների կորի առավել հաճախակի թռիչքները հաշվի առնելով:

Ավանդային հաշիվներ բացելու առաջարկություն կատարող բանկերի ռիսկի աստիճանը, որը նրանք վերցնում են իրենց վրա, նույնպես կարևոր դեր է խաղում ավանդների տոկոսադրույքների ձևավորման մեջ: Օրինակ, Նյու Յորքի, Լոնդոնի կամ Տոկիոյի բանկերը շնորհիվ իրենց մեծ չափերի և հուսալիության կարող են ավանդներ առաջարկել միջինը շատ ցածր տոկոսադրույքներով, այն դեպքում որ այլ բանկերի կողմից առաջարկվող ավանդների տոկոսադրույքը սովորաբար բարձր է այդ մակարդակից: Կարևոր գործոններն են հանդիսանում նաև բանկի նպատակի և շուկայագիտության ռազմավարությունը: Այն բանկերը, որոնք ակտիվորեն պայքարում են ներդրումների համար, սովորաբար առաջարկում են առավել բարձր տոկոսադրույքներ, որպեսզի իրենց կողմը գրավեն իրենց մրցակիցների հաճախորդներին:

9.3. Բանկի ավանդների կառուցվածքը

Բանկի ավանդների պորտֆելը ժամանակի ցանկացած պահին նշանակալիորեն կախված է ավանդների ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկից: Ըստ իր նշանակության երկրորդ հիմնական գործոն է հանդիսանում բանկի կողմից միջոցների ստացման եղանակը, ներառյալ ծառայությունների դիմաց վճարն ու տարբեր տեսակի ավանդների տոկոսադրույքները, համառությունը, որով առաջարկվում են ավանդների տարբեր տեսակները, ժամանակն ու ռեսուրսները, որոնք ծախսվում են ավանդային հաշիվներից օգտվող հաճախորդներին ներգրավելու և պահելու համար:

Եթե բանկերն ինքնուրույն որոշումներ կայացնեին ավանդների իրենց պորտֆելի կազմի մասին, նրանք հավանաբար կնախընտրեին ունենալ ցպահանջ ավանդների և ցածր եկամտաբերությամբ ժամկետային ու խնայողական ավանդների առավել մեծ բաժին: Այդ հաշիվները վերաբերում են բանկի միջոցների բոլոր աղբյուրներից ամենապակաս թանկարժեքին և սովորաբար կազմում են հիմնական ավանդների՝ ներգրավվող միջոցների կայուն բազայի նշանակալի մասը, որը փաստորեն զգայուն չէ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների նկատմամբ (այսինքն, ունի տոկոսադրույքների ցածր առաձգականություն) և, որպես կանոն, մնում է բանկում:

Ավանդների մեկ այլ կատեգորիան, որը ԱՄՆ բանկերի միասնական ավանդների նշանակալի մասն է կազմում, օտարերկրյա կառավարությունների, գործարարների և քաղաքացիների ավանդներն են, որոնց մեծ մասը ներդրվել է օֆշորային ընկերությունների միջոցով:

Ավանդների վերջին կարևոր կատեգորիան այլ բանկերի ավանդներն են: Դրանց թվին են դասվում թղթակցային հաշիվները՝ ներկայացնելով այն միջոցները, որոնք բանկերը պահում են մեկը մյուսի հաշիվներում՝ թղթակցային ծառայությունների դիմաց վճարելու համար: Օրինակ, մայրաքաղաքի խոշոր բանկերն ապահովում են տվյալների մշակումը և համակարգիչներով հաշվառման իրականացումը, հարկերի և ներդրումների իրականացման վերաբերյալ առաջարկությունները, մասնակցությունը վարկերում, քլիրինգային գործարքները, չեկերի ինկասացիան՝ առանձին ավանդային և քաղաքային ոչ մեծ հաստատությունների համար: Բանկը, որն իր մոտ ունի այլ բանկերի ավանդներ, դրանք իր հաշվեկշռում հաշվում է որպես պարտքային պարտավորություն՝ ըստ «լորո» հաշիվների (տվյալ բանկում թղթակցային հաշիվներում եղած մնացորդը): Բանկը, որն ունի նման ավանդներ այլ բանկերում, դրանք հաշվում է որպես ակտիվ՝ ըստ «նոստրո» հաշիվների (թղթակից բանկերում):

9.4. Բանկային ավանդների գնագոյացման մեթոդները

Ավանդների պահպանման ծառայությունների գների վերաբերյալ հարցերը վճռելիս բանկերի ղեկավարությունը բախվում է հին դիլեմայի (երկխնդրի) հետ. հաճախորդների համար բանկերը պետք է ապահովեն բավականաչափ բարձր տոկոսային եկամուտներ՝ նրանց ավանդները ներգրավելու և պահելու համար, բայց նաև պետք է խուսափեն չափազանց բարձր տոկոսադրույքներից, որոնք կարող են կուլ տալ ցանկացած շահույթ, որը ստացվում է ավանդների միջոցների օգտագործումից: Ավանդների համար վարվող խիստ մրցակցային պայքարը դժվարացնում է այդ հիմնախնդրի լուծումը, քանի որ մրցակցությունը հանգեցնում է ավանդների տոկոսային ծախսերի մեծացմանը և միաժամանակ իջեցնում է ներգրավված միջոցների շրջանառությունից սպասվող շահույթը:

Իրականում ֆինանսական շուկայում առանձին բանկերն են երկարաժամկետ հեռանկարում ավանդների գների նկատմամբ ոչ մեծ հսկողություն իրականացնում: Վերջին հաշվով շուկան է սահմանում բոլոր գների մակարդակը և ոչ թե առանձին բանկը:

9.4.1. Ավանդների գների ձևավորումը՝ «ծախսեր գումարած շահույթ» մեթոդով

Հաճախորդների կողմից ավանդների սպասարկման բոլոր ծախսերը վճարելու գաղափարն ընդունվում է ոչ բոլոր բանկերի կողմից: Տոկոսային եկամուտ ապահովող չեկային ավանդների հայտնվելը բանկերին հնարավորություն տվեց վերանայել ավանդների ծառայությունների համար հաստատված գները: Ցավոք, բանկերից շատերը, որոնք ավելի վաղ էին մտել այդ նոր շուկան, հաճախորդներին գրավում էին ծախսերից ցածր գներով, այդ պատճառով հաճախորդների ծախսերը ցածր էին ընթացիկ և վերադիր ծախսերի փաստացի մակարդակից: Այս ամենի հետևանքը՝ հաճախորդների համար զգալիորեն բարձրացած շահույթի նորման էր, որը ստացավ գաղտնի տոկոսադրույք անվանումը: Այն ավանդների համար առաջարկվող ծառայությունների փաստացի ծախսերի և այդ ծառայությունների դիմաց հաճախորդի փաստացի ծախսերի միջև եղած տարբերությունն է:

Վերակարգավորումը հանգեցրեց unbundled service (ոչ համախումբ ծառայություններ) մեթոդով գնագոյացման համակարգի առավել հաճախակի օգտագործմանը, քանի որ աճող մրցակցությունը՝ միայն ապահովագրական մուտքերի շնորհիվ, բանկերի համար մեծացրեց ավանդների միջին արժեքը: Սա նշանակում է օրինակ, որ ըստ ավանդների [տոկոսադրույքները](#), որպես կանոն, սահմանվում են բանկային այլ ծառայությունների գներից և վարկերի տոկոսադրույքներից անկախ: Եվ ավանդի վարման յուրաքանչյուր ծառայություն գնահատվում է բավական բարձր, որպեսզի ծածկի այդ ծառայության մատուցման հետ կապված ծախսերն ամբողջությամբ կամ նրա մի մասը: Այսպիսով, ըստ «ծախսեր գումարած շահույթ» մեթոդով գնագոյացման, ծառայության գինը կարող է բաղկացուցիչների բաժանվել հետևյալ սխեմայով.

Հաճախորդի համար ըստ ավանդի յուրաքանչյուր տեսակի ծառայության տեսակարար գինը	=	Ավանդների ծառայության մեկ միավորի գործառնական ծախսեր	+	Ավանդներով բոլոր տեսակի գործարքներից սպասվող վերադիր ծախսեր	+	Ավանդների ծառայությունների յուրաքանչյուր տեսակի համար պլանավորվող շահույթ
--	---	--	---	---	---	---

Բանկի ծախսերի և ավանդների գնի միջև եղած կապը, ինչպես ցույց է տալիս վերը նշված բանաձևը, բանկերին թույլ է տալիս առավել ճիշտ հարաբերել գներն ու ծախսերը և սահմանափակել նախկինում անվճար մատուցվող ծառայությունների քանակը:

Ավանդների վարման ծառայությունների միջին արժեքի գնահատականը

«Ծախքեր գումարած շահույթ» մեթոդով գնագոյացումը պահանջում է ըստ ավանդների կատարվող ծառայությունների յուրաքանչյուր տեսակի արժեքի ճիշտ (ստույգ) հաշվարկ: Ինչպե՞ս կարելի է դա կատարել: Լայնորեն կիրառվող մեթոդներից մեկը կայանում է ավանդի գնի հաշվարկումը (կալկուլյացիան) բանկի ծախքերի գնահատման հիման վրա: Բանկին անհրաժեշտ է.

- Հաշվարկել բանկի միջոցների յուրաքանչյուր աղբյուրի համար վերադիր ծախսերի տոկոսադրույքը (ներառյալ կենտրոնական բանկի կողմից պահանջվող պահուստները, ինկասագիայի ընթացքում ըստ ավանդների և չեկերի ապահովագրական վճարները):
- Վերադիր ծախսերի յուրաքանչյուր տոկոսադրույքը բազմապատկել յուրաքանչյուր աղբյուրից ստացվող բանկի միջոցների հարաբերական մեծությամբ:
- Գումարել ստացված բոլոր մեծությունները՝ բանկի միջոցների միջին կշռված արժեքը որոշելու համար: Այս մեթոդը, այսպես կոչված միջոցների ընդհանուր ֆոնդի մեթոդը, հիմնած է այն ենթադրության վրա, որ գոյություն չունի՝ որպես այդպիսին, ավանդի առանձին տեսակի արժեք, այլ կա բանկի ֆինանսական բոլոր աղբյուրների միջին կշռված արժեք:

9.4.2. Ավանդների տոկոսադրույքների սահմանումն ըստ սահմանային ծախքերի

Ֆինանսական փորձագետներից շատերը գալիս են մեկ ընդհանուր եզրակացության, որ ավանդների գինը որոշելու համար, երբ դա հնարավոր է, պետք է կիրառել ոչ թե միջին կշռված, այլ սահմանային ծախքերը, այսինքն այն լրացուցիչ ծախսերը, որոնք կապված են նոր միջոցներ ներգրավելու հետ: Պատճառն այն է, որ տոկոսադրույքների հաճախակի փոփոխությունները միջին ծախքերի մեծությունը դարձնում են անհուսալի և ոչ իրատեսական բազա ավանդների գները սահմանելու համար: Օրինակ, եթե տոկոսադրույքներն իջնում են, ապա նոր դրամական միջոցներ ստանալու հետ կապված լրացուցիչ (սահմանային) ծախքերը կարող են բանկի կողմից ներգրավված (հավաքած) բոլոր միջոցների միջին ծախքերից ցածր լինել: Ոչ շահութաբեր թվացող որոշ վարկեր և ներդրումներ, երբ համեմատվում են միջին ծախքերի հետ, լիովին շահութաբեր կերևան՝ տոկոսադրույքների վճարման առավել ցածր սահմանային ծախքերի տեսանկյունից գնահատելու դեպքում, որն անհրաժեշտ է այսօր իրականացնել ներդրումների և նոր վարկեր տրամադրելու համար: Եվ հակառակը, եթե տոկոսադրույքներն աճում են, ապա նոր դրամական միջոցների սահմանային արժեքն այսօր կարող է զգալիորեն գերազանցել միջոցների միջին արժեքը:

Տնտեսագետ Ջեյմս Մաքսալթին առաջարկեց սահմանային ծախքերի կամ փողի նոր արժեքի գաղափարի կիրառման եղանակը՝ բանկի կողմից ըստ ավանդային նոր հաշիվների տոկոսադրույքները որոշելիս:

Մեզ անհրաժեշտ է իմանալ հետևյալ մեծությունների մասին.

Սահմանային ծախքեր = Համախառն ծախսերի փոփոխություն = Նոր տոկոսադրույք x նոր տոկոսադրույքով ստացված բոլոր միջոցները - Հին տոկոսադրույք x հին տոկոսադրույքով ստացված բոլոր միջոցները

և

$$\text{Սահմանային ծախքերի նորմա} = \frac{\text{Համախառն ծախսերի փոփոխություն}}{\text{Լրացուցիչ ստացված միջոցներ}}$$

9.4.3. Ավանդների տոկոսադրույքների սահմանումը՝ շուկա ներթափանցումն ապահովելու համար

Գնագոյացման մեթոդներից մեկը, որը թույլ է տալիս ուշադրություն չդարձնել բանկի շահույթի և ծախքերի վրա, ծայրահեղ դեպքում մոտ ապագայում, հանդիսանում է ավանդների տոկոսադրույքների սահմանումը՝ շուկա ներթափանցումն (մուտք գործելը) ապահովելու համար: Իմաստն այն է, որ առաջարկվեն բարձր տոկոսադրույքներ (որպես կանոն շուկայական մակարդակից բարձր) կամ սահմանվեն կոմիսիոն գումարների ցածր սակագներ՝ հնարավոր մեծ թվով նոր հաճախորդներ ներգրավելու համար: Բանկի ղեկավարությունն այս դեպքում հույս է ունենում, որ ներդրումների առավել մեծ ծավալը և հետևաբար բանկի վարկերի մեծ ծավալը կփոխհատուցեն շահույթի նվազեցումը: Շուկա ներթափանցելու եղանակով գնագոյացումն այն ռազմավարությունն է, որը գլխավորապես առկա է շուկաների արագ աճման ժամանակահատվածում:

Ներդրումների առանձնահատկությունը, որպես գերհաստատուն գործոն, հանդիսանում է՝ ծառայությունների դիմաց վճարների նվազեցման կամ նոր ներդրումներ ներգրավելու նպատակով իրականացվող տոկոսադրույքների բարձրացման նկատմամբ հասարակության արձագանքի գրեթե լրիվ բացակայությունը, քանի որ հաճախորդները, որպես կանոն, չեն շտապում ընդունել ազդեցության տակ փոխել իրենց բանկը, քանի որ ծախքերն ու ռիսկը, նման փոփոխություններով պայմանավորված (կապված), այնքան էլ աննշան չեն:

Ավանդներով պայմանավորված կոմիսիոն վճարների սակագների կիրառումը տնտեսագետներից շատերն անվանում են՝ պայմաններից կախված գնագոյացում, քանի որ բանկերը ծառայությունների դիմաց սահմանում են գների սանդղակ, որի համաձայն հաճախորդներից զանձվում է ցածր վճար կամ ընդհանրապես չի զանձվում, եթե նրանց հաշվում եղած մնացորդները գերազանցում են ինչ որ մի նվազագույն մակարդակ, սակայն հաճախորդները ծառայությունների դիմաց վճարում են բարձր դրույքով, եթե միջին մնացորդն այդ նվազագույն մակարդակից ցածր է ընկնում: Այսպիսով, ծառայությունների դիմաց հաճախորդը վճարում է կախված այն բանից, թե ինչպես է նա օգտագործում իր ներդրումը:


Ավանդների վերաբերյալ ծառայությունների սակագներում եղած տարբերությունը կախված է ստորև քվարկվող մեկ կամ մի քանի գործոններից.

1. Հաշվով (հաշվի հետ) կատարվող գործարքների քանակը (այսինքն, դուրս գրված չեկերի, կատարված ներդրումների, հեռատիպային փոխանցումների, վճարումների ընդհատումների կամ միջոցների անբավարարության մասին հաղորդագրությունների քանակը):
2. Որոշակի ժամանակահատվածում (սովորաբար մեկ ամսվա ընթացքում) հաշվի վրա եղած միջին մնացորդը:
3. Ավանդի ժամկետը (օրերով, շաբաթներով կամ ամիսներով արտահայտված):

9.4.5. Գնագոյացում, որը նպատակաուղղված է առավել մեծ եկամուտ ունեցող հաճախորդների ներգրավմանը

Բազմաթիվ բանկեր, հատկապես խոշոր քաղաքներում, լայնորեն կիրառում են առավել մեծ եկամուտ ունեցող հաճախորդների ներգրավմանը նպատակաուղղված գնագոյացման մեթոդը: Նրանք գործնական աշխատանքով զբաղվող պրոֆեսիոնալների (այսինքն բժիշկների և իրավաբանների), ձեռներեցների, մենեջերների և բարձր եկամուտ ունեցող այլ քաղաքացիների համար լավ պատրաստված գովազդային ծրագիր են օգտագործում՝ ծանոթացնելու համար ծառայությունների և դրանց գների հետ, որոնք վերջին հաշվով բանկերին մեծ շահույթ են բերում: Ներկայումս բանկերի որոշ հաճախորդներ, հատկապես բարձր եկամուտ ունեցող, շատ արագ են արձագանքում բանկի ծառայությունների գների դիֆերենցիացիային: Այդ հաճախորդները գիտեն, որ գոյություն ունի բանկային համակարգի վերակարգավորում և սպասում են ժամանակի ընթացքում ծառայությունների արժեքի նվազեցում:

Վերջին տարիների ընթացքում բանկերը հասկացան, որ ավանդների գները կարելի է օգտագործել բանկի յուրաքանչյուր ծառայության համար հաճախորդների պորտֆել ձևավորելու նպատակով: Ավանդների գների փոփոխությունը ոչ միայն մեծացնում է վարկերի և ավանդների տոկոսադրույքների միջև եղած տարբերությունը, այլ նաև ազդում է հաճախորդների կազմի և ավանդների կառուցվածքի վրա, որոնք էլ իրենց հերթին որոշում են բանկի շահույթն ու զարգացման ռազմավարությունը.



Բացի այդ, որքան փոքր է ավանդների և վարկերի տոկոսադրույքների միջև եղած տարբերությունը, այնքան բանկի շահույթը զգայուն է ավանդների գների փոփոխությունների նկատմամբ:

Ավանդների գները շատ ավելի լավ կլինի օգտագործել բանկի շահութաբերությունը պահպանելու և մեծացնելու, քան թե պարզապես հաճախորդներին գրավելու և մրցակիցների հետ պայքարելու համար:

1987թ. ֆինանսական շուկայում ներդրողների ուշադրությունը գրավեց աշխարհի որոշ առաջատար կենտրոնական վարկային բանկերի հաղորդագրությունը՝ ավանդային հավաստագրերի մասին, որոնցով պայմանավորված եկամուտները կախված են ապրանքային և ֆոնդային շուկաներում գների փոփոխությունից (դինամիկայից): Ավանդների այս նոր տեսակները, որոնք հայտնի են որպես ինդեքսային ավանդային հավաստագրեր, հաճախորդներին շատ բարձր եկամուտ ստանալու հնարավորություն են տալիս, եթե ապրանքների և բաժնետոմսերի գները աճում են, սակայն միևնույն ժամանակ գոյություն ունի տոկոսային ողջ եկամուտը կամ նրա մեծ մասը կորցնելու վտանգը, եթե գներն իջնում են: Ավանդային այս նոր հաշիվների մասին առաջինը հայտարարեց «Չեյզ Մանիթթեն բանկը», որը 1987թ. մարտին բացեց ինդեքսային ավանդների իր շուկան: Բանկը տեղեկացրեց, որ իր հաճախորդներին նա առաջարկում է ֆոնդային շուկայում «գործի մի մասը», ջանալով ներդրողների նոր ավանդներից ստացվող եկամուտը կապել «Աթենդարդ էնդ Փուրսի» կողմից՝ 500 խոշոր ընկերությունների համար հաշվարկված ֆոնդային շուկայի ամփոփ ինդեքսի հետ:

1986թ. նավթի համաշխարհային գների բարձրացման և 1986թ. ֆոնդային շուկաների համաշխարհային ճգնաժամի արդյունքում առաջացած խառնաշփոթը, որն ամբողջ աշխարհում համակել էր բազմաթիվ բանկերի, դրանցից մի քանիսին ստիպեց ակտիվորեն փնտրել ավանդների ցանկացած հնարավոր գաղտնի աղբյուրներ: Արժեթղթերով գործարքներ իրականացնող բրոքերներն առաջադրեցին իրենց՝ բրոքերային ավանդների ստեղծման գաղափարը: Իրենց հաճախորդների միջոցները համախմբելու և այնուհետև առավել բարձր տոկոսադրույքներ առաջարկող բանկերում զետեղելու բրոքերների մտահղացումը նորություն չէր: Նման պրակտիկա գոյություն ուներ նաև նախկինում: Ժամանակակից պրակտիկայի հիմնական տարբերությունն այն էր,

որ բազմաթիվ բանկեր, որոնք գտնվում էին ծանր ֆինանսական վիճակում, բրոքերային ավանդների պատճառով հայտնվում են հուսահատ իրավիճակում, քանի որ կորցնում են իրենց մշտական հաճախորդներին:

Բրոքերային ավանդները հանգեցնում են ավանդների համար մրցակցության աճին և ստեղծում են բանկի համար իրացվելի միջոցների ևս մեկ աղբյուր:

9.5. Արտարժույթով ավանդային համակարգեր

80 - ական բավականների վերջին և 90 - ականների սկզբին ԱՄՆ առաջատար բանկերը, ներառյալ նյույորքյան «Սիթիբանկը» և Սան Ֆրանցիսկոյի «Բանկ օֆ Ամերիկան», իրենց ամենառիսկային հաճախորդների համար սկսեցին թողարկել արտարժույթով ավանդային հավաստագրեր: Սրա համար պատճառ էր հանդիսացել ԱՄՆ դրամական շուկայում տոկոսադրույթների արագ անկումը, որը կազմել էր 3 - 6%, այն դեպքում, որ բազմաթիվ օտարերկրյա արժեթղթերը երկու անգամ ավելի բարձր տոկոսային եկամուտ էին ապահովում:

9.6. Նոր ավանդների այլ տեսակներ

Բրոքերային ավանդների և ինդեքսային ավանդային հավաստագրերի կիրառման հնարավոր հետևանքներից մեկն այն է, որ այսօր նրանք ավանդների ոլորտում՝ նորությունների և բանկային բնագավառում՝ ստեղծագործելու լայն հնարավորություն են բացել: Օրինակ, ի հայտ եկավ ավանդային հավաստագիրը, որը չի նախատեսում հաճախորդներից ծառայությունների դիմաց կոմիսիոն վճարների գանձում: Նույնպես վերջին ժամանակներում են ի հայտ եկել.

1. Կարգավորվող տոկոսադրույթով ավանդային հավաստագրերը, որոնք ունեն մեծ ժամկետ, բայց որոնց համար, շուկայի իրավիճակի փոփոխությունից կախված, պարբերաբար կարող են վերանայվել տոկոսադրույթները:
 2. Տոկոսային վճարների հետաձգմամբ ավանդային հավաստագրերը, որոնց նպատակը՝ կուտակված տոկոսային վճարները հետաձգելու օգնությամբ, հաճախորդի հարկերը նվազագույնի հասցնելն է:
 3. Պարբերաբար կատարվող մուծումներով ավանդային հավաստագրեր, երբ ավանդային հավաստագրի սեփականատերը պարտավոր չէ գումարը ամբողջությամբ մուծել, այսինքն, ցանկալի գումարը կուտակելու համար նա կարող է մուծումները պարբերաբար կատարել:
 4. Աճող տոկոսներով ավանդային հավաստագրերը, ըստ որոնց տոկոսային եկամուտն աճում է ավանդային հավաստագրի գոյության ողջ ժամանակահատվածում (օրինակ, յուրաքանչյուր վեց ամսվա ընթացքում) և ըստ որոնց թուլանում են միջոցները հանել որոշակի ամսաթվերի:
- Ի վերջո, ֆինանսական շուկայում հայտնվել են համատեղ ավանդներ, որոնք ինչ որ ընդհանուր բանի շուրջ միավորված ներդրողների ոչ մեծ խմբի համար են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

